

1329

59-Sn2m.

1899

F-20-03

Հայոց պատմութեան առաջնահատիք  
Քաղաքացիութեան գործութեան առաջնահատիք

83-2

9-66

# Ե Գ Մ Ա Ն Տ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՀԻՆգ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

Վ. Գ. ԳԵՂՕԹԵԿԻ

— 22 —

ԹԱՐԳՄԱՆԱՊԻԹԻԻՆ ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԲՆԱԳԻՒՑ  
ՀԱՍՑԵԱԿ ՍՍԺԻՆԵԱՆԻ

Նթէ իմ կեանքը քեզ համար մի հայելի էր,  
որի մէջ զու հանութեամբ քեզ զիտուս էիր,  
ապա թող լինի այդ և իմ մահը... ևս մեռ-  
նում եմ ազատութեան համար, որի համար  
ես ապրում էի և պատերազմում և որին հի-  
մա զուտմ եմ ինձ.... Զեր ամենասիրելին  
ազատելու համար ընկի քուս խորի ամբ ինչ-  
պէս ձեզ օրինակ եմ տափու:

Լուսապ. Գուծող. V, Գերշեն ուսուլուն.

Խ Ե Ֆ Լ Ի Ս

Տպարան Տ. Մ. Ռոտիննացի  
Տպոգր. Տ. Մ. Ռոտիննացի, ուղ. պ. լ. № 41.  
1899

83-2

9-66

WY

- 248

# Է Գ Մ Ա Ն Տ

ԱՐԵՐՈԳՈՒԹԻՒՆ ՀԻՆգ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

Ψ. Φ. ΘΕΟΦΕΛΠ

1001  
430

# ԹԵՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ ԳԵՐՄԱՆԵՐԻՆ ՌԵՎՈՐԻ ՀՄԱՅԵԿԱԿ ՍԱԺԻՆԵԱՆԻ

(Արտաստպւած «ՄՈՒՐՃ» ա-լսագրից  
ուղղած եւ փոխիսմած)

Նթէ իմ կեանքը քեզ համար մի հայելի էր,  
որի մէջ զու հաճութեամբ քեզ զիսում էլլիր  
ապա թող լինի այդ և փմ մակը... Նու մնա-  
նում եմ ազատութեան համար, որի համար  
ևս ապրում էի ի պատերազմում, և որին հի-  
մա զո՞նում եմ ինձ... Զեր ամենասիրի լի-  
ազատելու համար լինելու ուրախութեամբ ի՞նչ  
այս ձեռ օրինակ եմ տալիս:

1. 450000 400000. V, 450000 400000

ԹԻՖԼԻՍ  
Տպարան. Տ. Մ. Ռուսինեան

Типогр. Т. М. Ротиніанца, на Гол. пр., д. № 41.

1899

Յ Ա Ա Պ Գ

Վ Ֆ Ա Ա Վ Բ

Дозволено цензурою. Тифлисъ, 10-го Августа, 1899 г.

## ԳՈՐծՈՂ ԱՆՁԵՐԸ

- ✓ ՄԱՐԳԱՐԻՏ Պարմացի.—Կարլոս Վ.-ի աղջկեր, Նիդէրլանդիակի կառավարչուհին:
- ✓ ԿՈՒՐՍ ԷԳՄՈՆՏ.—Դատորի իշխանը:
- ✓ ՎԻԼԵԼՄ Օրանացի:
- ✓ ԴՈՒՔՍ ԱԼԲԱ:
- ✓ ՖԵՐԴԻՆԱՆԴ—Նրա բնական որդին:
- ✓ ՄԱՐԻԱՀԵԼ.—Իշխանունու ծառակութեան մէջ:
- ✓ ՌԻԽԱՐԴ.—Էգմոնտի անձնական գրադիրը:
- ✓ ՍԻԼԻԱ:
- ✓ ԳՈՒՅՅ Ալբակի ծառակութեան մէջ:
- ✓ ԿԼԱՐԱ.—Էգմոնտի սիրուհին:
- ✓ ՆՈՐԱ ՄԱՅՐԸ:
- ✓ ԶՈՒՏՏ.—մանրավաճառ:
- ✓ ԵԵՍՏԵՐ.—դերձակ
- ✓ ՀԻՒՆԵ
- ✓ ՍԱԳՈՒՆԱԳՈՐԾ
- ✓ ԲՐԱԿԵՆԲՈՒՐԳ.—քաղաքացու տղաւ:
- ✓ ԲՈՒԻԻԿ.—Էգմոնտի զինուրը:
- ✓ ՌՈՒԻՉՈՒՄ.—խուլ անկեալ:
- ✓ ՖԱՆԶԵՆ.—գրագիր:
- ✓ ԺՈՂՈՎՐԴԻԿԱՐԳ.—պալատականներ, պահնողներ, և ալիքներ:
- ✓ Տեսարանը Բրիւսէլում:

# ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

## ՏԵՍԱԲԱՆ Ա.

### Բալիստրաղեղնաձկովիւն

Զինւորներ և քաղաքացիներ բալիստր աղեղներով. Յետուէրն առաջ է դալիս և լարում իւր բալիստրադեղը:

ԶՕԷՄԸ. Դէ ձգիր ու պրծիր: Բայց և այնպէս գլուռը չես տանիլ: Երեք ու շրջանակ. կեանքումդ չես լինիլ այդպէս նետած: Ուրեմն ես եմ այս տարի վարպետը:

ՑԵՑՑԵՐ. Վարպետ և միաժամ թագաւոր: Ո՞վ է խլում այդ քեզնից. բայց դորա փոխարէն պէտք է խընճուքի համար կրկնակի վճարես: Դու պէտք է վճարես քո ճարպիկովթեան համար, ինչպէս պահանջում է արդարութիւնը:

ՅՈՒՀԻԿ. Ցետաէր, ես հարւածը գնում եմ քեզնից. վաստակդ կը բաժանեմ, պարոններին կը հիւրասիրեմ. ես շատ վազուց եմ այսեղ և շատ պարտական եմ քաղաքաբութիւններիդ համար: Եթէ ես վրիպեմ, այնպէս ընդունենք, թէ դուք էք նետել:

ԶՕԷՄԸ. Ե՞ս պէտք է խօսեմ այդ մասին, որովհետեւ այդպիսով տարւողը իսկապէս ես եմ: Բայց և այնպէս, բուիկ, թող այդպէս լինի:

ՅՈՒՀԻԿ. (Նետում է). Դէ, խեղկատակներ, գլուխ ուէք: Մէկ, երկու, երեք, չորս:

ԶՕԷՄԸ. Զորս զրջանակ. լաւ է: ԲՈՂՈՐԾՔԸՆ. Կեցցէ տէր թագաւորը. կեցցէ և կրկին կեցցէ:

ՅՈՒՀԻԿ. Ննորհակալ եմ, պարոններ, վարպետի համար ալդ շատ շնտ է: Ննորհակալ եմ ինձ ցոյց տւած պատվի համար:

ՑԵՑՑԵՐ. Դորս համար պէտք է ինքներդ ձեզնից շնորհակալ լինիք:

ՈՒՀԻՒԶՈՒՄ. Բան եմ ասում:

ԶՕԷՄԸ. Ինչպէս է, ծերուկի:

ՈՒՀԻՒԶՈՒՄ. Ե՞ս տաեմ: Նա նետում է, ինչպէս իւր տէրը. Նա նետում է էզմոնտի նման:

ՅՈՒՀԻԿ. Նորա մօտ ես մի թշւառ արարած եմ: Իսկ հրազենով նա ալնպէս է դիպցնում, ինչպէս աշխարհումս ոչ մի մարդ: Զը կարծէք, թէ այնպէս է նա, երբ բախտը բանում է, կամ լաւ է տրամադրւած: Ո՞չ. Հէնց երբ նշան է գնում, միշտ դիպցնում է: Ես նորանից եմ սովորել: Եւ ի՞նչ մարդ պէտք է լինէր մէկը, որը նորան ծառայէր և ոչինչ չըսովորէր: Զըմուաննք, պարոններ—թագաւորը կերակրում է իւր հապատակներին: Դէ ուրեմն թագաւորի հաշվին գինի տւէք:

ՑԵՑՑԵՐ. Մեղանում սովորութիւն է, որ իւրաքանչիւրը...

ՅՈՒՀԻԿ. Ես օտարական եմ և թագաւոր. և չեմ ճանաչում ոչ ձեր սովորութիւնները, ոչ ձեր օրէնքները:

ՑԵՑՑԵՐ. Դու ուրեմն խսպանացուց էլ վատ ես: Նա գոնէ մինչև օրս պարտք է համարել չը խախտել մեր օրէնքներն ու սովորութիւնները:

ՅՈՒՀԻԿ. Ե՞նչ:

ԶՕԷՄԸ. (Բարձրաձայն): Նա կամենում է մեզ հիւրասիրել: Նա չէ ուզում, որ մենք համափսոն լինինք, և թագաւորը միայն կրկնակին է վճարում:

ՌՈՂԻԻԶՈՒՄ. Թողէք. սակայն առանց կանխա-  
դատութեան: Ալդ էլ նորա տիրոջ սովորութիւնն է—  
առատաձեռն լինել և ամեն ազատութիւն տալ, որքան  
հնարաւոր է:

ԱՄԷԿՆՔԸ. (Գինի և բերում): Նորին Մեծութեան  
կենացը. կեցցէ:

ՅԵՑՏՀԸ. (Բուրկին): Ի հարկէ Զերդ Մեծութեան:  
ԲՈՂԻԻԿ. Սրտանց շնորհակալ եմ, եթէ արդարեւ  
ալպակս է:

ԶՈՒՄ. Հարկաւ: Որովհետեւ մի նիդէրլանդցի ալն-  
պէս հեշտ չէ կարող սրտանց խմել մեր իսպանական  
մեծութեան կենացը:

ՌՈՂԻԻԶՈՒՄ. Ո՞ւմ կենացը:  
ԶՈՒՄ. (Բարձր). Փիլիպպոս Երկրորդի, Սպանիայի  
թագաւորի:

ՌՈՂԻԻԶՈՒՄ. Մեր ամենատօրմած թագաւորի ու  
տիրոջ: Աստւած նրան երկար կեանք որարգեւէ:

ԶՈՒՄ. Նորա հայր Կարլոս V-ին աւելի չէ՞ք սիրում:

ՌՈՂԻԻԶՈՒՄ. Աստւած նորա հոգին լուսաւորէ:

Ա՛յ. նա էր թագաւորը: Նորա ձեռքը ողջ աշխարհի  
վրայ էր. և նա ամենի համար ամեն ինչ էր: Եթէ նա  
ձեզ պատահէր, կը բարեէր ալնպէս, ինչպէս մէկ հա-

րեան միւսին. Եթէ դուք մի փոքր վախենալիք, գիտէր  
այնպէս գեղեցիկ ձեռով... Այն, ինձ հասկանում էք:

Նա թէ, ոսով էր դուրս գնում, թէ ձիով.—և միշտ  
սակաւաթիւ մարդկանցով: Մենք հօ բոլորեքեանս լաց

եղանք, երբ նա հրաժարեց կուավարութիւնից յօդուտ  
իւր որդու: Ասում եմ ձեզ, հասկանում էք: Սա արդէն  
ուրիշ տեսակ է, սա աւելի վսեմտշուք է:

ՅԵՑՏՀԸ. Ալտեղ եղած ժամանակ նա միշտ շքեղ

և թագաւորական արդուզարդով էր լինում: Ասում են,

նա քիչ է խօսում:

ԶՈՒՄ. Նա մեր—նիդէրլանդցիներիս սրտի թա-  
գաւորը չէ: Մեր իշխանները պէտք է ուրախ ու ազատ  
լինին, ինչպէս մենք: Ապրին և ապրեցնեն: Մենք չենք  
կամենում արհամարհւիլ և ճնշվիլ, որքան էլ բարի  
խենդուլիկներ լինինք:

ՅԵՑՏՀԸ. Կարծում եմ, որ թագաւորը շատ հեշտ  
կարող էր մի մարդասէր տէր լինել, եթէ միայն աւելի  
լաւ խորհրդատուներ ունենար:

ԶՈՒՄ. Ոչ, ոչ. Նա սէր չի տածում դէպի մեզ—  
նիդէրլանդցիներս. Նորա սիրու չէ հակւած դէպի ժո-  
ղովուրդը. Նա մեզ չէ սիրում. մենք ինչպէս կարողա-  
նանք նորան սիրել: Ինչո՞ւ ողջ երկիրը կոմս Եգմոնտին  
այնպէս քաղցր աչքով է նախում. ինչքն է, որ մենք  
բոլորեքեանս պատրաստ ենք նորան ձեռներիս վրայ  
ման ածելու—որովհետեւ նորա գէմքից պարզ երևում է,  
որ նա մեր լաւն է ուզում, որովհետեւ նորա աչքերում  
կարդացւում է ուրախութիւնը, ազատ կեանքը, բարի  
գիտաւորութիւնը. որովհետեւ նա ոչինչ չունի, որից  
ազքատին բաժին չը հանէր, մինչև անգում և՛ կարիք  
չունեցաղներին: Կեցցէ կոմս Եգմոնտը: Բուրկ, ձեզ է  
պատկանում առաջին կենացն ասել: Առաջարկեցէք ձեզ  
տիրոջ կենացը:

ՅԵՑՏՀԸ. Ամբողջ հոգով: Կեցցէ կոմս Եգմոնտը:

ՅԵՑՏՀԸ. Աան-Քւինտինի մօտ յաղթողը:

ՅԵՑՏՀԸ. Գրաւիլինգէնի հերոսը:

ՅԵՑՏՀԸ. Հուռականացն...

ՅԵՑՏՀԸ. Սան-Քւինտինի մօտ պատերազմում  
էի վեցին անգամ: Ես հազիւ էի կարողանում շարժ-  
ւիլ, հազիւ հազ քարշ տալ ծանր հրազէնս: Բայց և  
այնպէս ֆրանսիացիներին էլի մէկ անգամ սաստիկ հար-  
ւած տւի և այնտեղ հրաժեշտի ժամանակ աչ աշխումս  
մի թեթև վէրք էլ ստացայ:

ԲՈՂԻԻԿ. Գրաւելինգէն, բարեկամներ, այնտեղ էր  
բանը: Յաղթութիւնը միայն մեզ էր պատկանում: Ողջ  
ֆլանդրիան չէին աւերում և ալրում այդ օտարը շները:  
Բայց կարծում եմ, մենք կարգին էինք դիպուտ նոցա:  
Նոցա ծեր, ամբարուոն տղեքը երկար դիմադրում էին,  
բայց մենք այնպէս էինք նեղում, ոպանում, հարւա-  
ծում, որ նոքա իրանց ռէխները ծուած խանգարեցին  
իրանց կարգերը: Եպմոնտի տակի ձին սպանւեց: Բայց  
մենք յետ, առաջ, հետեւակը-հետեւակի դէմ, ձիաւորը-  
ձիաւորի, գունդը-գնդի դեռ երկար կռւում էինք ծով-  
ափի ընդարձակ՝ աւազի վրայ: Յանկարծ գետաբերա-  
նից՝ կարծես երկնքից լուեց — ճը՛ռ, գը՛ռ. թնդանօժ-  
ներ էին, որ անդադար արձակում էին Փրանսիացի-  
ների դէմ: Դոքա անդիացիներ էին, որոնք ծովալետ  
Մալինի առաջնորդութեամբ Դիւնկիրխէնից պատահ-  
մամբ մեր մօտովի անցնում էին: Թէև նոքա մեզ շատ  
էլ չ'օդնեցին, որովհետև միայն ամենափոքրիկ նաւերով  
էին կարսդանում մօտենալ, և ալն էլ ոչ բաւական մօտ,  
և մեր դէմ էլ էին նետում, բայց էլլի լու էր: Այդ  
բանը ահ ձգեց թշնամիների սրտերը և մեզ քաջալի-  
րեց: սկսւեց — շրբ՛իսկ, թրբ՛իսկ, տուր հա կը տաս:  
Սմեն ինչ սպաննեցինք, տմեն ինչ չուրը նետեցինք: Եւ  
տղեքը ջրի համն առնելն ու խեղդւիլը մէկ էին անումք:  
Մենք, ինչքան որ Հոլանդացիներ կալինք, բոլորս նո-  
ցա յետեից: Մեզ — երկակինցաղներիս համար ջրումն  
աւելի լու էր, ինչպէս գորտերի համար, և թշնամոն  
ջրի մէջ անդադար չարդուում և սղանուում էինք, ինչ-  
պէս բադերի: Ով որ մեր ձեռքից գուրս էր պլծնում,  
փախչելիս՝ գեղջկուհիների բրիչներից և եղաններից էր  
սպաննում: Վերջը ստիպւած էր օտարը մեծութիւնը թա-  
թիկը մեկնել և խաղաղութիւն անել: /Եւ այդ խաղա-  
ղութիւնը դուք մեզ էք պարտական, մեծ Եպմոնտին  
էք պարտական.

ԱՄԷՆՔԸ. Հուռուա. կեցցէ մեծ էգմոնտը. կրկին  
և կրկին կեցցէ:

ՅԵՑՑԵՐ. Երանի թէ Մարգարիտ Պարմացու տեղ  
նըան նշանակած լինէին կառավարիչ մեզ վրայ:

ԶՕԵՍ. Ոչ. ոչ. ճշմարիտը մնում է ճշմարիտ:  
Ես թուլ չեմ տալ Մարգարիտին հալհուելու: Հիմայ կե-  
նացի հերթն իմն է: Կեցցէ մեր ողորմած տիկինը:  
ԲՈՂՈՐԾԻՔ. Կեցցէ:

ԶՕԵՍ. Արգարե. այդ տան մէջ շատ պատւական  
կանայք կան: Կեցցէ ոեգենտուհին.

ՅԵՑՑԵՐ. Խելօք է նա և իւր բալոր գործերում  
չափաւոր: Միայն թէ այնպէս պինդ և սերտ կերպով  
ըլ յարէր հոգեգորականներին: Հօ նա էլ է մեղսակից  
ալս բանում, որ մենք մեր երկում տասնուշորս նոր  
եպիսկոպոսական վեղարաւոր ունինք: Արդեօք ինչացու  
են գոքա: Միմիալն նորա համար չէ ալդ, որ կարելի  
լինի գէր պաշտօնները օտարներին տալ, այն ինչ ոո-  
վորաբար վարդապետներն ընտրում էին վանական ժո-  
ղովներից: Եւ մեզ հաւատացնում են, իբրև թէ այդ  
բանն ի սէր կրօնի է: Ալո, հանաք բան չէ: Երեք եպիս-  
կոպոսով բաւականանում էինք, և ամեն ինչ կարգ ու-  
կանոնի տակ էր: Հիմայ հօ նոցանից իւրաքանչիւրը  
պէտք է ցուց տալ, իբրև թէ ինքը հարկաւոր է և իւ-  
րաքանչիւր ըոսէ անհամութիւն և վէճ է պատճառում:  
Եւ որքան աւելի էք յուզում և արծարծում այդ հարցը,  
անքան աւելի է մթնանում: (Խմում են):

ԶՕԵՍ. Դէ այդ թագաւորի կամքն էր. ոեգեն-  
տուհին այդ բանում խառն չէ. նորա ձեռքից ոչինչ  
չէ գալիս:

ՅԵՑՑԵՐ. Նոր սաղմոսները ըլ պէտք է երգենք.  
նոքա արգարև շատ գեղեցիկ յանգերով են և ունին  
իսկ կագդորիչ եղանակներ: Այդ սաղմոսները չըպէտքէ

երգենք, բայց ստահակների երգեր—որքան կուզենք:  
Բայց ինչո՞ւ: Մէջը հերետիկոսութիւններ կան, ասում  
են, և էլի, Աստւած գիտէ, թէ ինչ բաներ: Ալդ նոր  
երգերից հօ ես ինքս էլ եմ երգել, բայց ես նոցա մէջ  
այդպիսի բան ամենեին չեմ գտած:

ՅՈՒՀԻԿ. Ես գեռ պէտք է նոցա հարցնեմ! Մենք  
մեր երկրում երգում ենք, ինչ որ ուզում ենք, որով-  
հետև կոմս էզմոնտն է մեր կուսակալը. նա այդպիսի  
բաների լեռնեից չի ընկնում. Գենտում, իպէսնում, ողջ  
Ֆլանդրիայում երգում է ալդ սաղմոսներն ամեն ցան-  
կացող: (Բարձրածախն): Հոգեոր երգերից էլ անմեղ հօ  
բան չըկալ: Ճշմարիտ չէ, ապեր:

ՅՈՒՀԻԿՈՒՄ. Ի հարկ է: Ալդ հօ մի ժամերգու-  
թիւն է. սգու շինութիւն:

ՅԵՑՑՈՒ. Բայց նոքա ասում են, որ ալդ սաղմոս-  
ները պատշաճ ձեռվ չեն, նոքա իրանց ձեռվ չեն և  
որովհետև դա միշտ վատանգաւոր է, ուստի աւելի լու է,  
որ մարդ բոլորովին ձեռք վերցնէ նոցանից: Հաւտտա-  
քննութեան ծառաները դադտուկ շրջում են ամեն կողմ  
և լրտեսում: Նատ ազնիւ մարդիկ արդէն դժբախտացել  
են: Հենց խղճի բռնաբարութիւնն էր սլակաս: Եթէ  
ինձ իրաւունք չէք տալիս գործելու, ինչ որ ցանկա-  
նում եմ, հօ կըմողնէք ինձ մտածել և երգել, ինչոր  
ցանկանում եմ:

ՅՈՒՀՍ. Հաւտտաքննութիւնը ընդունելութիւն չի  
գտնի: Մենք սպանիացիների ման չենք թողնիլ մեր  
խիզճը բռնաբարելու: Եւ ազնւականութիւնն էլ պէտք  
է աշխատէ ժամանակին նորա թեւերը խուզել:

ՅԵՑՑՈՒ. Շատ ձախորդ բան է: Եթէ օրից մի օր  
ալդ մարդոց մտքովն անցնի տունս թափւել, իսկ ես  
նստած աշխատանքիս՝ հետն էլ մըմնջում եմ մի ֆրան-  
սիական սաղմոս, սակայն հետը ոչինչ չեմ մտածում —

ոչ վատ, ոչ լաւ, ալլ մըմնջում եմ, որովհետև ալդ  
բանը միտս է ընկել,—ես արդէն հերետիկոս եմ և  
բանտարկւում եմ: Կամ թէ գաշտով անցնելիս կանգ  
եմ առնում ժողովրդի մի խմբի մօտ, որը լսում է մի  
նոր քարոզչի, Գերմանիայից եկածներից մէկին—ես  
տեղն ու տեղը համարւում եմ ապատամբ և գլխատւե-  
լու վտանգի մէջ եմ: Լսել էք նոցանից մէկին ու մէկին  
քարոզելիս:

ՅՈՒՀՍ. Ա՛յ արիասիրտ մարդիկ: Նորերս լսեցի  
մէկին դաշտում հազարաւոր մարդոց առաջ խօսելիս:  
Այն մի ուրիշ տեսակ քարոզ էր. նոքա մերոնց նման  
բեմից աջ ու ձախ չեն թմբկահարում և մարդոց ականջ-  
ները տանում անհասկանալի լատիներէնով: Նա խօսում  
էր ազատ և համարձակ, ասում էր, թէ ինչպէս նոքա  
մինչեւ օրս մեր գլխին խալք են խաղացել, տգիտու-  
թեան մէջ պահել, և թէ ինչպէս մենք կարող էինք  
աւելի լուսաւորութիւն ստանալ. և այն ապացուցանում  
էր նա բոլորն Աստւածաշնչով:

ՅԵՑՑՈՒ. Եւ պէտք է որ գորանում մի բան լինի:  
Ես ինքս էլ էի միշտ խօսում և մտածում ալդ բանի  
վրայ: Ալդ վազուց է մարդովս անցել:

ՅՈՒՀԻԿ. Ամբողջ ժողովուրդն էլ նոցա ետեից վտ-  
գում է:

ՅՈՒՀՍ. Եւ հասկանալի է, երբ մարդ կարող է  
մի նոր և լաւ բան լսել:

ՅԵՑՑՈՒ. Հա ինչ կալ որ. թող ամեն մարդ իւր  
ձեռվ քարոզէ:

ՅՈՒՀԻԿ. Իէ շուտ, պարսներ.գատարկախօսութեամբ  
մոռանում էք գինին և Օրտնացուն:

ՅԵՑՑՈՒ. Զըմոռանանք նորան. նա կատարեալ  
ալտանէչ է: Բաւական է նորան լիշել —և կ'հաւատաս ե-  
սը կարող ես նորա ետևն ալնալիս թաքնուիլ, որ ստու-

նան էլ չե կարող քեզ դուրս քաշել: Կեցցէ Վեհելմ Օրանացին. հուռակա.

թուրուրիքնչն. կեցցէ:

ԶՈՒՄ. (Ռուփումին): Դէ, ծերուկ, դու էլ կենաց առաջարկիր:

ԲՈՒՀԻՉՈՒՄ. Ծեր զինւորների կենացը. կեցցէ պատերազմը:

ԲՈՒՀԻԿ. Կեցցես, ծերուկ. բոլոր զինւորների կենացը. կեցցէ պատերազմը:

ՅԵՑՑԻՌ. Պատերազմ, պատերազմ. գիտէք արգեօք, ինչ էք ազազակում: Որ ձեր բերնից այդ հեշտ դուրս է թռչում, շատ բնտկան է. բայց թէ միեսոն ժամանակ մեզնից իւրաքանչիւրն ինչպիսի սրտնեղութիւն է զգում—չեմ կարող ասել: Ամբողջ տարի թմբկի դոփիւն լսել: Մարդ հէնց միայն այն է լսում, թէ ինչպէս ալսուել մի գունդ է գալիս, այնտեղ—մի ուզիւը. ինչպէս նոքա մի բլուր բարձրացան և մի ազօրիքի մօտ կանգ առան. ինչպէս են իրար նեղը ձգում. և մէկը առնում է, միւսը տարւում. իսկի մարդ չի էլ հասկանում, թէ տանողն ով է, տարւողն ով: Ինչպէս մի քաղաք գրաւում է, ինչպէս են քաղաքացիներին մորթում և ինչ է լինում խեղճ կինարմատների ու երեխաների վիճակը—այնպիսի վիշտ և սարսափ է տիրում, որ ամեն վայրկեան մարդ մտածում է. «Հօրէս եկան. մենք էլ ենք նոցա օրումը...»

ԶՈՒՄ. Հէնց այդ պատճառով էլ պէտք է ամեն մի քաղաքացի միշտ վարժւի զէնքում:

ՅԵՑՑԻՌ. Այս, վարժւում է, ով կին ու որդիներ ունի: Բայց և այնպէս, ինձ համար աւելի լաւ է զինւորների մասին լսել, քան թէ նոցա տեսնել:

ԲՈՒՀԻԿ. Գորանով հօ ինձ վիրաւորում էք:

ՅԵՑՑԻՌ. Այդ ձեզ չէ վերաբերում, երկրացիս:

Հէնց որ մենք սպանիական պահապան զօրքից ազատեցանք, կարծես նորից շունչ տռանք:

ԶՈՒՄ. Իրաւ է. նոքա քեզ վրայ շատ էին ծանրանում:

ՅԵՑՑԻՌ. Ծաղը ես անում:

ԶՈՒՄ. Նոքա շատ խիստ են վարւել քեզ հետ:

ՅԵՑՑԻՌ. Մէխտ հաւաք պահիր:

ԶՈՒՄ. Նոքա վախցրել են սորան խոհանոցից, նկուղից, սենեակից—անկողնից: (Ծիծալում են),

ՅԵՑՑԻՌ. Ապուշի մէկն ես դու:

ԲՈՒՀԻԿ. Խաղաղութիւն, պարսներ: Միթէ զինւորը պէտք է խաղաղութիւն կանչէ: Արդ՝ որովհետեղ դուք մասին ոչինչ չէք ուզում լսել, ուրեմն առաջարկեցէք նաև ձեր կենացը, քաղաքացիների կենացը: ՅԵՑՑԻՌ. Դորտ համար պատրաստ ենք: Ապահովութիւն և խաղաղութիւն:

ԶՈՒՄ. Կարգ ու կանոն և ազատութիւն:

ԲՈՒՀԻԿ. Նատ գեղեցիկ. դորանով մենք էլ ենք գոհ: (Պաւամները խփում են և ամեն մէկը մի խօսք կրկնում այնպէս, որ կարծես փոխ են ասում. ձերն ականչ է դնում դոցակ վերջն ինքն էլ միանում):

ԱՄԵՆՔԸ. Ապահովութիւն և խաղաղութիւն. կարգ և կանոն և ազատութիւն:

լատը, շուշ և մի առ մի, որպէս զի ընդհանուր կարծիքն ինձ չըկանիսէ, որպէս զի թագաւորը չը կարծէ, թէ ուզում են աւելի ևս ծածկել: Եւ այդ չարեքը խափանելու համար ոչ մի միջոց չեմ տեսնում—ոչ մեղմ, ոչ խիստ: Ո՞չ, ինչ ենք մենք մեծերս մարդկութեան ալիքների վրայ: Մենք կարծում ենք, թէ նորան իշխում ենք, բայց նա մեզ վեր ու վար, դէս ու դէն է մղում: (Մաքիստէլը մահում է), Թագաւորի հասցէին նամակները պատրաստ են:

ՄԱՔԻՍԻԼԻԼ. Մի ժամկց կարող կը լինիք ստորագրել:

ՄԱՐԴ. Արդեօք զեկուցումը բաւականին ընդարձակ էք գրել:

ՄԱՔԻՍԻԼԻԼ. Ընդարձակ և հանգամանուեն, ինչպէս որ սիրում է թագաւորը: Ես պատմում եմ, թէ ինչպէս տմենից առաջ Սբ. Օժէրում պատկերամարտութեան մոլեգնութիւնը յախնուում է: Ինչպէս մի կատաղի ամբոխ բրերով, կացիններով, մաւրճերով, սանդուխքներով, թոկերով՝ սակաւաթիւ զինւածների ուղեկցութեամբ, յարձակուում է նախ մատուռների, եկեղեցինների, վանքերի վրայ, աղօթաւորներին ցիրուցան անում, կողաած գոները կոտրատում, ամեն ինչ տակն ու վրայ. անում, բեմերը խորակում, սրբերի անջրիները Փշում, բոլոր պատկերները փճացնում, ինչ որ սուրբ ու նւիրական բան են գտնում—բոլորը ջարդատում, պատառոտում, ոտնատակ տալիս: Ինչպէս գնալով՝ ամբոխը շատանում է, իսկոնին բնակիչները նրա առաջ բաց են անում գոները: Ինչպէս այդ ամբոխը մայր տաճարը անհաւատալի արագութեամբ աւերում է, եպիսկոպոսի գրագարանն այրում: Ինչպէս մի մեծ հրասակ՝ նոյնպիսի անմտութեամբ վարակւած, տարածւում է Մէնինում, Կոմինէսում, Ֆէրզիխում, Լիլլում, ոչ մի

## Բ. ՏԵՍԱՐԱԿ

### ՈՒՂԵՆԹՈՒՆՈւ պալատը

Մարգարիտ Պարամացին որսորդական հագուստով, պալատականներ, մանկաւիկներ, ծառաներ:

ՄԱՐԴԱՐԻՑ. Յետաձգեցէք որսը. ալսօր դուրս չեմ գնում: Ասացէք Մաքիստէլին, որ ինձ մօտ գալ: (Ամենքը հեռանում են): Այս զարհուրելի իրազութիւնների մասին մտածմունքն ինձ հանգատութիւն չի տալիս: Ել ոչ մի բան չի կարողանում ոչ զւարձացնել, ոչ զբաղեցնել ինձ: Միշտ աչքիս առաջ են այդ մտապատճերներն ու հոգսերը: Հիմա թագաւորը կատէ, թէ այդ իմ բարութեան, ներողամտութեան հետևանքներն են: Սակայն իւրաքանչիւր վայրկեան սիրտս վկայում է, որ ես արել եմ ամենախոհականն ու ամենալաւը: Հապա պէտք է կատաղութեանս փոթորկով այս բոցերն աւելի վաղ բորբոքէի ու տարածէի: Ես յոյս ունէի սահմանափակել նոցա, որ բոցերն իրանք իրանց լավին ու հանգչին: Եւ լու գիտեմ, որ ինքս իմ առաջ արդար եմ. բայց այդ ինչպէս կընդունէ եղբայրս: Որովհետեւ—միթէ ուրանալու է այս, որ օտար ուսուցիչների յաւակնութիւնը օրից, որ աճել է, նոքամեր սրբութիւնը հայհոյել են, ժողովրդի բութ կրքերը գրգռել, խարդաւամտութիւնը նոցա մէջ մտցրել: Անմաքուր հոգիները խառնւել են ապստամբների հետ, և այնպիսի սարսափելի բաներ են տեղի ունեցել, որոնց մասին մտածելն անգամ զարհուրելի է, և որոնց մասին ես պէտք է հիմա մի առ մի տեղեկութիւն տամ պա-

տեղ ընդդիմագրութիւն չի գտնում և ինչպէս է համա-  
մարելո ողջ ֆլանդրիում գալագրութիւնը լրանում և  
գլուխ գտվի:

ՄԱՐԴԱՅԱՐԻԾ. Այս, ինչպէս նորոգւում է պիշտո  
քո կրկնելովը: Եւ դորան էլ միանում է այն երկիւզը,  
որ չարիքը գնալով աւելի ու աւելի կը մեծանալ: Աս-  
ցէք ինձ ձեր կարծիքը, Մաքիաւելլ:

ՄԱՐԴԱՅԱՀԻԼԼ. Ներեցէք, Ձերդ Բարձրութիւն: իմ  
կարծիքները նման են ցնորքների: Եւ դուք թէկ իմ  
ծառալութիւնովը գոյն էք եղած, բայց և այնպէս ստ-  
կաւ է պատահել, որ հաճած լինիք իմ խորհրդին հե-  
տեւել: Գուք միշտ կատակով ասում էիք. «Դու շատ հե-  
ռուն ես տեսնում, Մաքիաւելլ. դու պէտք է պատմա-  
գիր լինէիր. ով որ գործում է, նա պէտք է ամենամօ-  
տիկի վրայ մտածէ»: Միթէ տիտ պատմութիւնը կանխ-  
օրէն չեմ պատմած: Միթէ բոլորը ըբժարդարէացաւ:

ՄԱՐԴԱՅԱՐԻԾ. Ես էլ եմ շատ բան նախատեսնում,  
բայց փոփոխել չեմ կարողանում:

ՄԱՐԴԱՅԱՀԻԼԼ. Կարճ: Գուք չէք կարող արգելել  
այդ նոր վարդապետութիւնը: Պաշտօնապէս ընդունե-  
ցէք նորա գործութիւնը, անջատեցէք նոցա ուզդափառ-  
ներից. տւէք նոցա եկեղեցիներ, դրէք քաղաքացիա-  
կան կարգ ու կանոնի տակ և սահմանների մէջ դրէք  
նոցա, ու այդպիսով դուք ապատամբներին միանգամից  
կը հանգստացնէք: Ուրիշ ամեն միջոց գուր է. դուք  
միայն երկիրը կաւերէք:

ՄԱՐԴԱՅԱՐԻԾ. Դու մոռացել ես, թէ ինչպիսի զըզ-  
ւանքով մերժեց եղբայրս նոյն իսկ այն հարցը, թէ կա-  
րելի է արդեօք ընդունել նոր վարդապետութեան գո-  
րութիւնը: Չես իմանում, ինչպէս նա ինձ ուզդած իւ-  
րաքանչիւր նամակում ամենախիստ կերպով պատւիրում  
է ուղիղ հաւատի պահպանութիւնը, որ նա լսել ան-

գամ չէ ուզում խաղաղութիւնն ու միութիւնը կրօնի  
հաշւի վերականգնել: Նա ինքը չէ, որ գաւառներում  
մեզնից ծածուկ լրտեսներ է պահում տեղեկանալու հա-  
մար, թէ ով է հակած դէպի նոր վարդապետութիւնը:  
Նա, ի զարմանս մեր, չէ անւանած սորան կամ նորան,  
որոց նա մեղադրում էր, թէ մեր շրջանում ծածուկ  
հերետիկոս են դարձած: Նա չէ հրամակում խստու-  
թիւն և կոշտութիւն: Եւ ես պէտք է մեղմ լինիմ,  
պէտք է տուշարկութիւններ անեմ, որ նա ներողամիտ  
լինի: Զէի կորցնիլ նորա դէպի ինձ ունեցած վստահու-  
թիւնն ու հաւատը:

ՄԱՐԴԱՅԱՀԻԼԼ. Ես լսւ գիտեմ, թագաւորը հրա-  
մակում է, նա պատվիրում է, որ գուք հանգստութիւնն  
ու խաղաղութիւնը նորից վերականգնէք մի այնպիսի  
միջոցով, որը նոցա սրտերն աւելի ևս կը դառնացնէ  
ու պատերազմը անխուսափելի կերպով երկրում կ'ար-  
ծարձէ: Կշռագատեցէք, թէ ինչ էք անում: Բոլորեքեան  
պարական են — թէ աչքի ընկնող վաճառականները,  
թէ ազնւականութիւնը, թէ ժողովուրդը, թէ զինւոր-  
ները: Ի՞նչ օգուտ իւր կարծիքի վրայ յամտաւելուց, երբ  
շուրջն ամեն ինչ փոփոխւում է: Երանի մի բարի հոգի  
ներշնչէր Փիլիպոսին, որ մի թագաւորի աւելի վայել  
է երկու այլակրօն ժողովորդի կառավարել, քան թէ նո-  
ցա մէկ-մէկու ձեռքով ջնջել:

ՄԱՐԴԱՅԱՐԻԾ. Ալգալիսի խօսքեր էլ բերանիցդ չհա-  
նես: Ես լսւ գիտեմ, որ քաղաքականութիւնը սակաւ է  
կարող հաւատարձութիւն ու հաւատ պահպանել, որ  
նա մեր սրտից արտաքսում է անկերծութիւնը, բա-  
րեսրտութիւնը, ներողամտութիւնը: Աշխարհական գոր-  
ծերում այդ, աւագ, աւելի քան ճշմարիտ է: Բայց մի-  
թէ Աստուծոյ հետ էլ պէտք է խաղանք, ինչպէս մէկ-  
մէկու հետ: Պէտք է անտարբեր լինենք դէպի մեր ու-

Պղկ վարդապետութիւնը, որի համար շատ շատելը իրանց կեանքը զոհել են: Մենք պէտք է այդ զոհ բերենք օտար, տարակուսական, ինքն իրան հակառակ նորաձեռներին.

ՄԱՔԻԱՀԵԼԼ. Միայն թէ դպրա պատճառով իմ մասին վատ կարծիք միք կազմիլ:

ՄԱՐԴԱՐ. Ես ճանաչում եմ թէ քեզ, թէ քո հաւատարմութիւնը. և այն ել գիտեմ, որ մէկը կարող է ազնիւ և խոհական մարդ լինել: Թէ նա իւր հոգու փրկութեան ամենակարճ, ամենալաւ ճանապարհից շեղուած լինի: Կան, Մաքիաւելլ, մի քանի մարդիկ, որոնց ես պէտք է գնահատեմ, բայց և կշտամբեմ:

ՄԱՔԻԱՀԵԼԼ. Ո՞մն էք ակնարկում.

ՄԱՐԴԱՐ. Պէտք է խոստովանեմ, որ էգմոնտն այսօր ինձ մի խորին և խիստ տհաճութիւն պատճառեց:

ՄԱՔԻԱՀԵԼԼ. Իւր որ վարմունքով:

ՄԱՐԴԱՐ. Սովորականովը.—այսինքն իւր անտարքերութիւնովն ու թեթևամտութիւնովը: Ես ստացայ այն զարհուրելի լուրը ուղիղ այն ժամանակ, երբ ես նորա և շատերի ուղեկցութեամբ գալիս էի եկեղեցուց: Ես ըսկառողուց վիշտո զսոլել, և բարձրածայն վայ տուի և նորան դառնալով գոչեցի. /Տեսէք. ինչ է կատարւում ձեր նտհանգներում: Այդ թուլ էք տալիս դուք, կոմս, ումնից թագաւորը մեծամեծ լուսեր ունէք:

ՄԱՔԻԱՀԵԼԼ. Եւ ինչ պատասխանեց նա:

ՄԱՐԴԱՐԻՑ. Իբրև թէ այդ ոչինչ, իբրև թէ այդ մի կողմնակի բան լինէր, պատասխանեց. «Միայն թէ նախ նիդէրլանդցիները հանգստացնեէին իրանց սահմանադրութեան վերաբերմամբ,—մնացածը հեշա է»:

ՄԱՔԻԱՀԵԼԼ. Գուցէ նա խօսել է աւելի ճշմարիտ, քան ինելօք և համեստ: Ինչպէս պէտք է վստահութիւն լցանալ և լարատեէ, երբ նիդէրլանդցին տես-

նում է, որ հարցը աւելի նորա ստացւածքի մասին է, քան թէ նորա երջանկութեան և հոգու փրկութեան: Նոր եպիսկոպոսներն աւելի հոգիներ են փրկել, թէ գէր ուոճիկներով խնջուքներ տւել. և մեծ մասն օտարականներ չեն: Դեռ ևս բոլոր կուսակալութիւնները նիդէրլանդցիների ձեռին են. սովանիացիները շատ պարզ նկատել չեն տալիս, թէ իրանց ամենամեծ, ամենաանդիմագրելի տենչանքն է—այդ տեղերն ստանալ: /Չէ որ մի ժողովուրդ աւելի սիրով կուզէ իւր ձեռվ և իւրացիններով կառավարւել, քան օտարականներով, որոնք ձգտում ձգտում են ընդհանուրի հաշով նորից կալւածներ ձեռք բերել, որոնք հետաքարը մի ուրիշ չափ են բերում, որոնք իշխում են անսիրալիր կերպով և առանց կարեկցութեան:

ՄԱՐԴԱՐ. Դու հակառակորդների կողմն ես բռնում.

ՄԱՔԻԱՀԵԼԼ. Սրտով՝ անկասկած ոչ. իսկ խելքով կուզէի. Եթէ կարողանալի բոլորովին մերերի կողմը լինել:

ՄԱՐԴԱՐ. Քո ասելով ուրեմն կարիքը կը ստիպէր, որ ես իմ սլաշտոնը նոցա զիջանէի, որովհետև էգմոնտն ու Օրանացին մեծ յուս ունին այս տեղն ստանալու: Առաջ նոքա հակառակորդներ էին, հիմա միատեղ են ձի՞քմ և բարեկամներ, անբաժանելի բարեկամներ են դարձել:

ՄԱՔԻԱՀԵԼԼ. Վտանգաւոր զոյգ:

ՄԱՐԴԱՐԻՑ. Ուղիղն ասած, ես վախենում եմ Օրանացուց և ափսոսում էգմոնտին: Օրանացին լաւ բան չէ մտածում. նորա մտքերը հեռուն են հասնում. նա ծածկումիտ է. ցոյց է տալիս, թէ բոլորի հետ համաձայն է, երբէք չէ հակառակում, այն ինչ խորին պատկառանքով և ամենամեծ զգուշութիւնով իր ուզածն է անում:

ՄԱՔԻԱՀԵԼԼ. Բոլորովին ընդհակառակն էգմոնտը գնում է ազատ քալերով, կարծես աշխարհս նորան պատկանելիս լինի:

ՄԱՐԴԱՐ. Նա գլուխն այնպէս բարձր է պահում, կարծես նորին մեծութեան ձեռը նրա վրայ տարած-  
ւելիս չըլինի:

ՄԱՐԴԻԱՆԻՀԱՅ. Ողջ ժողովրդի աչքերը նորան են  
ուղղած և նոցա սրտերը կապւած են նորա հետ:

ՄԱՐԴԱՐ. Նա իրան միշտ այնպէս է ցոյց տալիս,  
որ կարծես թէ ոչ ոք նրանից պահանջելիք հաշիւ չու-  
նենար: Դեռ կրում է Եգմոնտ տնունը, ուրախանում է,  
որ անւանում են իրան կոմս Եգմոնտ: կարծես չկամե-  
նալիս լինէր մոռանալ, որ իւր նախնիները Գէլդէրնի  
տէրերն էին: Ինչու չէ իրան անւանում Պաուրի իշխան,  
ինչպէս իրան վայել է: Ինչու է այդպէս անում: Կա-  
մենում է մեռած իրաւունքները նորից վերականգնել:

ՄԱՐԴԱԻԻՀԱՅ. Ես նորան թագաւորի հաւատարիմ  
ծառայ եմ համարում:

ՄԱՐԴԱՐ. Եթէ կամենար, ինչ հեշտ կարող էր  
կառավարութիւնն իրան երախտապարտ դարձնել. այն  
ինչ նա, առանց ինքն էլ մի որեւէ շահ ունենալու, մեզ  
արդէն անասելի տհաճութիւններ է պատճառել: Նորա  
հանդէսները, ինչուքները, կերուխումները ազնւակա-  
նութիւնն աւելի են սերտ կապով միացրել, քան գաղտ-  
նի ամենավտանգաւոր ժողովները: Նորա կենացների  
հետ հիւրերն ստացել են մի տեղական հարբածու-  
թիւն, մի մշտառեւ անզդալութիւն: Քանի ան-  
գամ է իւր ծաղրական ճառերով ժողովրդի սրտերը շար-  
ժել. և ինչպէս էր ամբոխը նորա ծառաների նոր հա-  
մագեստի, անմիտ շքանշանների վրայ հիացած:

ՄԱՐԴԻԱՆԻԻՀԱՅ. Ես համոզւած եմ, որ այդ դիտ-  
մամբ չէ եղած:

ՄԱՐԴԱՐ. Տւած վնասն էլ հերիք է: Ինչպէս  
ասում եմ, նա մեզ վնասում է, և ինքն էլ չէ օգտառում.  
Նու լուրջը կատակի տեղ է ընդունում, և մենք՝ պա-

ըսպ և անհոգ չերեալու համար, պէտք է կատակը  
լրջի տեղ ընդունենք: Այդպէս մէկը միւսին դրգուում է  
և մարդ հակառակի պէս հէնց այն է անում, ինչից  
խուսափիել է աշխատում: Նա աւելի վտանգաւոր է, քան  
մի դաւադրութեան երգւեալ պարագլուխ: Եւ ես չա-  
րաշար սխալած կրլինէի, եթէ կարծէի, որ գորա պատ-  
ճառով պալատում նորա գէմ ոխ չեն պահում: Ես չեմ  
կարող սւրանալ, սակաւ է պատահում, որ նա ինձ չը-  
զալրացնէր, չարաչար չըգուրացնէր:

ՄԱՐԴԻԱՆԻԻՀԱՅ. Ինձ այնպէս է թւում, որ նա ամեն  
բանում իւր խզնի համաձայն է գործում:

ՄԱՐԴԱՐ. Նորա խիզճը մի քմահաճ հայելի ունի,  
նորա վարմունքը լաճախ վիրաւորական է: Յաճախ այն-  
պէս է վարւում, որ կարծես թէ կատարելապէս հա-  
մոզւած լինի, թէ նա ինքն է տէրը և թէ իւր կողմից  
միմիայն մի հաճոյակամութիւն է այդ, որ չէ կամենում  
այդ մեզ զգալ տալ, որ չէ կամենում հէնց ուղղակի  
դուրս վանդել, թէ այդ առանց այն էլ կը լինի:

ՄԱՐԴԻԱՆԻԻՀԱՅ. Խնդրում եմ շատ էլ վտանգաւոր  
մտքով չըմեկնել նորա անկեղծութիւնը, նորա ամեն  
ծանր գործ թեթև դատապ բախտաւոր խառնւածքը:  
Դուք կը վնասէք միայն թէ նորան, թէ ձեզ:

ՄԱՐԴԱՐ. Ես ոչինչ չեմ մեկնում: Ես խօսում եմ  
միայն այն անխուսափելի հետեանքների մասին, և ես  
ճանաչում եմ նորան: Նորա նիդէրլանդական տգնւական  
ծագումն և կրծքից կախած Ուկեգեղմը ամրագնդում  
եմ նրա վստահութիւնն ու անվեհերութիւնը: Երկուսն  
էլ կարող են նրան պաշտպանել թագաւորի յանկարծա-  
կան և կամայական դժկամտկութիւնից: Ճիշտ հետազօ-  
տիր. Ֆլանգրիալին հասած տմբողջ դժբախտութիւնը  
հօ միմիայն նորա մեղն է: Նա առաջինը տեղեկութիւն  
առաւ օտար ուսուցիչների մասին, բայց առանձին ու-

շադրութիւն չըդարձրեց. գուցէ ծածուկ ուրախացաւ էլ,  
որ մենք նոր հսկուր պիտի ունենանք: Թող ինձ. ինչ  
որ սրտումս հաւաքւածէ, պէտք է այս առիժով դուրս  
թափուի: Ես չեմ ուզում սլաքները իզուր նետել. ես  
գիտեմ նորա թուլ կողմը հարւածել: Նո էլ է գգալուն:  
ՄԱՐԻԱՆՆԵԼ. Հրամայել էք խորհրդի կանչելու:  
Օրանացին էլ է գոլու:

ՄԱՐԻԱՐ. Անտէրալէն մարդ եմ ուզարկել նորա  
ետևից: Ես ուզում եմ պատասխանտութեան ծան-  
րութիւնը նոցա վրայ ձգել: Նոքա պէտք է կամ ինձ  
հետ միասին լըջութեամբ չարիքին դիմադրեն, կամ  
իրանց էլ ապատամբ հրատարակեն: Շտապիք, որ նա-  
մակները պատրաստ լինին, և բեր, որ ստորագրեմ. ապա  
շուտով Մադրիդ ուզարկիր փորձուու Փասկալին. Նո  
անխոնջ է և հաւատարիմ. Թող եղբայրս նախ նորա  
միջոցով լուրը լոէ: Թող համբաւը նորան չըկանիէ: Ես  
կամենում եմ անձամբ նորա հետ էլի խօսիլ, նախքան  
նորա հեռանալը:

ՄԱՐԻԱՆՆԵԼ. Զեր հրամանները կըկատարէին իս-  
կոյն և ճշտութեամբ:

## Գ. ՏԵՍԱՐԱԿ

### Քաղաքացու տուն

ԿՐԱՅ, ՆՈՐԱ ՄԱՅՐԸ, ԲԲԱԿԵՆԲՈՒՐԴ

ԿԼԱՐԱ. Զէք կտմենում գերձանս բռնել Բլո-  
կենբուրդ:

ԲԲԱԿԵՆ. Խնդրում եմ, խնայեցէք ինձ, Կլորա:

ԿԼԱՐԱ. Ելի բնչ է պատահել ձեզ: Ինչու էք մեր-  
ժում ինձ սիրոյ այս չնչին ծառալութիւնը:

ԹՐԱԿ. Դուք ինձ գերձանով առաջներդ այնպէս  
ամուր կաշկանդում էք, որ չեմ կարող ձեր աչքերից  
ծածկւել:

ԿԼԱՐԱ. Ինչ ցնորքներ. Եկէք բռնեցէք:  
ՄԱՅՐԸ. (Աթոռի վրաէ գործելով) Մէկ երգէք դէ:  
Բրակենբուրգն այնպէս գեղեցիկ դաշնակցում է: Առաջ-  
ներն ուրախ էիք լինում և ինձ միշտ ծիծաղացնում էիք:  
ԲԲԱԿ. Հա, առաջները:

ԿԼԱՐԱ. Մենք ուզում ենք երգել:

ԹՐԱԿ. Ինչ որ կամենաք:

ԿԼԱՐԱ. Միայն գեղեցիկ, աշխուժով և գւարժու:  
Իմ սիրածը մի զինւորի երգ է: (Նա գերձան է կծկում և  
երգում Բրակենբուրգի հետ):

Թմբուկը զոփում է, Զինւորի շորում:

Սրինգը հնչում, Գարպասից կ'ելնէի

Սիրելիս զինավառ, Քայլով տնվեհեր

Գնդին հրամացում, Նորա հետ գտւառներ

Չեսին տէգ՝ մարդոցը, Շատ ու շատ տեղեր:

Նա առաջնորդում: Թշնամին նահանջեց,

Ա՛լի սիրած թնդում է, Սկսում ենք ջարդել,

Արիւնս եռում, Ի՞նչ աննման բախտ

Երանի լինէի Տղամարդ լինել:

(Բրակենբուրգը երգելիս լաճախ նախում է Կլարային, վերջը  
նրա ձախնր բռնուում է. արդասուք է գալիս աչքերը. թեւը  
ձեռքից վար է ձգում և ինքը մօռենում պարուհանին. Կլա-  
րան երգը միայնակ վերջացնում է. մայրն ակնարկում է նրան  
կէս նորած. Նա կանգնում է, մի քանի քայլ գնում է դէպի  
Բրակենբուրգը. Ենու է դառնում կիսագնառական և նսդում):

ՄԱՅՐԸ. Ալդ բնչ է փողոցում, Բրակենբուրգ. զօ-  
գաչուի ձախն եմ լսում:

ԲԲԱԿ. Մեգենտուհու թիկնապահներն են:

ԿԼԱՐԱ. Այս ժամին. այս բնչ է նշանակում: (Նա

հանգնում է և գնում դեպի պարուճանը՝ Բրակենբուրգի մօրքա ամենօրեալ պահնորդները չեն, շատ-շատ են սոքա: Համարեալ նոցա ամբողջ գունդը. այս, Բրակենբուրգ, գնացէք մէկ յսեցէք, թէ ինչ է պատահել: Արտասովոր բան պէտք է լինի: Գնացէք, բարի Բրակենբուրգ, արէք ինձ համար այդ լաւութիւնը:

ԲՐԱԿ. Գնում եմ, իսկոյն այնտեղ եմ նորից (նաև ուստի կարարակին է մեկնում իւր ձեռը. Ալարան դալիս է նորան իւրը):

ՄԱՅՐԸ. Դու նորան արդէն նորից ես դուրս ուղարկում:

ԿԼԱՐԱ. Հետաքրքիր եմ: Միւս կողմից՝ չըպարսաւէք ինձ, մար, նորա ներկայութիւնն ինձ ցաւ է պատճառում: Մինչեւ օրս չըգիտեմ, թէ ինչ դիրք բունեմ նորա վերաբերմամբ: Ես նորա առաջ մեղաւոր եմ, և ինձ ցաւեցնում է այն բանը, որ նա այդ այնպէս սրտին մօտ է ընդունում: Ի՞նչ անեմ, որ այլապէս լինել չեմ կարող:

ՄԱՅՐԸ. Շատ ուզգամիտ երիտասարդ է:

ԿԼԱՐԱ. Այդ ես էլ եմ ընդունում: Ես նորա պէտք է սիրալիր դիմաւորեմ: Յաճախ ակամայ ձեռս սեղմուում է, երբ նորանն այնպէս սիրալիր ինձ դիպչում է: Ես ինձ յանդիմանում եմ, որ նորան խաբելով տեղիք եմ տալիս ի զուր յուսեր տածելու: Անելանելի դրութեան մէջ եմ: Աստծուն յախնի է, որ ես նորան չեմ խաբում: Ես չեմ ուզում, որ նա յուսալ. բայց չեմ էլ կարող նորան յուսահատեցնել:

ՄԱՅՐԸ. Այդ լաւ չէ:

ԿԼԱՐԱ. Ես նորան սիրում էի և դեռ հիմա էլ նորան հոգով բարիք եմ ցանկանում: Ես կարող կը լինէի նորան մարդու գնալ. բայց կարծում եմ, երբէք ես չէլ սիրահարւած նորա վրայ:

ՄԱՅՐԸ. Դու միշտ բախտաւոր կը լինէիր նորա հետ: ԿԼԱՐԱ. Ապահովւած կը լինէի և կունենալի հանդիստ կեանք:

ՄԱՅՐԸ. Եւ այս բոլոր թեթևամտութեամբ ձեռից թողնելու համար գնւ ես մեղաւոր:

ԿԼԱՐԱ. Զարմանալի գրութեան մէջ եմ: Երբ անցած գնացածի վրայ մտածում եմ, մէկ թւում է, թէ հասկանում եմ, մէկ—ոչ: Բայց բաւական է էգմոնտին նորից մէկ մտիկ տամ—ու ամեն ինչ շատ հասկանալի է լինում: Այս, ինչ մարդ է: Բոլոր նահանգները նորան պաշտում են. և ես նորա գրկում աշխարհիս ամենաբախտաւոր արարածը չըպէտք է լինէի:

ՄԱՅՐԸ. Բայց ապագայում ինչպէս կը լինի:

ԿԼԱՐԱ. Այս ես միայն հարցնում եմ, թէ նա ինձ սիրում է արդեօք. և որ նա ինձ սիրում է, միթէ այդ մասին հարց կարող է լինել:

ՄԱՅՐԸ. Զաւակները ծնողների համար տանջանք են միայն: Ի՞նչ կը լինի արդեօք հորա վերջը: Միշտ հոգս ու տրամութիւն: Այս լաւ վերջ չէ ունենալու: Դու դժբախտացրիր թէ քեզ, թէ ինձ:

ԿԼԱՐԱ. (Անխոռով). Բայց դուք սկզբում թոյլ էիք տալիս:

ՄԱՅՐԸ. Ափսոս, անչափ բարի եմ. միշտ անչափ բարի եմ:

ԿԼԱՐԱ. Երբ էգմոնտը մօտներովս արշաւում էր, իսկ ես վագում էի դէպի պատուհանը, ինձ յանդիմանում էիք, չէիք մօտենում պատուհանին և ինքներդ: Երբ նա վեր էր նայում, ժպտում էր, գլխով էր անում, ինձ բարև էր տալիս, դժգոհ էիք լինում դորանից: Դուք ինքներդ ձեր աղջկալ միջոցով ձեզ պատւած չէիք համարում:

ՄԱՅՐՈՅ. Հիմա ինձ դեռ յանդիմանում էլ ես:

ԿԱՅՐԱ. (Զգածւած). Երբ նա այնպէս յաճախ այս փողոցն էր գալիս և մենք լաւ զգում էինք, որ նա իմ պատճառով է այդ քայլն անում, ինքներդ այդ ներքին ուրախութեամբ չէիք նկատում: Յետ էիք կանչում ինձ, երբ ես՝ պատուհանի ետևը թագնւած, նորան սպասում էի:

ՄԱՅՐՈՅ. Ես ի՞նչ կը կարծէի, թէ բանն այստեղ կը հասնի:

ԿԱՅՐԱ. (Բեկւած ձայնով և արդասուքը սրբելով). Երբ նա՝ վերարկուի մէջ փաթաթւած, մի երեկոյ յանկարծակիի բերաւ մեզ կանթեղի մօտ, ով էր զբաղւած նորան ընդունելու, մինչ ես, զարմացած, աթոռիս վրայ գտնւածի պէս էի:

ՄԱՅՐՈՅ. Միթէ կարող էի երկիւզ կը ել, որ այս գժբախտ սէրը խելօք կլարայիս այսպէս շուտով կը լավագանիէր: Յաւոք սրտի տեսնում եմ, որ աղջիկս. —

ԿԱՅՐԱ. (Արդասուհով). Մալրիկ, գուք էլ այդ էք ուզում: Չեզ ուրախութիւն է պատճառում իմ տանջանքը:

ՄԱՅՐՈՅ. (Լալով) Ի՞նչ ես լաց լինում հիմո և ինձ աւելի թշւառացնում քո տրտմութիւնով: Բաւական չէ իմ վիշտը, որ միակ աղջիկս վատանուն տրարած է:

ԿԱՅՐԱ. (Վանդիմով և սառա). Վատանուն. Եզմոնտի սիրածը վատանուն: Ո՞ր իշխանուհին չէ նախանձիւ խեղճ կլարային՝ էզմոնտի սրտում բռնած տեղի համար: Ո՞հ, մալր իմ, մալր իմ, մինչև օրս այդպէս չէիք խօսում: Մալրիկ, եղէք բարի: Այդպէս մտածում է ժողովուրդը, այդ մրմնջում են հարեանները — այն սենեակը, այս փաքրիկ տնակը մի երկինք է, երբւանից էզմոնտի սէրն է մէջը բնակւում:

ՄԱՅՐՈՅ. Պէտք է գէպի նա սիրով լինել, այդ ծշմարին է: Նա միշտ այնպէս քաղցր, ուղղամիտ և անկեղծ է:

ԿԱՅՐԱ. Նենգութեան հոտն անգամ չըկայ նորանում: Տեսէք, մայր իմ, նա հօ մեծ էզմոնտի է: Բայց երբ ինձ մօտ է գալիս, ինչպէս նա սիրալիր է, որքան բարի: Ինչպէս սիրով կուգէր ծածկել ինձնից իւր պատկանելը բարձր գասակարգին, իւր քայլութիւնը: Ինչպէս է նա իմ մասին հոգ տանում: ինչպէս սոսկ մարդ, սոսկ բարեկամ, սոսկ սիրեկան:

ՄԱՅՐՈՅ. Արդեօք կըգայ նա այսօր:

ԿԱՅՐԱ. Չէք նկատել, քանի անգամ եմ գնացել պատուհանի մօտ: Չէք նկատել, ինչպէս եմ տկանջ գնում, երբ գուռը ճանչում է: Թէև գիտեմ, որ միայն մթնով է գոլու, բայց և այնպէս նորան սպասում եմ իւրաքանչիւր փայրեան, առաւետւանից սկսած, երբ զարթնում եմ: Երանի տղայ լինէի, և կարողանացի նրա հետ գնալ միշտ պալսուը և տմեն տեղ: Երանի կարողանացի նորա ետևից կը ել դրօշակը պատերազմում:

ՄԱՅՐՈՅ. Դու միշտ այդ թեթևողիկն ես եղած. դեռ փոքր երեխալ ժամանակդ էլ երբեմն գիտ, երբեմն ժտախոհ: Չէթիր ուզիլ մի փոքր աւելի լաւ հագնել:

ԿԱՅՐԱ. Գուցէ, մալր իմ, երբ ձանձրանամ: Երէկ, երեւակալեցէք, նորա մարգկանցից առաջովս անցնում էին և գովերդ երգում նորա վրայ: Գոնէ նորա անունը կար երկնում: Մնացածը չըկարողացայ հականալ: Սիրաս տակն ու վրայ եղաւ: Ես սիրով նոցալետ կը կանչէի, եթէ ամաչացած չըլինէի:

ՄԱՅՐՈՅ. Զգուշացիր: Քո կըակոտ բնաւորութիւնը փճացնում է ամեն ինչ: Դու մարդոց առաջ ակնյալունի մատնում ես քեզ, ինչպէս նորերս հօրեղբօրդ մօտ, երբ գու փալտեքանդակն ու նկարագրութիւնը գտար և աղաղուկելով կանչեցիր. «Կոմս էզմոնտ»: Ես շիկնեցայ տմօթից:

ԿԱՅՐԱ. Ինչպէս չտղակալէի: Այն Գրաւելինգէնի

պատերազմն էր: Եւ ես գտնում եմ վերևում Կ. տառը  
և որոնում եմ ներքեւում նկարագրութեան մէջ Կ: Ալն-  
տեղ գրւած է «Կոմս Էզմոնտ, որի տակ ձին սպանւում  
է»: Ես ամբողջովին սարսուցի և յետով ստիպւած էի  
ծիծաղել փայտաքանդակ Էզմոնտի վրայ, որը իւր մօտի  
Քրաւելենգէնի աշտարակի չափ մեծ էր, և նորա կող-  
քին անգլիական նաւերը: Երբ ես երեմն մտարերում  
եմ, թէ ինչպէս էի երևակայում պատերազմը, թէ ես,  
իբր աղջիկ, ինչպէս էի պատկերացնում կոմս Էզմոնտին,  
երբ նորա մասին պատմում էին, և առհասարակ կոմսերի  
և իշխանների մասին, և ինչպէս հիմա է: (Քրակենքուրգը  
դալիս է). Է՛, Բնչ կայ:

ԲՐԱԿԵՆ. Ոչոք հասաւատ բան չըգիտէ: Ասում են  
Ֆրանդիայում նորերս խառնակութիւն է ծագել, իբրև  
թէ Ուեգէնտուհին վախենում է. որ նոյնն էլ ալստեղ  
չըտարածւի: Բերդը իխստ բանւած է: Դարպասներում  
քաղաքացիները բազմաթիւ են, ժողովուրդը վիստում է  
փողոցներում: Ես պէտք է շուտ ծերունի հօրս մօտ  
երթամ: (Իրմւ թէ ուզում է գնալ):

ԿԼԱՐԱ. Կերեամք էզուց: Ես պէտք է մի փոքր  
զուգւեմ: Հօրս եղբօրորդին գնալու է. իսկ ես արդէն  
չափազանց զազրալի եմ երեսում: Օգնեցէք ինձ մի վայր-  
կետն, մայր իմ.—այս գիրքը հետներդ առէք, Բրակեն-  
բուրգ, և ինձ համար էլի դրա նման մի պատմութիւն-  
բերէք:

ՄԱՅԹՐԸ. Գնաք բարով:

ԲՐԱԿ. (Չեռը մեկնելով): Զեր ձեռը:

ԿԼԱՐԱ. (Չեռը մերժելով): Երբ գուք նորից գաք...  
(մայր ու աշջիկ հեռանում են):

ԲՐԱԿ. (Միանալ): Ես վճռել էի ուզզակի հեռանալ  
նորից. Երբ նա ինձ ալդակէս է ընդունում և արձակում,  
կտաղելս է գալիս: Թշւառական: Միթէ հալբենիքիդ վի-

ճակը չէ շարժում սիրտգ, ոչ էլ աճող ապստամբու-  
թիւնը: Եւ քեզ համար միւնո՞նն է երկրացին թէ  
սպանիացին, կամ թէ ով է կառավարում և ումն է  
երաւունքը: Ես հօ աշակերտ ժամանակս մի ուրիշ տղայ  
էի: Երբ տրւում էր շարադրութիւն «Բրուտոսի ճառ  
լաղաք ազատութեան, ի վարժութիւն ճարտասանու-  
թեան»—միշտ հօ Փրիցն էր տռաջինը լինում. և տե-  
սուչն ասում էր. «Երանի միայն կարգին լինէր և ոչ  
ամեն ինչ խառն ու խուռն»: Ալն ժամանակ եռում ու  
զիսում էր մէջս. Հիմա քարշ եմ գալիս այն աղջկայ  
աչք ու ունքը պահելով: Ես հօ նորան չեմ կարող  
թողնել. նա հօ ինձ չէ կարող սիրել: Ա՛խ, ոչ.—նա—  
նա չէ կարող ինձ բոլորովին դէն ձգած լինել. ոչ բոլո-  
րովին, բայց կիսով չափ. և ոչի՞նչ: Էլ երկար տանել  
չեմ կարող: Ուրեմն ճշմարիտ է, ինչ որ բարեկամնե-  
րիցս մինը նորերս ականջումս ասաց, որ նա գիշերները  
ծտծուկ մէկ մարդու իւր մօտ է ընդունում, այն ինչ  
երեկոները միշտ ինձ քաղաքավարութեամբ տանից դուրս  
է քշում: Ոչ, ճշմարիտ չէ: Ալդ սուտ է, մի ամօթալի,  
մի զրպարտիչ սուտ: Կլարան նոյնքան անմեղ է, որքան  
ես անբախտ: Նա ինձ մերժել է և իւր սրտից դուրս  
ձգել:—Եւ ես պէտք է շարունակեմ այսպէս ասլրել:  
Չեմ տանիլ, չէ: Արդէն հայրենիքս ներքին երկպառա-  
կութիւնից տւելի է ալեկոծւում և ես կըմեռնեմ շոնդի  
հետ: Ես այս տանել չեմ կարող: Երբ փողը հնչում է,  
գնդակը ընկնում,—սարսուոր ոսկորս, ուղեղս է հա-  
նում: Ա՛խ, ալդ ինչ չէ գրաւում, ինձ չէ հրաւիրում  
նոյնպէս միասին ազատել, խիզախել: Թշւառ, խայտա-  
ռակ գրութիւն. լաւ է, որ միանգամից վերջացնեմ:  
Նորերս չուրն ընկայ, ընկզմւեցայ. բայց վախեցած բնու-  
թիւնը աւելի զօրեղ էր. ես զգացի, որ կարող էի լողալ  
և ազատեցի ինձ հակառակ կամքիս: Երանի կտրողա-

նալի մոռանալ այն ժամանակները, երբ նա ինձ սիրում էր, ըստ երևութին սիրում էր: Ինչու բախտը մինչև սոկորներս ու ուզեղս էր ժամանցել: Ինչու այս լուսերը լափեցին կեանքիս բոլոր վայելքը, մինչ ինձ մի դրախտ էին ցոյց տալիս հեռաց: Խոկ այն առաջին համբայրը, այն միակը: Ալստեղ, (ձեռքը սեղանին դնելով), ալստեղ էինք մենք միախակ - նա դէպ' ինձ միշտ քաղցր էր եղած - և ահա, կարծես ուզում էր զիջել - նա ինձ նայեց, խելքս ու միտքս տակն ու վրայ եղան, և ես զգացի նորա շրթունքը իմոնց վրայ: Եւ ալժմ - մեռիր թշւառական, թնչ ես դանդաղում: (Հանում է զրապանից մի սրւակ), Ես չեմ ուզում, որ եղբօրս բժշկական արկղից քեզ իզուր գողացած լինիմ, գուշ՝ փրկարար թոլն: Դու պէտք է այս իմ երկիւղը, թալուկը, մահւան քրտինքը միանդամից կլանես և լուծես:

ՎԱՐԱԳՈՅԻ:

## ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Հրապարակ Բրիւսսէլում

ՅԵՑՑԷՐ և ՄԻ ՀԻՒՆ հանդիպում են:

ՀԻՒՆՍ. Առաջուց չէ՞ ասում: Դեռ ուժ օր առաջ մեր համբարների ժողովում ասում էի, որ խառնակութիւն է լինելու:

ՅԵՑՑԷՐ. Ուրեմն ճշմարիտ է, որ նոքա ֆլանդրիայում եկեղեցիները կազմակերպել են:

ՀԻՒՆՍ. Բոլորովին հիմնալատակ են արել եկեղեցիներն ու մատուռները: Միայն չորս մերկ պատերն են կանգուն թողել: Լոկ ստահակների հրոսակներ են: Եւ այս փշացնում է մեր բարի գործը: Մենք պէտք է առաջուց կարգին ու անյօդդողդ մեր իրաւունքները իշխանուհուն ներկալացնէինք և նոցա վրայ պնդէինք: Եթէ հիմա խօսենք, հիմա ժողովւենք, կասեն՝ միանում ենք խռովարանների հետ:

ՅԵՑՑԷՐ. Ալո, սկզբում ամեն մարդ ալդպէս է մտածում. ալդպէս կը մտածէ: Ի՞նչ ես քիթդ առաջ ցցում, վիզդ էլ հօ հետը կերթալ:

ՀԻՒՆՍ. Ես սոսկում եմ, եթէ աղմուկը մի անգամ սկսւի ամբոխի մէջ, որը կորցնելու ոչինչ չունի: Նոքա պատրւակ են բռնելու ժողովրդի խռովութիւնը, այսինքն այն, ինչ որ մեզ ևս մեր պահանջ-

ների համար պէտք է հիմք ծառալէ, և երկիրը կը ձգեն  
դժբախտութեան մէջ: (Զօհորը առաջ է դալիս):

**ԶՕՀՍՅ.** Բարով, պարոններ: Ի՞նչ նոր բան կայ:  
ձշարթ է, որ պատկերամարտներն ուղղակի այս կողմն  
են ուղղում իրանց արշաւանքը:

**ՀԻՒՄՆ.** Պէտք է որ նոքա ալստեղ ոչ մի բանի  
չըդիպէն:

**ԶՕՀՍՅ.** Խանութս մի զինւոր մտաւ ծխախոտ գնե-  
լու, նրանից հարց ու փորձ արի: Ուկէնտուհին, ընա-  
յելով որ քաջ, խելօք կին է, այս անգամ բոլորովին  
իրան կորցրել է: Պէտք է որ բանը շատ վատ գնալիս  
լինի, որ նա արդպէս ուղղակի իւր թիկնապահների  
ետևն է թագնուում: Բերդը խիստ բռնւած է: Կարծում  
են մինչեւ անգամ, իրեւ թէ կամենում է քաղաքից ս  
փախչել:

**ՀԻՒՄՆ.** Նա չըպէտք է հեռանալ: Նորա ներկա-  
յութիւնը պաշտամանում է մեզ. և մենք նորան աւելի  
առաջովութիւն կը տանք, քան թէ իւր կարճամօրուա-  
ները: Իսկ եթէ նա մեր իրաւունքներն ու ազտու-  
թիւնը կանգուն պահէ, պատրաստենք նորան մեր ձեռ-  
ների վրաց ման ածել: (Ապոնագործը առաջ է դալիս):

**ՍԱԳՈՆԱԳՈՐԾ.** Զգւելի, անպիտան խոզվութիւն:  
Բաններս ձախ է: Աշխատեցէք հանդիս լինել, որ ձեզ  
էլ խառնակիչ չըհամարեն:

**ԶՕՀՍՅ.** Դու էլ քեզ մեծ իմաստուն ես կարծում:  
**ՍԱԳՈՆԱԳ.** Դիտեմ, ալստեղ շատերը կան, որոնք ծա-  
ծուկ կալինականների կողմն են, որոնք հայհոյում են  
եպիսկոպոսներին և թագաւորից չեն ակնածում: Բայց  
հաւատարիմ հպատակը անկեղծ կաթոլիկն է: (Ասմաց-  
կամաց մօրենում են ամեն դեսակի մարդիկ և ականջ դնում  
ֆանգէն առաջ է դալիս):

**ՓԱՆԶԵՆ.** Բարով, պարոններ. Ի՞նչ նորութիւն:

**ՀԻՒՄՆ.** Գորան միք մօտենալ, դա վատերի մէկն է:  
Յեջաջը. Գա գոքտոր վիետսի գրագիրը չէ:

**ՀԻՒՄՆ.** Նա արդէն շատատէրեր է փոխել: Սկզբում  
նա գրագիր էր. և, երբ մէկ պատրոն միւսի ետևից  
նորան խարդախութիւնների պատճառով տանից դուրս  
վոնդեցին, հիմա՝ առանց իրաւունքի, նոտարական և  
փասապանական գործերի մէջ է խցկում. և օղեծանի  
մէկն է: (Ժողովուրդն աւելանում ու խռնում է):

**ՓԱՆԶԵՆ.** Դուք էլ էք հաւաքւել: Գլուխ գլխի  
տւէք: Այդ մասին արժէ միշտ խօսել:

**ԶՕՀՍՅ.** Ես էլ եմ կարծում:

**ՓԱՆԶԵՆ.** Եթէ մենք ունենալինք այնպիսի մէկին,  
որ ունենար սիրտ, դորա հետ և գլուխ, կարող էինք  
սպանիական շղթաները միանգամից խորտակել:

**ԶՕՀՍՅ.** Ե՛տ, դուք չըպէտք է այդպէս խօսէք,  
մենք թագաւորին երգւել ենք:

**ՓԱՆԶԵՆ.** Թագաւորն էլ մեզ: Նկատեցէք այդ:  
Յեջաջը. Լաւ, գորանով ի՞նչ էք ուզում տաեր:  
ՈՒՄԱՅ. Լսիր, նա բան է հասկանում: Նա եօթը  
մաղից հացկերածն է:

**ՓԱՆԶԵՆ.** Ես մի ծեր պարոն ունէի. նոր ամենա-  
հին մագաղաթներ և թղթեր ունէր: Նա ունէր և ամե-  
նահազւագիւտ գրքեր: Մէկումը գրւած էր մեր ամրոջ  
սահմանադրութիւնը, թէ ինչպէս մենք — նիդերլ սնդ-  
ցիներս — սկզբում կառավարում էինք առանձին իշխան-  
ներով և ամեն ինչ աւանդական իրաւունքների, ար-  
տօնութիւնների և սովորութիւնների համեմատ. ինչ-  
պէս մեր նախնիները բոլորեքեան պատկառանք էին  
տածում գէպի իրանց իշխանները, եթէ նոքա կառա-  
վարում էին ինչպէս հարկն է. և թէ ինչ դէս նոքա  
իսկոյն առաջն տանում էին, երբ իշխանը կամենում էր  
սահմանից դուրս գտլ: Գտւառներն եւս իսկոյն մէջ էին

իւառնում, որսվհետև իւրաքանչիւր նահանգ, որքան էլ փոքր լինէր, ունէր իւր ինքնավար գաւառներն ու ներկալացուցիչ մարմինները:

Հիշում. Ուշխներդ հաւաք պահեցէք, այդ վազուց գիտենք: Ամէն մի օրինաւոր քաղաքացի, որքան նորան հարկաւոր է, ծանօթ է իւր երկրի սահմանադրութեան հետ:

ՅԵՅՅԵՐ. Թողէք խօսի. մարդ միշտ միքան աւել է սովորում:

ԶՈՒՄ. Բոլորովին իրաւացի է նորա ասածը:

ՇԱՏԵՐԸ. Պատմեցէք, պատմեցէք: Այդպիսի բան մարդ ամեն օր չէ լսում:

ՖԱՌՁԵՆ. Այդպէս էք դուք քաղաքացիներդ: Ապրում էք առանց վազւան մասին մտածելու, և ինչպէս որ ձեր արհեստը ձեր ծնողներից ստացել էք, այդպէս էլ թողնում էք, որ կառավարութիւնը ձեզ հետ վարուի ձեռից եկածի ու սրտի ուզածի պէս: Դուք չէք հարց նում — ոչ անցեալ, ոչ պատմութիւն, ոչ կառավարչի իրաւունք: Եւ ձեր աչքաթող անելովը՝ սպանացիներն իրանց ցանցի մէջ են ձգել ձեր գլուխները:

ԶՈՒՄ. Ովէ մտածում դորա մասին, եթէ միայն մարդ իւր օրական պարէնն ունի:

ՅԵՅՅԵՐ. Անիծեալ: Համա ինչու մէկը չէ դուրս գալիս իւր ժամանակին և մարդու այդպիսի բան առում:

ՖԱՌՁԵՆ. Ես այդ ասում եմ ձեզ հիմա: Իսպանիակ ժագաւորը, որը բախտի բերմամբ նահանգներն իւր իշխանութեան տակն է ժողովել, խօ չպէտք է ուրիշ տեսակ կառավարի, քան այն փոքրիկ իշխանները, որոնք երբեմն նոցա տիրում էին առանձին: Դուք այդ հասկանում էք:

ՅԵՅՅԵՐ. Այդ մէկ լաւ պատմեցէք:

ՓԱՌՁ. Այդ պարզ է, ինչպէս լուսը: Դուք ձեր

տեղական օրէնքներով չըպէտք է դատւեք: Հտափ ինչպէս պիտի լինի:

ՄԻ. ՔԱՂԱՔԱՑԻ. Խոկ որ:

ՓԱՌՁ. Բըիւսսէլցին Անտէրպէնցուց տարբեքը իրաւունքներ չունի: Հապա այդ ինչիցն է:

ԱՅԼ. ՔԱՂԱՔԱՑԻ. Աստւած վկայ:

ՓԱՌՁ. Բայց եթէ դուք թողնէք այդպէս շարունակւի, ձեզ հետ շուտով ուրիշ կերպ կը վարւեն: Թու. ինչ որ Կարլոս անվեհերը, ֆրիդրիկոս պատերազմողը, Կարլոս Վ-ը չէին կարողանում, հիմտ անում է ֆիլիպոսը մի կնոջ ձեռքով:

ԶՈՒՄ. Այս, այս. Հին իշխաններն ել են փորձել այդ:

ՓԱՌՁ. Ի հարկէ — մեր նախնիները ուշագիր էին: Հէնց որ նոքա մի իշխանի հետ թշնամանում էին, յափըշտակում էին, օրինակ, նորա որդուն և ժառանգին, պահում էին նորան իրանց մօտ, և ազատում էին միայն տմենաձեռնտու պալմաններով: Մեր հայրերը մարդէկ էին: Նոքա ճանաչում էին իրանց շահերը: Նոքա գիտէին մի բան սկսել և գլուխ բերել: Օրինաւոր տղամարդիկ: Հէնց գորա համար էլ մեր արտօնութիւններն այդպէս որոշ են, մեր իրաւունքներն այդպէս ապահովւած:

ՍԱՊՈՆԱԳ. Այդ բնէ իրաւունքների մասին էիք խօսում:

ԺՈՂՈՎՐԴԻ. Մեր իրաւունքների, մեր արտօնութիւնների մասին: Էլի պատմեցէք մեր արտօնութիւնների մասին:

ՓԱՌՁ. Թէև բոլոր նահանգների շահերն էլ ապահոված էին, բայց մասնաւորապէս մենք — Բրաբանցիներս — ամենասքանչելի իրաւունքների տէր էինք: Ես բոլորը կարդացել եմ:

ԶՕՀՍՑ. Առաջեւք, տեսնենք: ՅԵՑՑԵՐ. Պատմեցէք, լսենք: ՔԱՂԱՔԱՑԻ. Խնդրեմ: ՓԱՆՑԵՆ. Նախ դրած է: Բրաբանտի դուքսը պէտք է մեզ համոր բարի և հաւատարիմ տէլ լինի: ԶՕՀՍՑ. Լու. այդպէս գրւած է: ՅԵՑՑԵՐ. Իրաւ. ճշմարթ: ՓԱՆՑԵՆ. Հաւատացնում եմ ձեզ: Նա մեզ պարտաւորւած է, ինչպէս մենք նորան, Երկրորդ՝ նա ուղարտաւորւած է մեզ վրայ ոչ մի կամաժականութիւն, ոչ մի բռնութիւն գործ չըդնել, ոչ մի կերպ նկատել չըտալ կամ իրան թոյլ չըտալ մտքովն անգամ անցկացնել: ՅԵՑՑԵՐ. Գեղեցիկ, գեղեցիկ, գործ չըդնել: ԶՕՀՍՑ. Նկատել չըտալ: ՈՒՐԻՇԾԸ. Եւ չըթոյլ տալ իրան մտքովն անգամ անցկացնելու, այս է գլխաւոր կէտը: Ոչ ոքին չըթոյլ տալ, ոչ մի կերպ: ՓԱՆՑԵՆ. Բոլորովին պարզ ու որոշ բառերով ասած է ալսոլէս: ՅԵՑՑԵՐ. ծարիր մեզ համար այդ գիրքը: 1-ին ՔԱՂԱՔԱՑԻ. Ալո, մենք պէտք է ունենանք այդ գիրքը: ՈՒՐԻՇԾԸ. Գիրքը, գիրքը: 2-րդ ՔԱՂԱՔԱՑԻ. Մենք այդ գիրքն առած իշխանութեան մօտ կերթանք: 3-րդ ՔԱՂԱՔԱՑԻ. Խօսողը դուք պէտք է լինիք, պարոն դոկտոր: ՍԵՊՈՒԾՈՒՅ. Խեղ ողորմելիներ: ՈՒՐԻՇԾԸ. Ելի մի բան պատմեցէք այդ գրքից: ՍԵՊՈՒԾՈՒՅ. Նրա ատամները փորը կ'ածեմ, եթէ իլլի մի խօսք կ'ասէ: ԺՈՂՈՎՈՒՐԴ. Հասլա տեսնենք, թէ ով նրա վրայ

մտակը բարձրացնէ: Պատմեցէք մեզ, ուրիշ տրտօնութիւններ. էլ ունինք: ՓԱՆՑԵՆ. Զանազան արտօնութիւններ. շատ լուրը, շատ փրկարարները: Այստեղ գրւած է նոյնպէս երկրի իշխանը՝ տուանց ազնւականութեան և միւս գտասկարգերի համաձայնութեան, չըպէտք է փոփոխէ, կամ բազմացնէ հոգեսոր դասը: Նկատեցէք այս: Նոյն պէտք չըպէտք է փոփոխէ երկրի սահմանագրութիւնը ԶՕՀՍՑ. Այդպէս է: ՓԱՆՑԵՆ. Ես ցոյց կը տամ նոյն էսկ գիրքը՝ այն էլ երկու երեք հարիւր տարի առաջ գրւած: ՔԱՂԱՔԱՑԻ. Եւ մենք համբերում ենք նոր եպիսկոպոսներին: Ազնւականութիւնը պէտք է մեզ պաշտպանէ: ՄԵՆՔ խռովութիւն կակենք: ՄՐԻՒՄՆԵՐԸ. Եւ մենք թողնում ենք, որ հաւատաքննութեամբ մեզ վախեցնեն: ՓԱՆՑԵՆ. Այդ ձեր մեղն է: ԺՈՂՈՎՈՒՐԴ. Մենք ունինք գեռ էզմոնտ, գեռ Օրանացի ունինք. նոքա հոգս են տանում մեր բարեբառատութեան մասին: ՓԱՆՑԵՆ. Զեր Փլանդրիտցի եղբայրները բարի գործը սկսել են: ՍԵՊՈՒԾՈՒՅ. Նուն: (Հարւածում է նրան): ՈՒՐԻՇԾԸ. (Ընդիմադրում են և կանչում): Պուէլ ես խպանացի: ՈՒՐԻՇԾԸ. Այս ինչ է. պատուար մարդուն: ՈՒՐԻՇԾԸ. Գիտնականին: (Սապրեագործի վրայ են չարձակւում): ՀԻՒՄՆ. Իսէր Աստուծոյ. Հանգստացէք: (Սիւները մէջ են խառնուում), Քաղաքացիներ, այս ինչ է նցանակում: (Տաճերը տալում են, քարեր են նեփում, չներին քիթ, են գալիս, քաղաքացիները պէտպէլ կանգնած են, ամրախը

լունուռմ է, մի քանիսն անրարիեր աջ ու ձախ են դնում,  
միւսները զանազան խեղկադակութիւններ են անում, աշաղա-  
կում ցնծում):

ՈՒՐԻՇՆԵՐԸ. Կրաւունք և արտօնութիւն. արտօ-  
նութիւն և իրաւունք:

ԷԳՄՈՒՆԾ. (Վրնում է ուղեկիցներով): Հանգիստ, հան-  
գիստ, աղեք. ի՞նչ է պատահել. խաղաղութիւն. բա-  
ժանեցէք դոցա իրարից:

ՀԻՒՆԾ. Ողարմած տէր. դուք գալիս էք, ինչպէս  
երկնքի հրեշտակ: Խաղաղութիւն. ոչինչ չէք տեսնում,  
կոմս եգմոնտն է. զլուխ տւէք կոմս եգմոնտին:

ԷԳՄՈՒՆԾ. Այստեղ էլ: Ալդ ի՞նչ էք անում: Քա-  
ղաքացին քաղաքացու դէմ: Մինչև անգամ արքայազն  
էշխանուհու մերձակալութիւնն էլ չէ կարողանում այս  
անմտութեան առաջն առնել: Ցրւեցէք, գնացէք ձեր  
բանին: Ալդ մի վատ նշան է, որ դուք լուր օրերը տո-  
նում էք: Ի՞նչ էր պատահել: (Ամուկը կամաց-կամաց  
խաղացում է. բոլուեքիան հաւաքւում են նուա շուրջը):

ՀԻՒՆԾ. Նոքա ծեծում են իրանց արտօնութիւն-  
ների համար:

ԷԳՄՈՒՆԾ. Որը նոքա լետու թեթևամտութեամբ  
կոչնչացնեն: Եւ ովքեր էք դուք: Օրինաւոր մարդիկ  
էք երեսում:

ՀԻՒՆԾ. Ալդ մեր ձգտումն է:

ԷԳՄՈՒՆԾ. Ձեր տրհեստը:

ՀԻՒՆԾ. Հիւսն և հոմքարի գլխաւոր:

ԷԳՄՈՒՆԾ. Իսկ դուք:

ԶՈՒԾ. Մանրավաճու:

ԷԳՄՈՒՆԾ. Դուք:

ՅԵՑՑԲ. Դերձակ:

ԷԳՄՈՒՆԾ. Ցիշում եմ. դուք էլ իմ ծառաների հա-  
մար լիքրէներ կարողների մէջ էիք: Ձեր անունը Ցետ-  
տէլ է:

ՅԵՑՑԲ. Մեծ շնորհ է ինձ համար, որ լիշտում էք  
անունս:

ԷԳՄՈՒՆԾ. Ես հեշտ չեմ մոռանում ոչ ոքին, որին  
ես միանգամ տեսել և հետը խօսել եմ. ինչ որ ձեռ-  
ներիցդ գալիս է խաղաղութիւն պահպանելու համար,  
արեք, տղէք: Առանց այն էլ ձեզնից գանգատաւոր են:  
Թագաւորին այլ ևս միք գրգռիլ: Վերջապէս իշխանու-  
թիւնն էլ հօ նորա ձեռին է: Կարգին քաղաքացին, որն  
ազնւութեամբ և աշխատասիրութեամբ վաստակում է  
իւր պարէնը, ամեն տեղ ունի այնքան ազատութիւն,  
որքան հարկաւոր է:

ՀԻՒՆԾ. Ի հարկէ: Հէնց մեր ցաւն էլ ալդ է: Գո-  
ղերը, արբեցողները, դատարկապորտները, թող ներէ  
Զերդ ողորմածութիւնը համտրձակութեանս, ձանձրու-  
թիւնից խուզութիւններ են յարուցանում և քաղցից  
արտօնութիւնների ետևից են ընկել: Հետաքրքիրների  
և դիւրահաւանների առաջ զանազան ստեր են փչում  
և մի բաժակ գարեջուր վճարել տալու համար՝ սկսում  
են վէճեր, որոնք հագարաւոր մարդոց անբախտացնում  
են: Նոցա ուզածն էլ հէնց ալդ է: Մենք մեր տներն  
ու սնդուկները շատ զգուշութեամբ ենք պահպանում:  
Եթէ ոչ նոքա ուրախութեամբ կ'ուզէին կրակ ձգելով  
մեզ հալածել:

ԷԳՄՈՒՆԾ. Ամենայն օգնութիւն կը ստանաք: Զեռ-  
նարկւած են միջոցներ չարեքի առաջն աւնելու համար: Ամուր կացէք օտար վարդապետութեամն դէմ՝ և միք  
հաւատալ, թէ խառնակութիւններով կարելի է հաստա-  
տել արտօնութիւնները: Տանը մնացէք և միք թողնիլ,  
որ նոքա փողոցներում խմբւին: Խելացի մարդիկ շատ  
քան կարող են անել: (Ալդ միջոցին ամբոխն մեծ մասամբ  
արդէն ցրւել է):

ՀԻՒՆԾ. Նորիհակալ ենք, ձերդ գերտղութիւն,

շնորհակալութիւն լաւ կարծիքի համար: Ամէն բան կ'առ-  
նենք, ինչ որ մեզնից է կախւած: (Եգմոնտը զնում է) Հ-  
Ի՞նչ ողորմած տէրութիւն նիդէրլանդցի, իսպանական-  
ոցինչ չունի: Ան յասով յանձնեած նախայի ու  
ՅԵԺԵՐ, Երանինար լինէր մեր կան ավարիչը, նո-  
րան հաճութեամբ կը լսէինք: Այս յասում ու յանձնութիւնը  
ԶՈՒՄԸ. Թագուարն այդ հեշտութեամբ չի անիւ-  
Տեղը միշտ իրաններին է տալիս: Այս ոչ յա սաւութիւնը  
ՅԵԺԵՐ. Տեսար դու նորա հագուստը: Ամենանոր  
տարածի էր, իսպանական ձևով:  
ՀՈՒՄԸ. Ի՞նչ գեղեցիկ տղամարդ:  
ՅԵԺԵՐ. Նորա վիզը գէր պատառ կը լինէր գահձեւ  
համար: Գիտես, այդ լիմարը բանը որտեղից գըլէ?  
ԶՈՒՄԸ. Գիտես, այդ լիմարը բանը որտեղից գըլէ?  
Խիդ փշեց:  
ՅԵԺԵՐ. Բաւականին վիմար բան է, երբ մէկի գիտին այդականի բան է փչում: Ես այդպէս եմ միշտ: —  
Երբ մի սիրուն, երկայն վիզ եմ տեսնում, իսկայն ակամար մտածում եմ, «ինչ լաւ կը գլխատուի»: Անիծ-  
ւած գլխատութիւններ. մարդ չէ կարողանում մտքիցը հանել: Երբ տղէքը լողանում են և մի մերկ մէջք եմ: տեսնում իսկոյն միտս են գալիս տասնեւակներ, որոնց տեսել եմ, թէ ինչպէս ճիւղուններով գոցա հոգիները հանում էին: Հանդիսում է ինձ մի հաստափոր, կար-  
ծես թէ տեսնում եմ նորան արդէն ձողիւն անցրած, խօրովելիս: Գիշերները երազւմ ամբողջ մարմինս դոզ-  
գողում է: Մարդ մի ժամ ու բախութիւն չունի: Ամեն-  
գւաթրճութիւն, ամեն կատակ վազուց մոռացել եմ: Սյա-  
տարափելի պատկերները բեռնի պէս ցցւած են ուղե-  
զիս մէջ:

**ՏԵՍԱՐԱԿԻ** Բ.

Եպիմոնտի բնակլորանը 2222  
Տ և մաս զետեսայում զնի որ է առ ԱՅՀ.  
Հետք մը առաջ զգացնոց դպրավ այսուր ըմբաց  
ՔԱՐՑՈՒՂԵՐԱ (Թողնելով միտմելանի մոտ անձանդիսոր-  
տի և կանգնում): Այսքան ժամանակն չէ գալիս. իսկ ետո  
արդէն երկու ժամանէն, սպասում եմ զրիչը ձեռիս,  
ծուղթն առաջիս: Խոկ հէնց արաօր որքան կ'ուզէի շու-  
ռով հեռանալ: Կարծես ոտիս տակ ջեղջ լինի փուած:  
Նհամբերութիւնից հալւում եմ: «Մի ժամից այնտեղ  
զի՞ր» հրամայեց նա ինձ հեռանալուց առաջ. բայց  
ա չէ գտիս: Այնքան գործ կայ, որ մինչև կես գե-  
երը չեմ վերջացնիլ: Ի հարկէ երբեմն նա էլ. Ե մատ-  
սերի արանքով նայում, սակայն ես աւելի լաւ կը հա-  
մարէի, որ նա աւելի խիստ լինէր, բայց և սրաշետը  
ժամին մարգու ազատ լիովնէր: Կարելի էր լարմարւել  
ժամանակին: Ուեգենտուհու մօտից հիմա նա արդէն եր-  
կու ժամ է հեռացել է. ով գիտէ, ելիս ուժն է բռնել մ-  
ատապարհին:

ՀՀՄՌՆՑ. (Ներկ է մարտում) Խնցպէտ են գործերը:

ՔԱՐՑ. Ես պատրաստել եմ, և երեք սուրհանդակ  
պատում են:

ՀՀՄՌ. Երեւում է բաւականին շատ եմ ուշացել-  
գեմքդ թթւած է:

ՔԱՐՑ. Չեր հրամանները խելու վազուց եմ սպա-  
ռում. տհա թղթերը:

ՀՀՄՌ. Պոննա ելւիրան կը չարանալ վրան, երբ լսի,  
որ ես եմ Զեզ ուշացրել:

ՔԱՐՑ. Կատակ էք անում:

ՀՀՄՌՆՑ. Աչ. ոչ մի ժամացիլ, երեւում է, որ լաւ-

հաշակ ունիս: Նա սիրուն է: Իսկ ինձ համար շատ լաւ է, որ ամրոցում գու մի բարեկամուհի ունիս: Ի՞նչ են ասում նամակները:

ՔԱՐԾ. Նատ բան, բայց ուրախալի—շատ քիչ: ՀԴՅ. Լաւ է, որ մեր ուրախութիւնը տանն է և գրսից սպասելու կարիք չունինք: Նատ են եկած:

ՔԱՐԾ. Բաւականին, երեք սուրհանդակ էլ սպասում են:

ՀԴՅ. Դէ ասա. միմիայն ամենակարեռը:

ՔԱՐԾ. Բոլորն էլ կարևոր են: Այս անգամ մեր անձինք:

ՔԱՐԾ. Հարիւրապետ Բրէդա՞ն տեղեկացնում է, թէ ինչ է պատահել այնուհեան. Գէնտում ու նորա շրջակայքում, Խռովութիւնը մեծ մասամբ խաղաղւէլ է:

ՀԴՅ. Նա գրում է հարկաւ զանազան տգեղութիւնների և անմատութիւնների մասին:

ՔԱՐԾ. Այս, պատահում են:

ՀԴՅՈՒՌ. Ս.զատի՛ր ինձ գոցանից:

ՔԱՐԾ. Ելի վեցը ըսնւռն են, որոնք Ֆէրվիխում Ս. Աստւածտօմոր պատկերը պատռել են: Նա հարց. նում է, արդեօք նոցա էլ միւսների նման կախել տայ:

ՀԴՅ. Ես դադրել եմ, այնքան կախել եմ տւել:

Քող մէկ լու ծեծեն և արձակեն:

ՔԱՐԾ. Հետները երկու կին էլ կան. նոցա էլ պէտք է ծեծէ:

ՀԴՅ. Թող նոցա յանդիմանեն ու արձակեն:

ՔԱՐԾ. Բրէդա՞ի զինորներից մինը նրինկ անունով, կամենում է ամուսնանալ: Հարիւրապետը յոյս ունի, որ գուք նորան կը մերժէք: «Գնդի մէջ այնքան կին կայ՝ գրում է նա որ, եթէ շարժւելու լինինք, կը նմանանք, ոչ թէ զօրաչուի, այլ բոշաների խմբի»:

ՀԴՅ. Խորա սիրոյն այս անգամ իրաւունք եմ տա-

լիս: Նա մի ջահէլ սիրուն երիտասարդ է: Հեռանարուց առաջ նա աղաչելով խնդրում էր ինձ: Բայց այսուհետեւ թող էլ ոչոքին իրաւունք չըտրւի, թէւ շատ եմ ափառում, որ ստիպւած եմ ամենալաւ գւարճութիւնը մերժել այդ ողորմելիներին, որոնք առանց դորան էլ քիչ չեն տանջւել:

ՔԱՐԾ. Զեր մարդկանցից երկուսը—Սետէր և Հարու—մի պանդոկապետի աղջկայ հետ վատ խող են խաղացել: Խորան բոնել են առանձին, և աղջիկը չէ կարողացել իրան պաշտպանել նոցա դէմ:

ՀԴՅ. Եթէ պատուաւոր աղջիկ է, և նոքա բռնութիւն են գործ գրել, թող երեք օր վրայուվրայ ծեծէ ճիպոտով. իսկ եթէ կարողութեան տէր են, թող գրուէ նոցանից այնքան, որքան բաւական է աղջկանն օժիտ տալու:

ՔԱՐԾ. Օտար քարոզիչներից մինը կոսինէսով ծածուկ անցնելիս բոնւել է: Նա երդւում է, որ մտադիր է եղել անցնել ֆրանսիա: Ըստ հրամանի նա պէտք է գլուխտէր:

ՀԴՅ. Թող սուսուփուս նրան սահմանը հասցնեն և հաւատացնեն որ երկրորդ անգամ այգպէս չի ազատւիլ:

ՔԱՐԾ. Մէկ նամակ կայ Զեր բաժառուից: Գրում է, որ փողը սակաւ է ժողովւում. և դժւար թէ կարողանալ այս շարաթ ուղարկել պահանջած գումարը: Խռովութիւնն ամեն բանի մէջ ձգել է ամենամեծ խոռոշ շփոթութիւն:

ՀԴՅ. Փողը պէտք է ստացւի: Այդ իւր գործն է, թէ ինչպէս պէտք է ժողովէ:

ՔԱՐԾ. Նա ասում է, որ կարելի եղածը կ'անէ. և կամենում է վերջապէս Խռովոնդի դէմ, որը երկար ժամանակ Զեր պարտ է, գանգատաւել և նորան բանտարկել տուլ:

ԷՇՄ. Նա հօ խռոտացել է վճարել:  
ՔԱՐՑ. Վերջին անգամ ինքը նշանակեց տասնու-  
չորս օր ժամանակ:

ԷՇՄ. Թող էլի տասնուչորս օր ժամանակ տայ և  
այսուհետեւ կարսդ է նորա դեմ դարու սկսել:

ՔԱՐՑ. Նատ էլ լաւ էք անում: Զբանալու պատ-  
ճառը ոչ թէ չքաւորսթիւնն է, այլ չար կամքը: Ան-  
կամկած նա կը լրջանայ, երբ տեսնէ, որ դուք կատալ-  
չէք անում: Ապա ասում է բաժառառուն. — նա ուզում է  
այն ծեր զինւորներին, որքեալիքներին և մի քանի  
ուրիշներին, որոնց գուշք մարդասիրաբար թոշակ էիք  
կապել, կէս ամսով հասանելիքը կտրել, մինչեւ մի ելք  
գանելը: Թող իրանց ճարը տեսնեն:

ԷՇՄ. Ալդաեղ ինչ ճար տեսնելու բան կալ. ալզ  
մարդիկն ինձնից աւելի փողի կարիք ունին: Թող այդ  
ալդում թողնէ:

ՔԱՐՑ. Հապա, որտեզից էք հրամայում, որ նա  
փող ճարէ:

ԷՇՄ. Դորա մասին թող ինքը մտածէ: Նորան ար-  
դէն առաջին նամակումը գրւած է:

ՔԱՐՑ. Հենց նորա համար էլ անում է նա այդ  
առաջարկութիւնները:

ԷՇՄ. Դոքա բանի պէտք չեն: Թող մի ուրիշ ելք  
գտնէ: Թող այնպիսի առաջարկութիւններ անէ, որ  
ընդունելի լինին: Բայց նախ և առաջ թող փող ճարէ:

ՔԱՐՑ. Ես կոմս Օլիւալի նամակը նարից այնտեղ  
եմ գրել: Ներեցէք, որ գորա մասին ես ձեզ լիշեցնում  
եմ: Ալդ ծեր պարոնը ուրիշներից աւելի է արժանի  
մանրամասն պատասխանի: Դուք կամենում էիք նորան  
անձամբ գրել: Անկամած նա ձեզ սիրում է ինչպէս  
մի հալը:

ԷՇՄ. Ես չեմ հասնում: Նատ աւելի բաների մէջ

ինձ համար ամենաատելին է գրելը: Դու հատ լաւ  
կարողանում ես իմ ձեռքին նմանեցնել: Գրի՞ր իմ անու-  
նից: Ես սպասում եմ Օրանացուն: Ժամանակը չունիմ:  
Ես ինքս էլ կ'ուզէի, որ նորան իւր տարակուսանքների  
մասին մի լաւ, հանգստացնող բան գրէր:

ՔԱՐՑ. Սսացէք ինձ ձեր կտրծիքը մօտաւորապէս,  
ես արդէն պատասխանը կը շարադրեմ և Ձեզ կըներ-  
կայացնեմ: Այսպէս պէտք է գրւի, որ դատաստանի  
առաջ էլ ձեր ձեռքի տեղ անցկենայ:

ԷՇՄ. Տուր ինձ նամակը: (Թոուցիկ նակելով). Բարի,  
ազնիւ ծերուկ: Երիտասարդութեանդ ժամանակն էլ էիր  
ալդպէս շրջանկատ: Ոչ մի պատնէշի վրայ չես բարձ-  
րացել: Պատերազմի մէջ ետևն էիր մնում, ուր մնալու  
խորհուրդ է տալիս խելօքութիւնը: Ի՞նչ անկեղծ խնա-  
մատար: Նա ցանկանում է ինձ կեանք և բախտաւորու-  
թիւն և չէ հասկանում, որ արդէն մեռած է նա, ով  
իրան ապահովելու համար է տարրում: Գրի՞ր նորան,  
թող նա անհոգ լինի: Ես գործում եմ, ինպէս պարտա-  
ւոր եմ, իսկ զգուշանալ - ինքս արդէն գիտեմ: Դւր հե-  
ղինակութիւնը թող պալատում գործադրէ յօգուտ իմ  
և հաւաստի լինի անկեղծ շնորհակալութեանս:

ՔԱՐՑ. Ուրիշ ոչինչ. օ... նա աւելի է սպասում:

ԷՇՄ. Ել աւելի ինչ ասեմ: Ուզում ես երկարա-  
բան լինել, ալդ քո ձեռքին է: Հարցը միշտ միևնուն  
կէտի շուրջն է պտաւում: Ասում է, որ ես զւարթ եմ,  
իրերին նայում եմ թեթև աչքով, օրերս արագ են սա-  
հում - ալդ իմ բախտն է. և ես այդ չեմ վսիթի գերեզ-  
մանի կամարի ապահովութեան հետ: Խսպանական կեն-  
ցաղավարութեան ձեմ և ոչ մի արեան կաթիլ չունիմ  
երակներում, ոչ էլ ցանկութիւն ունիմ քայլերս վար-  
ժեցնելու պալատական նոր և շրջանկատ քայլանիշին:  
Ապրում եմ միմիտին ապրելու մասին մտածելու համար:

Ներկաւ բոպէն չըփայելեմ, որպէս զի ապագայիք մասին՝  
ապահով լինիմ. և այն էլ նորից տեղի-անտեղի հոգ-  
սերով մաշեմ:

ՔԱՐՏ. Խնդրում եմ, տէր, մի՛ք լինի այդպէս  
կոշտ ու կոպիտ դէպի այդ բարի մարդը: Ասացէք ինձ  
մի քաղցր խօսք, որն այն ազնիւ բարեկամին հանգըս-  
տացնէր: Տեսէք, ինչպէս հոգածու է, որքան նա քըն-  
քոյշ է շարժում Ձեզ:

ԷԴՄ. Սակայն հէնց միշտ այդ լարն է շարժում:  
Նա վազուց գիտէ, թէ որքան ատելի են ինձ խրատ-  
ները. նոքա միայն շփոթեցնում են մարդու, նոքա-  
ռչինչ չեն օգնում: Եւ եթէ ես մի լուսնոտ լինէի և  
մի տան տմենավտանգաւոր կտրի վրայ զբօսնելիս, բարե-  
կամական բան է՝ զգուշացնելու մտքով, անունս տալ,  
զարթեցնել ու սպանել: Թող ամեն բան իւր ուղին գնայ:  
Թող նա իրան պահպանէ:

ՔԱՐՏ. Ձեզ վայել չէ հոգս քաշել. բայց ով ձեզ  
ճանաչում է և սիրում...

ԷԳՄ. (Նամակին նակելով): Յիշում է նորից հին հէ-  
քիաթները, ինչ որ մենք մի երեկոյ ընկերական ու-  
րախ տրամադրութեան մէջ և գինու ազդեցութեան-  
տակ արել ու խօսել ենք. և թէ դոցանից ինչ հետե-  
ւանքներ և եզրակացութիւններ են հանել մարդիկ և  
ողջ տէրութեան մէջ տարածել: Մենք մեր ծառաների  
թէրերի վրայ կարել էինք տւել բոժոժներով գդակներ  
և միմոսի պարեգուաներ և այդ լիմար զարդարանքը լե-  
տոյ դարձրել էինք սլաքների մի կապոց, ևս աւելի վտան-  
գաւոր նշանակ բոլոր այն մարդոց համար, որոնք ու-  
զում են մեկնութիւն տալ, ուր որ մեկնելու ոչինչ չըկայ:   
Մենք այս ու այն գժութիւնները մի ուրախ վայրկե-  
նում լցանում ու ծնանում էինք: Մենք մեղաւոր ենք,  
որ ազնիւների մի ամբողջ խումբ՝ ազքատի պատկերով

և ինքնահնար մտկանուններով, թագաւորին լիչեցնում էր  
նորտ պարտաւորութիւնները ծաղրական հեջուութեամբ:  
Նատ լաւ. մենք մեղաւոր ենք. լետո՞յ: Բարեկենդանի  
խազը պետական դաւադրութիւն է: Պէտք է մեզ լան-  
դիմանեն այն կարձ, խալտանամուկ ցնցոտիների պատ-  
ճառով, որ մի երիտասարդական ոգի, մի թարմացած  
երեակալութիւն մեր կեանքի խեղճ մերկութեան վրայ  
է ձգում: Եթէ կեանքի վրայ չափազանց լուրջ նայենք,  
իսկապէս բնչ կայ նորանում: Եթէ առաւօտը մեզ նոր  
ուրախութիւնների համար չըզարթեցնէր և երեկոյեան  
ոչ մի ցանկութիւն չըմնար լուսալու — էլ արժէր հագ-  
նըւել, հանւել: Ալեգակն ինձ ալսօր միթէ նորա հա-  
մար է երեսում, որ խորհեմ, ինչ որ գուշակելի չէ —  
գալոց օրւայ բախտը: Ազատի՞ր ինձ այդ խորհգածու-  
թիւններից: Այդ մենք թողնենք աշակերտներին և պա-  
լատականներին: Թող նոքա ճարեն ու հանճարեն, թա-  
փառեն ու սողան, հասնեն, ինչին միայն կարող են  
հասնել, որսան, ինչ որ կարող են: Եթէ դու կարող  
ես այդ բոլորից մի բան օգտաել այնպէս, որ նա-  
մտկդ գրքի ծաւալ չստանալ — ես ոչինչ չունիմ տսելու:  
Բարի ծերունուն ամեն ինչ ծանրակշու է երեսում: Մի  
բարեկամ, որը երկար բռնել է մեր ձեռքը, աւելի ևս  
ամուր է սեղմում, երբ ուզում է բաց թողնել:

ՔԱՐՏ. Ներեցէք ինձ: Հետևակի գլուխը պտտաւմ  
է, երբ տեսնում է մէկին՝ ձի հեծած, փոթորկի նման-  
արշաւելիս:

ԷԳՄ. Երեխայ, երեխայ, ուրիշ ոչինչ: Ժամանակի  
արեգակնային ձիերը՝ ինչպէս անտեսանելի ոգիներից  
մտրակւած, մեր ճակատագրի թեթև կառքի հետ սլա-  
նում-անցնում են. իսկ մեզ միմիայն մնում է սանձն  
ամուր բռնել, երբեմն աջ, երբեմն ձախ, ալստեղ քա-  
րից, ալնտեղ անկումից տնիւը հեռու թեքել: Թէ ուր է

գնում, ով գիտէ ալդ: Նա հազիւ լիշում է, թէ որտեղից էր գալիս:

ՔԱՐՏ. Տէր իմ, տէր:

ՀԴՄ. Ես բարձր եմ կանգնած. բայց կարող եմ և պէտք է էլ տւելի բարձրանամ: Ես զգում եմ մէջս լուս, քաջութիւն, ոյժ: Ես գեռ աճման գագաթնակէտին չեմ հասած. իսկ երբ միանգամ վերը կանգնեմ, ապա կը կանգնեմ ամուր և աներկիւդ: Եթէ վճռւած է ինձ ընկնել՝ թող կալծակը, փոթորիկը, ալմ, մինչև անգամ մի սխալ քայլ ինձ անդունդը դլորի. այնտեղ ես կընկնեմ շատ հազարների հետ: Ես երբէք չեմ արհամարհած իմ բարի զինակիցների հետ մի փոքրիկ շահի համար անգամ արիւնաբոյը վիճակը ձգել. և ես պէտք է հիմա վախենամ, երբ հարցը ազտառութեան—կեանքի ալդ ամենաթանկագին պարզեի մասին է:

ՔԱՐՏ. Ո՛հ, տէր իմ: Դուք չգիտէք, ինչ խօսքեր էք արտասանում: Աստւած Ձեզ պահպանէ:

ՀԴՄ. Թղթերդ հաւաքիր: Օրանացին գալիս է: Պատրաստիր, ինչ որ ամենակարևորն է, որ սուրհանգակները մեկնեն մինչև դարպասների փակւիլը: Միւսների համար գեռ ժամանակ կայ: Կամսի հասցէին նամակը թող մնայ մինչև առաւօտ: Չ'մոռանաս էլւիրալին ալցելելու և նորան իմ կողմից բարեկ'ր: Տեղեկացիր, ինչպէս է ոէգէնտուհին: Ասում են՝ լաւ չէ. թէև ալդ նա ծածկում է: (Դրազիրը հեռանում է, մրնում է Օրանացին). Բարեւ, Օրանացի: Մի փոքր անհամարձակ էք երևում:

ՕՐԱՆԱՑԻ. Ի՞նչ կ'ասէք ոէգէնտուհու հետ ունեցած մեր խօսակցութեան մտսին:

ՀԴՄ. Ես գտալ, որ նա մեզ ընդունեց ըստ իւր սովորութեան. արտասովոր ոչինչ չըկար: Ես նորան

ալդպէս շատ եմ տեսած: Ինձ երևաց նա ոչ-բռլովին առողջ:

ՕՐԱՆԱՑԻ. Դուք նկատեցք, որ նա սովորականից աւելի չափաւոր էր: Դեռ ուզում էր ամբոխի ապստամբութեան վերաբերեալ մեր վարմունքին անխռով հաւանութիւն տալ. բայց երբ նկատեց, թէ ինչ սխալ մեկնութիւն կարելի է տալ այդ բանին, խօսքը փոխելով՝ անցաւ իւր հին ժառանգութեանը—թէ իւր սիրալիր և բարի վարմունքը, իւր բարեկամութիւնը դէպի մեզ— Նիդէրլանդցիներս, երբէք լաւ չեն ճանաչւած, շատ թե, թեւակի են գնահատւած, թէ ոչ մի բան ըղձալի ելք չէ ունենում. թէ վերջապէս համբերութիւնը կորցրել է, և թէ թագաւորը ստիպւած կը լինի ուրիշ միջոցների դիմելու: Լսեցիք այս:

ՀԴՄ. Ո՛չ բոլորը. ալդ միջոցին մի ուրիշ բանի վրայ էի մտածում: Նա մի կին է, բարի Օրանացի: Իսկ որովհետեւ նոքա խաղաղ բնաւորութեան տէր են, ուստի միշտ կուգէին, որ ամէն ինչ անխռով ձկւէր նոցամեղմ լծի տակ, որ իւրաքանչիւր Հերկուլէս առիւծի մորթին գէն ձգէր և նոցա ստորին պալատականների թիւն աւելցնէր: Որովհետեւ նոքա խաղաղասէր են, կուգէին, որ ամբողջ ժողովրդի յուզմունքը և զօրեղ ախոյեանների իրար գէմ լարուցած փոթորիկը մի քաղցր խօսքով մեղմանային և որ ամենահակառակ տարրերը նորա ստների մօտ խաղաղ համերաշխութեամբ միանալին: Բայց որովհետեւ ալդ չէ կարսղանում աջողյնել, ապա էլ ուրիշ ճար չունի, ուստի գարձել է քմահաճ. գանգտառում է երախտամոռութեան և անիմաստութեան գէմ. սպառնում է ապագայում լինելիք սարսափելի հետևանքներով. նաև սպառնում է, որ ինքը կը հեռանալ:

ՕՐԱՆԱՑԻ. Դորան էլ չէք հաւատում, որ իւր սպառնալիքը կ'իրագործէ:

ՀԳՄ. Երբէք: Քանի քանի անգամ եմ տեսել նորան պատրաստ ճանապարհ ընկնելու: Արդեօք ուր է ուզում գնալ: Այստեղ նա փոխարքայ է, թագուհի. հաւատում ես, որ նորան կըզբաղեցնէր իւր եղբօր պալատում աննշան օրերը թել մանելով անցկացնել, կամ կատալիս գնալ և հին ընտանեկան յարաբերութիւնների մէջ մնացած օրերը քարշ տալ:

ՕՐԱՆԱՑԻ. Նորան այդ վճիռների համար ընդունակ էք համարում, որովհետեւ դուք տեսել էք նորան դանդաղելիս, որովհետեւ նորան տեսել էք ետ կանգնելիս. բայց և այնպէս նորանում այդ բանը կայ: Նոր հանգամանքները մղում են նորան դէպի երկար ժամանակ ուշացրած վճիռը: Իսկ եթէ նա գնա՞ր և թագաւորն ուղարկէր մի ուրիշն:

ՀԳՄ. Ի՞նչ. նա կըգար և նոյնը կ'անէր: Նա կը գար մեծ նախագծերով ու մտքերով, որ ամէն ինչ վարէ, նւաճէ և միասին պահէ. սակայն այսօր այս չնչին բանով, վաղը մի ուրիշով կզբաղւէր, ելօր մի արգելք կը գտնէր, մէկ ամիս ծրագիրներով կ'անցկացնէր, միւս ամիսը —ի գերեւ ելած ձեռնարկութեան վրայ դժկամակելով. մի ամբողջ կիսամետակ կ'անցկացնէր հոդուերի մէջ միմիայն մի նահանգի համար: Նորա համար տարին կ'անցնի, գլուխը կըպտտի իրերը առաջւայ պէս կըպահպանեն իրանց ընթացքը. այնպէս որ փոխանակ ըստ նախագծած շաւղի դէպի լայն ծովը նաւազարելու, թող Աստուծուց շնորհակալինի, եթէ այս փոթորկի ժամանակ նույը ժայռից ազատէ:

ՕՐԱՆ. Եթէ թագաւորին խորհուրդ տալին նոր փորձ անելու:

ՀԳՄ. Օրինակ:

ՕՐԱՆ. Տեսնելու, թէ ինչ կ'անէր բունն առանց դլիսի:

ՀԳՄ. Ինչպէս:

ՕՐԱՆ. Եգմոնտ, շատ տարիներից ի վեր կրում եմ սրտումս մեր բոլոր հանգամանքները, ես շախմատ խաղողի նման եմ. և հակառակորդի ոչ մի քայլը աննշան չեմ համարում: Ինչպէս որ պարապ մարդիկ ամենամեծ խնամքով չարչարում են բնութեան գաղտնիքների վրայ, ես էլ այնպէս՝ ամէն մի իշխանի պարագն ու կոչումն եմ համարում — բոլոր կուսակցութիւնների մտածութիւններն ու խորհրդածութիւնները ճանաչել: Ես պատճառ ունիմ վախենալու գժտութիւնից: Թագաւորը երկար ժամանակ գործում է որոշեալ սկզբունքների համեմատ. նա տեսնում է, որ գորանով չէ հասնում նպատակին, գորանից էլ հաւաքան ինչ կայ, որ նա այդ բանը մի ուրիշ ճանապարհով փորձէ:

ՀԳՄ. Զեօ կարծում: Երբ մարդս ծերանում է և այնքան փորձելուց յետոյ աշխարհս էլլի չի ուզում կարգի ընկնել, վերջապէս նա պէտք է ձեռք վերցնի:

ՕՐԱՆԱՑԻ. Մի բան նա գեռ չէ փորձել:

ՀԳՄ. Այսինքն:

ՕՐԱՆԱՑԻ. Փողովրդին խնայել, իսկ իշխաններին ոչնչացնել:

ՀԳՄ. Քանիսն են արդէն մտածել այդ անելու, բայց վախեցել են: Դա հոգս չէ:

ՕՐԱՆ. Առաջ հոգս էր. կամաց-կամաց հաւանականութիւն, վերջապէս ինձ համար համոզումն է դարձել:

ՀԳՄ. Միթէ թագաւորը մեզնից աւելի հաւատարիմ ծառաներ ունի:

ՕՐԱՆ. Մենք նորան ծառայում ենք մեր ձեռվ: Եւ, խօսքը մեր մէջ մնայ, լաւ կշռել գիտենք թագաւորի իրաւունքները և մերը:

ՀԳՄ. Բայց ով չէ այդպէս անում: Մենք նորան հպատակ ենք և տալիս ենք զկայսերն կայսեր:

ՕՐԱՆԱԾԻ. Իսկ եթէ նա իրան աւելի իրաւունք վերագրէ և համարէ այն անհաւատարմութիւն, ինչ որ ժենք համարում ենք մեր իրաւունքների սահման:

ՀԳՄ. Մենք կարող ենք մեզ սաշտապանել: Թողկանչէ Ոսկեղմի բոլոր ասպետներին միասին, թողնոքա մեզ դատեն:

ՕՐԱՆ. Իսկ եթէ վճիռը տրւէր հարցաքննութիւնից առաջ և պատիժը դատավճառից առաջ:

ՀԳՄ. Այդ կը լինէր մի անարդարութիւն, որով Փիլիպոս իրան երբէք չի արատաւորիլ, և մի անմը տութիւն, սրին ես ընդունակ չեմ կարծում ոչ նորան և ոչ նորա խորհրդականներին:

ՕՐԱՆ. Լաւ. բայց եթէ նոքա անարդար և անմիտ լինին:

ՀԳՄ. Աչ, Օրանացի, այդ անկարելի է: Ո՞վ պէտք է համարձակւէր մեզ վրայ ձեռք բարձրացնել: Մեզ ձերբակալելը կը լինէր մի զուր և անպատուղ ձեռնարկութիւն: Աչ, նոքա չեն յաւակնել բռնաբարութեան դրօւալդքան բարձրացնել: Այն հողմը, որն այդ լուրը կը տարածէր ամբողջ երկրում, մի սարսափելի հրդեհ կը բորբածէր ամբողջ երկրում, և ասրսափելի հրդեհ կը բորբածէր: Եւ մտքերն ինչ է: Դատել և դատապարտել բոքէր: Եւ մտքերն ինչ է: Դատել և դատապարտել բութագորը չէ կարող մեն-մենակ: Իսկ նոքա միթէ կութագորը մարդասպան լինել մեր անձին: Նոքա այդ չեն կարող զէին մարդասպան լինել մեր անձին: Նոքա այդ չեն կարող կամենալ: Մի սարսափելի գաշն կարող էր ժողովրդին մի գայրենում միացնել: Եւ բռնի երազով կը հրատարակւէր մի սարսափելի և յաւիտենական բաժանումն իսպանական անունից:

ՕՐԱՆ. Այն ժամանս կ բոցը կը լափլիքէր մեր շերիմները և մեր թշնամիների արիւնը կը հոսէր իըրեւութեան անմեղ զոհ: Թող մտածենք, Եգմանտ:

ՀԳՄ. Բայց նոքա ինչպէս ոլէտք է անէին այդ ամէնը:

ՕՐԱՆ. Ալլան ճանապարհին է:  
ՀԳՄ. Չեմ հաւատում:  
ՕՐԱՆ. Ես գիտեմ:  
ՀԳՄ. Ուկէնտուհին այդ մասին լսել անգամ չէր ուզում:

ՕՐԱՆ. Եւ նոյնքան աւելի եմ համոզւած: Ուկէնտուհին նորան կը զիջէ իւր տեղը: Նորա արիւնութեանութիւնը ես ճանաչում եմ: Նա հետը զօրք է բերում:

ՀԳՄ. Նահանգները նորից ծանրաբեռնելու: Ժողովուրդը ծալբայեղ նեղութեան մէջ կ'ընկնի:

ՕՐԱՆ. Նոքա իրանց կ'ապահովցնեն ժողովրդի առաջնորդներից:

ՀԳՄ. Աչ, ոչ:

ՕՐԱՆ. Գնանք իւրաքանչիւրս մեր նահանգը: Այնտեղ տմբանանք. Նա իւր գործը ակնյալանի բռնութեամբ չի սկսիլ:

ՀԳՄ. Զըպէտքէ ողջունենք նորան, երբ գալ:

ՕՐԱՆ. Մենք կը դանդաղենք:

ՀԳՄ. Իսկ եթէ նա իւր գալստեանը մեզ պահանջէ յանուն թագաւորի:

ՕՐԱՆ. Պատրւակներ կ'որոնենք:

ՀԳՄ. Եթէ նա պնդէ:

ՕՐԱՆ. Ներողութիւն կ'ըխնդրենք:

ՀԳՄ. Եթէ նա իւր տածին հաստատ մնալ:

ՕՐԱՆ. Եւս առաւել չենք գալ:

ՀԳՄ. Եւ կուրը հրատարակած է և մենք ապատամբներ ենք: Օրանացի, թող խելօքութիւնդ քեզ չըդայթակեցնէ: Ես գիտեմ, որ երկիւղը չէ կարող քեզ լիտ կանգնեցնել: Կշռագատիքը քայլերդ:

ՕՐԱՆ. Ես կը աղատել եմ:

ՀԳՄ. Մտածիր, թէ ինչ բանի համար պատասխանատու կլինիս: Մի աւերիչ կուրի համար, որը երբ

և է մի երկիր ամայացրել է։ Քո մերժումն մի նշան կ'լինի, որը նահանգները միանգտմից զէնքի կը կանչէ և որը կարդարացնէ ամէն մի բարբարոսութիւն, որի համար Խոպանիան վազուց սիրով մի պատրւակ է որոնում։ Ինչ որ մենք չարչարանքով վազուց հանգստացրել ենք, դու մի վարկեանում կը գրգռես գէպի սարսափելի խառնակութիւն։ Մտածի՛ր քաղաքների, ազնւականութեան, ժողովրդի, վաճառականութեան, երկրագործութեան, արհեստների մասին։ և երեակայի՛ր այն աւերտումները, սպանութի՛ւնը։ Զինորը սառնասրտութեամբ տեսնում է դաշտում իւր կողքին ընկերոցն ընկնելիս։ Բայց այնպէս քո հանդէպ կը լողան գետն ի վայր քաղաքացիների, երեխաների, կոյսերի դիակները, որ դու զարհուրանքով սառած կը մնաս և այլ ես չես գետենալ, ում իրաւունքներն ես պաշտպանում, քանի որ կործանում են նոքա, որոնց ազատութեան համար դու զէնք ես բարձրացնում։ Եւ ինչ կը լինի քո դրութիւնը, երբ ինքդ քո մէջ պէտք է խոստովանես։ «Իմ ապահովութեան համար զոհեցի նոցա»։

ՕՐԱՆ. Մենք մասնաւոր մարդիկ չենք, Եգմոնտ Եթէ մեզ վայել է մեր անձը նւիրել հազարին, ապա վայել է այն հազարի համար մեզ նոյնպէս և' խնայել։ ՀԴՄ. Ով իրան խնայում է, պէտք է ինքն իր աշխատ կառկածելի դառնալ։

ՕՐԱՆ. Ով իրան ճանաչում է, կարող է ապահով կերպով թէ առաջ գնալ, թէ նահանջել։

ՀԴՄ. Չարիքը, որից վախենում ես, քո վարմունքով կ'իրականանալ։

ՕՐԱՆ. Խոհեմի և քաջի բան է—անխուսափելի չարիքի առաջը գնալ։

ՀԴՄ. Ալսպիսի մի վտանգի ժամանակ թեթև լոյսն էլ հաշւի է առնուում։

ՕՐԱՆ. Մենք ամենաթեթև քայլի համար անգամ էլ տեղ չունինք։ Ուղիղ անդնդի գլխին ենք։

ՀԴՄ. Թագաւորի բարեհաճութիւնը միթէ այդքան նեղ շաւիդ է։

ՕՐԱՆ. Այնքան նեղ չէ, բայց լարծուն։

ՀԴՄ. Աստւած վկայ, անիրաւացի են վարւում թագաւորի դէմ։ Տանել չեմ կարող, երբ նորա մասին անարժանօրէն են մտածում։ Նա Կարլոսի որդին է և ոչ մի ստորութեան ընդունակ։

ՕՐԱՆ. Թագաւորներն ստոր ոչինչ չեն անում։

ՀԴՄ. Պէտք էր նորան լաւ ձանաչել։

ՕՐԱՆ. Հենց այդ ճանաչողութիւնն է մեզ խորհուրդ տալիս մի վտանգաւոր փորձի չսպասել։

ՀԴՄ. Վտանգաւոր չէ ոչ մի փորձ, որի համար մարդս քաջութիւն ունի։

ՕՐԱՆ. Դու տաքանում ես, Եգմոնտ։

ՀԴՄ. Ես պէտքէ իմ աչքերով տեսնեմ։

ՕՐԱՆ. Ո՞հ, երանի ալս անդամ տեսնէիր իմ աչքերով։ Բարեկամս, որովհետեւ աչքերդ բաց ես արել։ կարծում ես, թէ տեսնում ես։ Ես գնում եմ. դու մնացիր Ալբայի գալստեան և Աստւած քեզ հետ։ Գուցէ իմ մերժումն քեզ ազատէ։ Գուցէ վիշապը ոչինչ բռնած չըհամարէ, եթէ մեզ երկուսիս միատեղ և միանգամից չըկլանէ։ Գուցէ դանդաղի, որպէս զի իւր ձեռնարկութիւնն աւելի ապահով գլուխ բերէ, և գուցէ այդ միջոցին իրերն իրանց իսկական գոյնով տեսնես։ Բայց այն ժամանակ շնուր, շնուր. տղատի՛ր, ազատի՛ր քեզ։ Մնաս բարեւ։ Թո՞ղ ուշադրութիւնիցդ ոչինչ չըխուսափի—թէ որքան զօրք է բերում հետը, ինչպէս է քաղաքը գրաւում, ինչ իշխանութիւն է իրան վերապահում ռէգէնտուհին, ինչպէս են տրամադրւած բարեկամներն—ինձ ռեղեկութիւն տաս, Եգմոնտ։

ՕՐԱՅԻ ՅՈՐԱ ՃԱՌԸ ԲՐԱԽԱԼԵՎՈՒ, ՀԱՅԱՎԵԼ ԻՆ Ա  
ԷԳԵՅՈՒ. Այս ԲՆԱ է: ԱՐՄԱՍՈՆՔ, ՕՐԱՆԱԳԻ:

ՕՐԱԾ. Լալ կորածին—այս էլ տղամարդութիւն է:  
Է՞՞Ո՞Ռ. Դու ինձ կօրած, ես համարում:

ՕՐԱՆ. Դու կորած ես: Լաւ մտածիր: Քեզ շատ  
է Ժամանակ է մնում: Մնան բարեւ: (Գնում է).

*Հիմնական սուբյեկտիվ մտքերը մեզ վրայ էին հաջողական առաջարկ կատարում:*

ՀԳՒ'. (Սիանակ). Որ ուրիշների մտքերը մեզ վրայ այդպիսի ազգեցութիւն ունին—երբէք մտքովն չէր անցած։ Եւ այդ մարդը ներջնչեց իմ մէջ իւր հոգածութիւնը։ Հեռու... Այդ մի օտար կաթիւ է իմ արեան մէջ։ Բարի՛ բնաւորութիւն, դուրս ձգիր նորան արիւնիցս։ Բայց իմ ճակատից մտածութեան կնճիւները սըսընկու համար հօ կայ զեռ մի քաղցը միջոց։

## ՎԱՐԱԳՈՅՑ

## ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԻՒՆ

### *U. STEUERU*

## ԱԵԳԻՆԹՈՒՆ պայման

ՄԱՐԳԱՐԻՏ Պարմացի. ապա ՄԱՐԳԻԱԼԵԱ

ՄԱՐԴԱՐԻԾ. (Միանակ): Ես պէտք է այս գուշակած լինեի: Հա, երբ մարդ օքերն անց է կացնում նեղութեան և աշխատութեան մէջ, կարծում է թէ ամեն բան անում է, ինչ որ միայն հնարաւոր է. իսկ ով հեռ-փց է նախում ու հրամայում, կարծում է՝ թէ միմիայն այն է պահանջում, ինչ որ միայն կարելի է: Ահ, թա-գաւորներ: Երբէք չէի կարող երեւականել, թէ իշխելը կարող է ինձ ալգալիսի տհաճութիւն պատճառել: Ի՞նչ հիանալի բան է իշխելը, բայց հրամարւիլը:—Ես չեմ հասկանում, թէ հայրս ինչպէս էր կարող ալդ անել, բայց ես էլ նոյնն եմ կամենում: (Մաքիաւելլը երեսում է քեմի խորքում): Մօտ եկէք, Մաքիաւելլ, ես մտածում եմ եզրօրիցս ստացած նամակի վրայ:

ՄԱՔԻԱՀԵԼ. Իրանունք կը տաք ինձ իմանալու,  
թէ ինչ է ըսվանդակաթիւնը:

ՄԱՐԴԱՐԻՑ. Այնքան քննուց ուշադրութիւն գեպի  
ինձ, որքան խնամք իւր նահանգների համար։ Նա գո-  
վում է այն անյօդողդութիւնը, ջանքն ու հաւատար-  
մութիւնը, որոնցով ես այս երկիրներում նորին մեծու-

Թեան իրաւունքների վրայ հսկել եմ մինչև օրս։ Նա ցաւում է, որ այս անսանձ ժողովուրդն այնքան հոգսեր է պատճառում ինձ։ Նա այնպէս հաստատ համոզւած է իմ խորագիտութեանը և այնչափ գոհ իմ խելօք վարւեցողութիւնից, որ ես համարեա պէտք է ասեմ։—նամակն իբրև թագաւորի գրած, շատ է սիրուն, իբր եղբօր —ևս առաւել։

ՄԱՅԻՍԻ ԱՀԵԼԼ. Այս առաջին անգամը չէ, որ նա արտայայտում է ձեզ իւր իրաւացի գոհութիւնը։

ՄԱՐԴ. Բայց առաջին անգամն է գրւածի այս ճարտասական ձեզ։

ՄԱՅԻՍԻ ԱՀԵԼԼ. Ես ձեզ չեմ հասկանում։

ՄԱՐԴ. Կը հասկանաք։ Այս ներածութիւնից յետոյ ասում է նա։—Որովհետեւ առանց զինւորների, առանց գետ փոքր զօրքի այստեղ ես միշտ մի տիսուր դեռ պէտք է խաղամ, ուստի անիրաւացի վարւած կը լինինք, եթէ՝ բնակիչների գանգատին ուշադրութիւն դարձնելով, մեր զօրքը դուրս հանենք գաւառներից։ Մի պահապան զօրք, որը քաղաքացիների մէջքին կը ծանրանայ՝ նորա ասելով, կ'արգելէ նոցա այդ ծանրութեան տակ մեծ թուչքներ գործելու։

ՄԱՅԻՍԻ ԱՀԵԼԼ. Այդ նոցա չափազանց կը գրգուէր։

ՄԱՐԴ. Սակայն թագաւորն այդպէս է կարծում, լսում ես։ Նա կարծում է, որ մի արի զօրավար, մի այնպիսին, որը բնաւ ոչ մի պատճառաբանութիւն չէ ընդունում, կարող կը լինի ժողովրդի, ազնւականութեան, քաղաքացիների ու գիւղացիների հետ շատ շուտ վերջացնել։ և այդ պատճառով բազմաթիւ զօրքով ուղարկում է նա դուքս Ալբալին։

ՄԱՅԻՍԻ ԱՀԵԼԼ. Ալբալին։

ՄԱՐԴ. Պու գալմանում ես։

ՄԱՅԻՍԻ ԱՀԵԼԼ. Պուք ասում էք. ճառ ուղարկում է։ Նա, երեխ, հարցնում է, արգեօք ուղարկէ։

ՄԱՐԴ. Թագաւորը չէ հարցնում։ Նա ուղարկում է։ ՄԱՅԻՍԻ ԱՀԵԼԼ. Ուրեմն մի փորձւած զինւոր կ'ունենաք ջեր ձեռքի տակ։

ՄԱՐԴ. Իմ ձեռքի տակ։ Եիտակ խօսիր, Մաքիաւելլ։ ՄԱՅԻՍԻ. Ես չէի ուղենալ Զեզնից առաջ ընկնել։

ՄԱՐԴ. Բայց ես կ'ուղենալի կեղծել։ Այդ ինձ համար զգալի է, շատ զգալի։ Ես սիրով կ'ուղէի, որ եղբայրս ասէր, թէ ինչ է մտածում, քան թէ ստորագրէր այն ձևական նամակներին, որ մի գիւնադպիր գրում է։

ՄԱՅԻՍԻ ԱՀԵԼԼ. Միթէ չըպէտք նկատէին, որ...

ՄԱՐԴ. Ես նոցա ճանաչում եմ տակւէ տակ։ Նոքա սիրով կըցանկալին, որ ամենը լաւ սրբած ու աւլած լինէր, և որովհետեւ իրանք անձամբ չեն ձեռնարկում, ուստի վստահութիւն է գտնում ամեն ոք, ով գալիս է աւելը ձեռին։ Ո՛հ, ինձ այնպէս է թւում, որ կարծես թէ տեսնում լինիմ թագաւորին և նորա խորհուրդը այն գորգի վրայ գործելիս։

ՄԱՅԻՍԻ ԱՀԵԼԼ. Այդպէս կենդանի։

ՄԱՐԴ. Ոչ մի գիծ չըկայ պակաս։ Նոցա մէջ բարի մարգիկ կան։ Ազնիւ Ռոգրիսը, որը այնպէս փորձւած և չափաւոր է, որ ոչ չափազանց բարձրին է ձըդտում, ոչ էլ իւր աստիճանից մի մազաշափ լինում։ Չիտակ Ալբանցո՞ն, աշխատանէր Ֆրէնէդա՞ն, հաստատամիտ Լաս-Վարդասը և էլի մի քանիսը, որոնք միշտ հետն են գնում, երբ լաւ կուսակցութիւնը զօրեղանում է։ Բայց ահա նստած է և խորակն Տոլէդացին երկաթէ ճակատով և հրացայտ աչքերով։ Նա բարեանջում է կանանց թուլութեան, նոցա վաղաժամ զիջողութեան մասին, թէ կանալք թէև վարժ ձիերի վրայ լաւ վազում են, բայց

իրանք շատ վատ վատ ձիավարժներ են, և նման կատակներ, որ ես երբեմն ստիպւած էի լսել քաղաքագիտ պարոններից:

**ՄԱՔԻԱՀԵԼԼ.** Նկարի համար ներկերի լաւ անօթէք ընտրել:

**ՄԱՐԴ.** Միայն թէ խոստովանեցէք, Մաքիաւելլ, որ իմ ամբողջ ստւերատրութեան մէջ, որով ես երբեէ կարող էի նկարել, ոչ մի երանդ այնպէս գորշդեղին և այնքան սեղեղի չէ, ինչպէս Ալբայի գէմքի գոյնը և քան այն գոյնը, որով նա ինքն է նկարում: Ոմեն ոք նորա աչքում սրբապիզծ և տիրանենդ է, որովհետեւ ալդ հիման վրայ կարելի է նոցա բոլորին անիւի տակ ձգել, ցից հանել, լոշտել, այրել: Լաւը, ինչոր ես ալստեղ արել եմ, հեռւից անկասկած ոչինչ է երեսում, հէնց նորա համար, որ լաւ է: Մատին փաթեթ է շինում ամեն մի ստահակութիւն, որը մոռացւած է, լիշտում է ամեն մի խոսկութիւն, որը հանդստացրած է. և թագաւորի աչքին այնքան դաւաճանութիւն, ապստամբութիւն, խիզախութիւններ են պատկերանում, որ նա երեակայում է, թէ ալստեղ մէկ մէկու ուտում են, երբ մեզ մօտ մի կոպիտ ժողովրդի թեթև անկարգութիւնը վաղուց մոռացւած է: Եւ լղանում է նորա սըրտում անսահման ատելութիւն դէպի ալդ խեղճ ժողովուրդը: Նոքա պատկերանում են նորան զգւելի, այս, ինչպէս գագաններ ու հրէշներ: Նա դիմում է հրի ու որի օգնութեան և կարծում է՝ թէ ալդպիսով կարող են մարդոց սանձել:

**ՄԱՔԻԱՀԵԼԼ.** Շատ գրգռուած էք երեսում: Շատ մեծ նշանակութիւն էք տալիս իրերին: Պաւը ոէգէնտուհի չէք մնում:

**ՄԱՐԴԱՐԻԾ.** Գիտեմ: Նա հետը մի հրահանդ կըբերէ: Քաղաքական գործերի մէջ բաւական վարժւած եմ և

գիտեմ, թէ ինչպէս կարելի է մէկին տեղից վռնդել առանց պաշտօնը ձեռից խլելու: Նախ մի հրահանդ կը բերէ, որը կըլինի անորոշ և երկդիմի: Եւ իւր ձեռքը կըձգէ ամեն ինչ, որովհետեւ իշխանութիւն ունի, և երբ գանգատւեմ, պատրասկ կըբերէ մի ուրիշ գաղտնի հրահանդ: Եթէ տեսնել ուզենամ, պատէպատ ման կ'ածէ ինձ: Եթէ ես պնդեմ, մի ուրիշ թուղթ ցոյց կըտալ, որը բոլորովին ուրիշ բան է բովանդակում: Խոկ եթէ դորանով էլ չըբաւականամ, նա ուշք չի դարձնի, ինչքան էլ խօսեմ: Այս ինչ նա տրած կը լինի այն, ինչ որ ես վախենում եմ անել, և ինչ որ ես եմ ցանկանում — գէն կը լինի նետած:

**ՄԱՔԻԱՀԵԼԼ.** Եթէ կարողանալի, կ'ուզէի ձեզ հակածառել:

**ՄԱՐԴԱՐ.** Ինչ որ ես անասելի համբերութեամբ խաղանքի, նա իւր կոշտութեամբ ու վայրագութեամբ կը գրգուէ: Ես պէտք է աչքիս առաջ իմ գործը կորած տեսնեմ և, բացի գորանից, նորա մեղն էլ վրաս առնեմ:

**ՄԱՔԻԱՀԵԼԼ.** Սպասէ թող Զերդ բարձրութիւնը:

**ՄԱՐԴԱՐ.** Ես այնքան իշխում եմ ինձ, որ կտրող եմ հանգիստ մնալ: Թող նա գալ: Ես ամենալաւ ձեռվ նորան տեղ կ'անեմ, նախքան նա ինձ աեղահան կ'անէ:

**ՄԱՔԻԱՀԵԼԼ.** Ալդպէս շուտ ալդպիսի ծանր քայլ:

**ՄԱՐԴԱՐ.** Աւելի ծանր, քան կարծում ես: Ով իշխելու սովոր է, ով այնտեղն է հասցըել, որ օրական հազարաւորների բախտն իւր ձեռին ունի բռնած, — նարա համար գահից իշխելն ու գերեզման մտնելը — մէկ է: Բայց աւելի լաւ է ալդպէս, քան թէ կենդանիների մէջ մնալ՝ ինչպէս ուրաւական, և գատարկ անունով կամենալ մի տեղ իշխել, որն արդէն ուրիշն է ժառանգել, և արդէն տիրում է ու վայելում:

## Բ. ՏԵՍԱՐԱԿ

### Վլարայի բնակարանը

ԿՐԱՔԱՆ և իւր ՄԱՅՐԸ, ապա ԷԳՄՈՒՏ

ՄԱՅՐԸ. Ալդակիսի մի սէր, ինչպէս Բրակենքութինն է, երբէք չեմ տեսած։ Կարծում էի, թէ այդ միայն դիւցազներգութիւնների մէջ է լինում։

ԿԼԱՐԱ. (Ունեակում զնում-զալիսէ մի երգ մրմնալով)։  
Երջանիկ միմիայն

Է սիրող հոգին։

ՄԱՅՐԸ. Նա գուշակում է քո յարաբերութիւնը եգմոնտի հետ։ Եւ ես կարծում եմ, որ եթէ մի փոքր սիրալիր լինէիր դէպի նա, եթէ ուզենալիր, հիմա էլ քեզ հետ կ'ամուսնար։

ԿԼԱՐԱ. (Երգում է)։

Խնդում, ցաւում է, մտածում է միշտ։

Զգտում, անձկում է, տանջում է մեծ վիշտ,

Անհուն ցնծում է, ցմահ տրտմագին։

Երջանիկ միմիայն է սիրող հոգին։

ՄԱՅՐԸ. Թոնդ այդ օրօր-նանիկը։

ԿԼԱՐԱ. Միք կշտամբիլ, սա մի ազգու երգ է։ Ես երեմն սորանով մեծ երեխալ եմ քնացրել։

ՄԱՅՐԸ. Դու հօ ոչինչ չունիս գլխումդ, բացի քո սէրից։ Միայն թէ ամեն ինչ, չմոռանայիր այդ մէկի պատճառով։ Բրակենքութին դու պէտք է պատռով վերաբերւես, ասում եմ քեզ։ Նա դեռ կարող է քեզ մի օր բախտաւորացնել։

ԿԼԱՐԱ. Նամ։

ՄԱՅՐԸ. Օ՛, լնւ. կը գալ մի ժամանակ։ Թուք

Երեխաներդ ոչինչ չէք նախատեսնում, և ականջի ետեւն էք գցում մեր փորձերը։ Երիտասարդութիւնն ու սիրուն սէրը—ամեն ինչ վերջ ունի։ Եւ ժամանակ է գալիս, երբ մարդ Աստուծուց շնորհակալ է լինում, եթէ կարողանում է մի որ և է պատսպարան գտնել։

ԿԼԱՐԱ. (Ցնցում է, լուս, վերջը բացականչում)։ Թողքայ, մայր իմ, այդ ժամանակը, ինչպէս մահ։ Առաջուց նորա վրայ մտածելը սարսափելի է. բայց երբ կը գալ, երբ մենք ստիպւած կը լինինք՝ ապա մի կերպ կ'առնենք։ Էգմոնտ, ես առանց քեզ ապրեմ։ (Արդասում է)։ Պէտք, անկարելի է. այդ անկարելի է։

ՀԳՄ. (Հեծելաշորերով, գլխարկը ձեռքին ներս է մըունում)։ Կլարա։

ԿԼԱՐԱ. (Մի քավ առաջ, ապա եղ)։ Էգմոնտ։ (Գլրկում է նրան և վրան հանգչում)։ Ո՞հ, դու բարի՛ս, քաղցրի՛կս. գու այստեղ ես։

ՀԳՄ. Բարի՛ երեկոյ, մայրիկ։

ՄԱՅՐԸ. Աստուծոյ բարին, ազնիւ պարոն։ Փոքրիկս համարեա հալւել է, որ դուք այդքան երկար բացակալ էք։ Ամբողջ օրն էլի Զեր մտսին է երգել ու խօսել։

ՀԳՄ. Արդեօք ինձ ընթրիք կըտաք։

ՄԱՅՐԸ. Անչափ շնորհ կը լինէր, միալն թէ մի բան ունենալինք։

ԿԼԱՐԱ. Ի հարկէ, դուք հանգի՛ստ կացէք, մայրիկ, այդ մասին ես ամեն ինչ կարգադրել եմ, ես բան եմ պատրաստել. ինձ մի՛ք մատնիլ։

ՄԱՅՐԸ. Բաւականին աղքատիկ։

ԿԼԱՐԱ. Դեռ սպասեցէք։ Բայց ահա թէ ինչ եմ կարծում.՝ երբ նա ինձ մօտ է, ես ամենսին քաղցր զգում. պէտք է որ նա էլ մեծ քազ չունենայ, երբ ես նորա մօտ եմ։

ԷֆՄ. Կարծում ես: (Կլարան սպով դոփառէ և որհած շրջում): Ի՞նչ է պատահհել քեզ:

ԿԼԱՐԱ. Այսօր ինչպէս սանոն էք: Թուք դեռ ոչ մի համբոյր չէք առաջարկել ինձ: Ինչո՞ւ էք բազուկներդ վերաբկուվ նորածնի պէս փաթաթել: Վայել չէ ոչ գինորին, ոչ սիրահարին բազուկները փաթաթել:

ԷֆՄ. Երբեմն, սիրելիս, երբեմն: Երբ զինւորը դարան է մտել և ցանկանում է թշնամուց բան կորպել, Սիրան հաւաք է պահում, կծկում է և իւր հարւածն է կղում: Իսկ մի սիրահար...

ՄԱՅՐԸ. Խնդրեմ, նստէք. եղէք, ինչպէս ձեր տանը: Ես պէտք է խոհանոց գնամ: Երբ դուք այստեղ էք, կլարան էլ ոչնչի վրայ չէ մտածում: Պէտք է գոհ մնաք:

ԷֆՄ. Զեր բարի ցանկութիւնն ամենալաւ համեմունքն է: (Մայրը զնումէ):

ԿԼԱՐԱ. Հապա իմ սէրն ինչ է:

ԷֆՄ. Ինչ որ ուզում ես:

ԿԼԱՐԱ. Համեմատեցէք նորան, եթէ սիրտ ունիք:

ԷֆՄ. Ուրեմն նախ և առաջ ահա (վերաբկուն դէն է ձգում և երեւմ է շրեւ հագուստի մէջ):

ԿԼԱՐԱ. Ջի՞ն...

ԷֆՄ. Հիմտ բազուկներս ազատ են: (Նորան սեղմում է կրծքին):

ԿԼԱՐԱ. Թողէք. ես կը վիճացնեմ: (Յեր է քաշուում): Ի՞նչ շքեղ է. էլ չըպիտի համարձակւեմ Զեզ դիպչել:

ԷֆՄ. Գու գոհ ես: Ես քեզ խոստացայ միանդամ մօտդ գալ իսպանական տարազով:

ԿԼԱՐԱ. Վազուց է, որ ձեզ այդ մասին էլ չեմ խնդրած: Կարծում էի, թէ չէք կամենում: Ա՛խ, և այս ոսկեգեղ զմը:

ԷֆՄ. Գու հիմտ հօ տեսնում ես:

ԿԼԱՐԱ. Ուդ թագաւորն է վրադ կախել:

ԷֆՄ. Այն, սիրելիս: Թէ շղթան և թէ նշանը դոցա կրողին տալիս են ամենամեծ իրաւունքներ: Ես երկրիս երեսին իմ գործունէութեան վրայ ոչ մի դատաւոր չեմ ճանաչում, բացի այդ պատւանշանի գրումէլւորից և ասպետների համագումար ժողովից:

ԿԼԱՐԱ. Օ՛. գու համարձակ կարող էիր թողնել ողջ աշխարհը քեզ դատելու: Թաւիշը շատ հիանալէ է, հապա այս բուզմէնանէրը. հապա գործւածքը. մարդ չը գիտէ, որից սկսէ:

ԷֆՄ. Դէ մի լաւ կուշտ մտիկ տուր:

ԿԼԱՐԱ. Իսկ ոսկեգեղը: Դուք ինձ գորա պատմութիւնն անում էիք և ասում, որ դա մի նշան է ամենամեծի ու ամենաթանկագնի, ինչ որ մարդս ջանքով ու տանջանքով ձեռք է բերում: Դա շատ թանկագին է: Ես այդ կարող եմ համեմատել քո սիրոյ հետ: Ես կրում եմ այն նոյնպէս սրտումս. իսկ լետոյ —

ԷֆՄ. Ի՞նչ ես ուզում ասել:

ԿԼԱՐԱ. Յետոյ էլ համեմատել չէ լինում:

ԷֆՄ. Ինչպէս թէ:

ԿԼԱՐԱ. Ես այն ջանքով ու տանջանքով չեմ վաստակել, ձեռք ձգել:

ԷֆՄ. Սիրոյ բանն այլ է: Դու վաստակում ես այն, երբ նորան չես հետամտում: Եւ մեծ մասամբ այն մարդիկն են ստանում, որոնք նորա ետևից չեն վազում:

ԿԼԱՐԱ. Քեզ ես օրինուկ վերցնում: Այդ հպարտ նկատողութիւնն անում ես քո՞ մասին, որին ամբողջ ժողովուրդը սիրում է:

ԷֆՄ. Երանի թէ նորա համար մի բան ունենալի ալած, երանի կարողանալի նորա համար մի բան անել: Իսկ ինձ սիրելը — իւր բարի կամքն է:

ԿԼԱՐԱ. Անկասկած դու ալսօր ոէգէնտուհու մօտ  
էիր. չէ:

ՀԳՄ. Նորա մօտն էի:

ԿԼԱՐԱ. Դու նորա հետ լաւես: Բայց քաղցր ենք և կամա-  
կատար: Այդպէս է գէթ արտաքուստ:

ԿԼԱՐԱ. Իսկ ներքնուստ:

ՀԳՄ. Ցանկանում եմ նորա լաւը: Ամեն մէկս մեր  
գիտաւորութիւններն ունինք: Բայց դա կասլ չունի գոր-  
ծի հետ: Նա պատւական կին է, ճանաչում է իր մար-  
դուցը. և նա բաւականին խորագէտ կըլինէր, եթէ հետը  
կասկածու էլ չըլինէր: Ես նորան շատ հոգս եմ պատ-  
ճառում, որովհետեւ նա իմ վարձունքի մէջ միշտ գաղտ-  
նիք է որոնում, իսկ ես չունիմ ոչ մէկը:

ԿԼԱՐԱ. Ամենեին ոչ մէկը:

ՀԳՄ. Հա՛, ասենք, մի փոքրիկ գարանտկալութիւն-  
կալ: Ամէն գինի՝ ժամանակի ընթացքում, տակառնե-  
րում քար է նստեցնում: Օրանացին հօ նորա համար  
աւելի լաւ զբաղմունք է և միշտ նոր առեղծւած: Օրա-  
նացին իւր մասին այնպիսի կարծիք է կազմել տւել, թէ  
նա անպատճառ մի ինչ-որ գաղտնի մտադրութիւն ունի:  
Ուստի և նա միշտ նայում է Օրանացու ճակատին, թէ  
արդեօք ինչ է մտածում, և նորա քայլերին, թէ  
արդեօք ուր է ուղղում:

ԿԼԱՐԱ. Ոէգէնտուհին կեղծաւո՞ր է:

ՀԳՄ. Ոէգէնտուհի. և զու հարցնում ես:

ԿԼԱՐԱ. Ներեցէք. ուզում էք հարցնել. — նա խար-  
դան է:

ՀԳՄ. Ոչ աւելի և ոչ պակաս քան ամէն ոք, որն  
ուզում է նպատակին հասնել:

ԿԼԱՐԱ. Եթէ ես ինձ ու ինձ մնալի, գլուխս կը-  
կորցնէի: Բայց նա առնական ոգի էլ ունի, նա մեղնից

— հասարակ գերձակներիցս ու խոհարարուհիներիցս —  
տարբեր կին է, նա մեծ է, սրտոտ, վճռական:

ՀԳՄ. Այս, եթէ կըերը տակն ու վրայ չեն եղած:  
Սակայն այս անգամ նա վրդովւած է:

ԿԼԱՐԱ. Ինչպէս:

ՀԳՄ. Նա մի բեխիկ էլ ունի վերին շրթունքի  
վրայ և երեմն սկրացաւ: Կատարեալ ամազոնա:

ԿԼԱՐԱ. Մեծաշնորհ կին. ես կը վախենակ նորա  
առաջ դուրս գալ:

ՀԳՄ. Դու հօ առհասարակ երկչուտ չես: Բայց սա  
ինկապէս երկիւլ էլ չէր լինի, այլ կուսակտն ամօթ-  
խածութիւն: (Կլարան աչքերը գետին է, ձգում, րոհում էգ-  
մոնդի ձեռը և կենուսւմ նորան). Հասկանում եմ քեզ, սիրելի  
աղջիկ, զու կարող ես աշքերդ բարձրացնել, (Տաճռու-  
սում է նորա աչքերը):

ԿԼԱՐԱ. Թող լսեմ. թող քեզ բռնեմ, թող նայեմ  
աչքերիդ, ամէն ինչ մէջը գտնեմ և ուրախութիւն և՝  
տրտմութիւն: (Նա գրկում է էգմոնդին և նորան նախում):  
Ասա ինձ, ասա, չեմ հասկանում. զու էգմոնտն ես,  
կոմս էգմոնտը, որն այնքան հեղինակութիւն ունի, որի  
մասին լրագիւներում գրում են, որին յարած են նա-  
հանգնելը:

ՀԳՄ. Ո՛չ. սիրելի կլարա. ես այն չեմ:

ԿԼԱՐԱ. Ինչպէս:

ՀԳՄ. Տեսնում ես, կլարա, թող նստեմ: (Նա նըս-  
տում է. կլարան չողում է խոնարհում նորա առաջ մի նստա-  
րանի վրա է. ձեռները դնում նորա գոգին և նորան նախում): Այն  
էգմոնտը մի ձանձրալի, կոշտ, սառն էգմոնտ է,  
որը ստիպւած է իրան զսպել, մէկ՝ այս տեսակ, մէկ՝  
այն տեսակ գէմք ցոյց տալ: Տանջւած, չըգնահատւած,  
խճճւած է նա, մինչ մարդիկ համարում են նորան  
ուրախ ու գւարթ. սիրւած մի ժողովրդից, որն ինքը

չէ իմանում, թէ ինչ է ուզում. յարգւած ու մեծարած  
մի ամբոխից, որի հետ ոչինչ չէ կարելի անել. զջա-  
պատւած բարեկամներով, որոնց նա չէ կարող վստա-  
հանալ իւր անձը. նկատւած մարդկանցից, որոնք ամեն  
կերպ կ'ուզէին նորան բռնել. աշխատող, տանջւող, յա-  
ճախ առանց նպատակի, մեծ մասսամբ առանց վարձի.  
Ո՛չ, թող լոեմ, թէ նա ինչպէս է, ինչ սրտի է: Բայց  
սա, Կլարա, սա հանգիստ է, անկեղծ, բախտաւոր, սիր-  
ւած ու ճանաչւած ամենալաւ սրտից, որին և նա է  
ճանաչում և ամենայն սիրով ու վստահութեամբ սրտին  
է սեղմում: (Նա գրկում է Կլարալին). Սա քն' էգմոնտն է:  
**ԿԼԱՐԱ.** Այսպէս թող մեռնեմ: Աշխարհս սորանից  
բարձր ուրախութիւն չի կարող տալ ինձ:

**ՎԱՐԱԳՈՅՑ:**

**ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ**

**ՏԵՍԱՐԱԿ.**

**Փ ո ղ ո ց**

**ՅԵՍՏՐ, ՀԻՒՆ**

ՅԵՏՏԵՐ. Ե՞լ, Էլ, աօ. հարևան, մի խօսք:  
ՀԻՒՆ. ճանապարհութեամբ և սուս կաց:  
ՅԵՏՏԵՐ. Մէկ խօսք միայն. նոր ոչինչ ըլկայ:  
ՀԻՒՆ. Ոչինչ. բացի այն, որ մեզ նորից արգել-  
ւած է խօսել:

ՅԵՏՏԵՐ. Ինչպէս:

ՀԻՒՆ. Այստեղ՝ տանը մօտեցէք, զգուշացէք:  
Դուքս Ալբան գալն և եթ խոյն մի հրաման է հրա-  
տարակել, որի գորութեամբ, երբ մի կամ երկու մարդ փո-  
ղոցում խմբւեն ու խօսեն՝ առանց քննութեան պետա-  
կան դաւագիրներ կը հրատարակւեն:

ՅԵՏՏԵՐ. Աւազ:

ՀԻՒՆ. Ցմահ բանտարկութեամբ արգելւած է  
պետական գործերի մասին խօսել:

ՅԵՏՏԵՐ. Ափսոս մեր իրաւունքներ:

ՀԻՒՆ. Եւ մահւան պատժով արգելւած է կառա-  
վարութեան արարքը պարաւել:

ՅԵՏՏԵՐ. Վայ մեր գլխներին:

ՀԻՒՆ. Եւ մեծ խօստումներով հրաւիրւում են

Հայրերը, մայրերը, որդիները, ազգականները, քարեկամները, ծառաները—ինչ որ տների խօրքերում պատահէստում է, առանձին հաստատած դատարանում լայտնել:

## ՑԵՍՏԵՐ. ԳՆԱՆՔ ՄՈւն:

Հիմա Հաղորդական խոստանում են ըստ հասցնելու մի վիրաւորանք՝ ոչ անձի կողմից, ոչ կաւածքի:

ՑԵՑՑԷՐ. ՈՐՀԱՓԻ ՈՂՈՐՄԱԾՈՒԹԻՒՆ: Ես ՀԵՆԳ ի ՍԿՈՒՆ  
ցաւ զգացի, երբ դուքս Ալբան քաղաք մտաւ: Այն ժա-  
մանակից ի վեր թւում է ինձ, կարծես երկիրը մի սև  
քօղով պատած լինի և այնքան խորը ցած ընկած, որ  
մարդ պէտք է կորանալ, որ չըդիպչէ:

Հիմնական բաղադրիչները են գործառնությունները:

ՅԵՂՑԵՐ. ԹՌԱ. մարդու սիրտ է կծկում, երբ տեսնում է մի հրոսակ փողոցում արշաւելիս: Մոմերի պէս ուղիղ, օտարութի հայեացքավ, քայլելիս՝ կարծես, մի անձն է շարժւում: Իսկ երբ նոքա պահպան են կանգնած և գու մօտներովն անցնում ես, կարծես ուզում են քեզ տակէտակ տեսնել և այնպէս կոշտ ու բարկացկոտ են երևում, որ թւում է՝ թէ ամեն անկիւնում դահիճ ես տեսնում: Նոքա ամենակին դիւր չեն գտլիս ինձ: Մեր տեղացի զօրքը հօ մի ուրախ ժողովուրդ էր. նոքա համարձակ էին, ոտները չոած, գլխարկները ականջներին թեքած, ապրում էին և ապրել էին տալիս: Բայց սոքա կարծես մեքենաներ լինին, որոնց մէջ սատանաւ է նստած:

ՀիհԱն. Եթէ ալդպիսի մէկը կանչէր՝ «կանգնիր» և նշան դնէր, բնէ ես կարծում, մարդ կը կանգնէր:

Յիշտիք. Ես տեղն ու տեղը կը մեռնէի:

Հիմնական գույքը տուն:

ՅԵՅՏՅԱՆ. Լաւ բան չեմ սպասում, ցտեսութիւն:  
ԶՈՒՄ. (Մօրենում է առաջիններին): Բարեկամներ  
Հարևաններ:

ՀիհՍ. Լուս, Եկեղ գնանք

Zoë US. Φήμες

ՅԵՍՏԻՐ. Զափից էլ աւելի

ԶՈՒՏ. ՈՒղարկնառուհին հեռացել է

ՅԵՍՏԻՇ. Հիմա արդէն Աստւած ազատէ

Հիմնական մաս դեռ էլի մեզ պահում էր:

ԶՈՒՄ. Միանգամից ու սուսուփուս:

բողաք գուքս Ալբալի հետ հաշտւել։ Նա ազնւակա-  
նութեանը յայտնել է տւել, որ կը վերադառնայ, բայց  
ոչ ոք չի հաւատում այդ բանին։

Հիմնական պատճենները հայության մասին պատճեններ են:

Յէջջէ՛ր. Ի սէր Աստուծոյ, արտօնութեան մասին  
խօսք մի տսիլ: Ես առաւօտւայ գլխատութեան հոտ եմ  
զգում: Արեգակը չէ ուզում ծագել. մշուշից արիւնի հոտ  
է գալիս:

ԶՈՒՄ. ՕՐԱՆՏԱԳԻՆ ԷԼ Է ԳՆԱԳԵԼ

Հիմնական գործությունները կազմության մեջ պահպանվելու համար առաջարկվում են համապատասխան բարեկարգություններ:

ԶՈՒՄԸ. ԿԱմս Եզմոնտը դեռ այստեղ է:

ՅԵԺՏՅԱՆ. Փառք Աստուծոյ, բոլոր սուրբելը նորան  
այնպէս զօրացնեն, որ ձեռքից եկածն անէ. միայն նո-  
րա ձեռքից կարող է մի բան գտլ:

ՔԱՆՉԱՐԵՆ. (Գալիս է). Կըգտնեմ վերջապէս մի զոյտ,  
որ դեռ մտած չըլլնին ծակերը:

ՅԵՍՏԻՐ. ՆՆՈՒՅ արէք մեզ. ճանապարհներդ շա-  
րունակեցէք,

## ՓԱՌՁԵՆ. ԴՈՒք Քաղաքավարի ՀԵք

ՀիհիՄՆ. Կոմպլիմէնտների ժամանակ չէ ընաւ։  
Զեր կուզը էլք քոլ է գալիս. արդէն տուողջտցել էք։  
ՓԱՆԴԻՆ. Հարցնում էք մի զինւորի նորա վերքե-  
րի մասին։ Եթէ ես հարւածներին նշանակութիւն տուած-  
լինէի, իմ օրումն ինձնից մարդ դարձող չէր լինիլ։  
ՅԵՑՑԷՐ. Իրերը կարող են աւելի ծանր կերպա-  
րանք ընդունել։

ՓԱՆԴԻՆ. Բարձրացող փոխորկից, երևում է, չա-  
փազանց յոգնածութիւն էք զգում ձեր անդամների մէջ։  
ՀիհիՄՆ. Քո անդամները շուտով մի ուրիշ տեղ  
մարզութիւն կ'անեն, եթէ չըհանդստանաս։

ՓԱՆԴ. Թշւառ մկներ, որոնք իսկոյն յուսահատ-  
ում են, երբ տան աէրը մի նոր կատու է ճարում։  
Թէւ մի փոքր ուրիշ ձեռվ, բայց մենք կը շարունակենք  
այսուհետեւ մեր կենցաղավարութիւնը առաջւայ պէս,  
անհոգ կացէք։

ՀիհիՄՆ. Դու յանդուգն անպիտան ես։

ՓԱՆԴ. Ապուշների թագաւոր. թող դքսին իւր  
բանուգործին։ Տեր կատուն այնպէս է երևում, կար-  
ծես՝ մկների տեղ սատանաներ լինի լափած և հիմա-  
կարողանում չըլինի մարսել։ Դեռ թող նորան։ Նա էլ  
պէտք է ուտէ, խմէ, քնի, ինչպէս միւս մարդիկ։ Ես  
չեմ վախենում, եթէ միայն մենք ժամանակից օգուտ  
քաղենք։ Սկզբում բանն արագ է զնում, բայց յետոյ  
նա էլ կըգտնէ, որ աւելի լաւ է ապրել սեղանատանը-  
իւղոտ պատառների մօտ և գիշերները հանգստանալ,  
քան թէ շտեմարանում հատ-հատ մկներ որսալ։ Գնա-  
ցէք, ես ճանաչում եմ կառավարչապետներին։

ՀիհիՄՆ. Ալդպիսի մարդու համար ամեն բան  
անպատիժ է անցնում։ Եթէ երբ և է ալդպիսի բան  
ասած լինէի, մի ըոսէ չէ ալդպիսի մարդու համար։

ՓԱՆԴ. Անհագ կացէք։ Սստւած երկնքում չէ տե-  
ղեկանում ձեր ճճիներիդ մասին, ուրի մնաց ուկեն-  
տուհին։

ՅԵՑՑԷՐ. Լեզւագար։

ՓԱՆԴ. Ես ճանաչում եմ միքանիսին, որոնք երա-  
նի թէ հերոսական քաջութեան փոխարէն նապաստակի  
սիրտ ունենալին իրանց կրծքում։

ՀիհիՄՆ. Դորանով ինչ էք ուզում ասել։

ՓԱՆԴ. Հըմ. խօսքս կոմսի մասին է։

ՅԵՑՑ. Էզմոնտիք։ Նա ընչեց պէտք է վախենալ։

ՓԱՆԴ. Ես մի հէգ արարած եմ և կարող էի ամ-  
բողջ տարի ապրել նորա մի երեկոյում կորցրածովը։  
բայց և այնպէս նա կարող էր տալ ինձ իւր ամբողջ  
տարւայ եկամուտը, եթէ մի քառորդ ժամ նա իմ գլուխն  
ունենար։

ՅԵՑՑ. Դու քեզ մի բան ես կարծում։ Էզմոնտի-  
մազերի մէջ աւելի խելք կայ, քան քո ուղեղում։

ՓԱՆԴ. Ճառում էք, բայց ոչ նուրբ։ Տէրերը խաբ-  
ում են տմենատաշցինը։ Նա չըպէտք է հաւատար։

ՅԵՑՑ. Ինչ է դուրս տալիս։ Ալդպիսի մի քաջը։

ՓԱՆԴ. Հէնց որովհետև նա մի քաջ է և ոչ երկ-  
չոտ նապաստակ։

ՅԵՑՑ. Պիղծ ուկիւ։

ՓԱՆԴ. Կըցանկալի, որ նա գէթ մի ժամ իր ան-  
դամներում ունենալ ձեր սրտստութիւնը, որը նորան  
այնտեղ անհանգստութիւն պատճառէր, և այնքան յու-  
զէր ու գրգռէր, մինչև որ կ'ստիպւէր քաղաքից հեռանալ։

ՅԵՑՑ. Զեր ասածները բոլորովին անհամսկանալի են։

Նա այնպէս ապահով է, ինչպէս աստղը երկնքում։

ՓԱՆԴ. Երբէք չես տեսել նոցա ընկնելիս։ Հետքն

անդամ չէ մնում։

ՀիհիՄՆ. Իսկ ով է ուզում նորան բան անել։

ՓԱՆԶ. Ո՞վ է ուզում: Զըլինք թէ ուզում ես ար-  
դելել Կ'ուզեն մի ապստամբութիւն յարուցանել, եթէ  
նորսն բռնեն:

ՅԵՏ. ԱՇ:

ՓԱՆԶՀՆ. Նորա սիրոյ համար ուզում ես կողերից  
ձեռք վերցնել:

ԶՈՒՏ. ԷՇ:

ՓԱՆԶ. (Նոցա խեղկարտակելով) ԻՇ, օՇ, ուՇ. Ակրկ-  
նեցէք բոլոր բացականչութիւնները: Ասածս ասած է.

ԹՈՂ: Աստւած պահապան լինի նորան: Յանուարի 10 թիւ:  
ՅԵՏ. Ես սարսափում եմ ձեր անամօթութիւնից:

ԱԼՂԱՄԻ մի ազնիւ, աննենգ մարդ պէտք է բանից վա-  
խենար:

ՓԱՆԶ. Ստահակը ամեն տեղ օգտուում է: Ամբաս-  
տանեալի նստարանի վրայ՝ ծաղրում է դատաւորին,  
դատաւորի աթոռի վրայ՝ ամբաստանեալին հաճութեամբ  
շինում է ոճագործ: Ինձ պատահել է արտագրել մի  
այնպիսի արձանագրութիւն, ուր մի ոստիկան պալատից  
ստանում էր խոշոր գումար և գովասանք, որովհետեւ  
մի ազնիւ թշւառի, իրանց ուզածի համեմատ՝ հարց ու  
փորձով խաբերայ էր դուրս բերել:

ՀԻՒՄՆ. Ա՛յս էլ պոչաւոր սուտ էր: Արդեօք հարց  
ու փորձով բնչ կարելի էր դուրս բերել, երբ մէկը ան-  
մեղ է:

ՓԱՆԶ. Հաստագնութիւն: Ուր որ հարց ու փորձով չէ  
կարելի բան գուրս բերել, այնտեղ ներս են հալում:  
Շիտակութիւնը մարդուու դարձնում է անկշուագատ ու  
կամապաշտ: Նախ թեթև կերպով են հարցնում, և ձեր-  
բակալւածը՝ հպարտ իւր իբր թէ վկայւած անմեղու-  
թեան վրայ, ուղղակի պատմում է ամենը, ինչոր մի  
հասկացող կը ծածկէր: Ապա հաւատի քննիչը պատաս-  
խաններից նոր հարցեր է շինում և ուշք է դարձնում,

ուր որ մի չնչին հակասութիւն է երեսում, այնտեղից  
կապում է իւր ցանցը, և թողնում խեղճ ողորմելուն,  
որ շփոթւի թէ ինչու ալստեղ մի փոքր աւելի, այնտեղ  
մի փոքր պակաս է ասել, կամ թէ, Աստւած ոչ գիտէ,  
ինչու մի հանգամանք լուսութեան է տւել, կամ մի որ և է  
տեղ վտիսեցել է, և ահա մենք արդէն ուղիղ ճանապար-  
հի վրա! Ենք: Եւ ես հաւատացնում եմ, որ մուրացիկ  
սպառաւները աղբիւսից փալասները այնքան հոգատա-  
քութեամբ չեն ժողովում, որքան մի ալգափիսի խար-  
դախը չնչին, երկդիմի, եղծւած, խանգարւած, ճմրո-  
ւած, վերջացած, ծանօթ, ատած ցուցմունքներից և  
հանգամանքներից վերջ և վերջու մի ծիծաղելի խրուի-  
լակ է շինում, որպէս զի իւր ամբաստանեալին գէթ  
երեակալութեամբ կարողանալ կախել: Եւ թող թշւա-  
ռականը փառք տալ Աստուծուն, եթէ կարողանալ իրան  
կախելիս տեսնել:

ՅԵՏ. Լեզւանին է հա:

ՀԻՒՄՆ. Ճանճերի համար կարելի է որ պէտք գայ,  
քայց պիծակները կը ծիծաղեն ձեր սարդի ոստախի վրայ:

ԹՈՂ. Նալելով թէ ինչ սարդեր են: Տեսէք. Եր-  
կայն գուքսը մի խաչասարդի պատկեր ունի, ոչ հաս-  
տափորինոքա այնքան վնասակար չեն, — այլ երկայն  
ոտներսվ, բարակ փորսվ, որն ուտելուց չէ կշտանում  
և քաշում է շատ նուրբ, բայց նոյնքան և մածուցիկ  
թելեր:

ՅԵՏ. Եգմոնտը Ոսկեգեղմի ասպետ է, ով է կարող  
նորան ձեռք տալ: Միայն իրան հաւատարներից կարող  
է նա դատւել, միայն ամբողջ կարգից: Քո անսանձ ու-  
խը, քո չար իսկական քեզ գայթակղեցնում դէպի մի  
ալգափիսի դատարկախօսութիւն:

ՓԱՆԶ. Միթէ գորանով ես նորա վատն եմ ուզում:  
Ինձ համար ողջ մէկ է: Նա հիանալի տղամարդ է: Իմ

բարեկամներից մի զոյգին, որոնք ուրիշ տեղ արդէն կախւած կը լինէին, նա բաց է թողել, մէջքերնին լաւ ճիպոտներ հասցնելով։ Դէ գնացէք, գնացէք։ Հէնց ետինքս եմ խորհուրդ տալիս ձեզ այդ։ Ահա էլի պահնորդներ են երեսում։ Չի երեսում, որ նոքա այնպէս շուտով մեզ հետ ընկերաթառ խմէին։ Սպասենք և հանդարտ դիտենք։ Ես հօրեղբօր մի զոյգ աղջիկներ ունիմ և մի օղեվաճառ կնքաւոր։ Թէ որ սոցա մօտ կուշտ հաց ուտեն և էլի ձեռնասուն ըրդառնան, տպանոքա երկաթի ստամոքսով գալլեր են։

## ՏԵՍԱՐԱԿԻ

**Էլուլէնքուրգեան պալատը. դուքս Ալբայլի բնակարանը:**

ՍԻԼԻԱ. Կ ՈՒՄԷՑ միմեանց հանդիպում են։

ՍԻԼԻԱ. Կատարել ես դուքսի հրամանները։ ԳՈՂՄԷՑ. Կէտառկէտ։ Բոլոր օրական պահնորդներին պատւիրած է որոշեալ ժամանակին գտնւել զանազան տեղերում, ուր նոցա նշանակել եմ։ Նոքա առաջմ չըջում են՝ ըստ սովորութեան, քաղաքի մէջ կարդ պահպանելու համար։ Ոչ մէկը չըգիտէ միւսի մասին. ամեն ոք կարծում է, թէ պատւէրը միւսին իրան է վերաբերում. և կարելի է յետոյ մի ակնթարթում զօրաշղթայ կապել և պալատի բոլոր ճանապարհները բռնել։ Գիտե՞ս դու այդ հրամանի պատճառը։

ՍԻԼԻԱ. Ես ոռվոր եմ կուրօրէն հնագանդելու. և ում է աւելի հեշտ հնագանդւիլ, քան դուքսին, երբ

շուտով հետեանքը ցոյց է տալիս, որ նա իրաւացի է հրամայել։

ԳՈՂՄԷՑ. Լաւ, լաւ. նաև զարմանալի չէ որ դու այդպէս նորա նման ծածկամիտ ու սակաւախօս ես, որովհետեւ դու պէտք է միշտ նորա մօտ լինիս։ Բայց ինձ այդ օտարոտի է թւում, որովհետեւ ես սովոր եմ իտալական տեղի թեթև ծառալութեանը։ Հաւատարմութեամբ ու հնագանդութեամբ ես հինն եմ. բայց ես հիմա սովորել եմ շատախօսութեան և վիճաբանութեան։ Դուք բոլորդ էլ լուսկեաց էք և ոչինչ չէք ուզում լսել։ Դուքսը իմ աչքում նմանում է մի երկաթեալ աշտարակի, առանց գուան, որի համար պահնորդները պէտք է թևեր ունենալին։ Նորերս ճաշի վրայ լսեցի, թէ ինչպէս նա մի ուրախ ու սիրալիր մարդու մասին տսում էր, որ նման է վատ պանդոկի, օղի վաճառելու ցուցագրով՝ դատարկաշրջիկներին, մուրացկաններին և գողերին ներս գրաւելու համար։

ՍԻԼԻԱ. Բայց միթէ նա լուսութեամբ չառաջնորդեց մեզ այստեղ։

ԳՈՂՄԷՑ. Դորա դէմ ոչինչ չունիմ տսելու։ Անկասկած՝ ով վկալ է նորա խելօքութեան, որով նա զօրքը իտալիալից այստեղ առաջնորդեց, նա բան տեսած մարդ է։ Ինչպէս նա դուրս պրծու բարեկամի ու թշնամու, ֆրանսիացիների, թագաւորականների և հերետիկոսների, շէլցարցիների և դաշնակիցների միջից հաւասարապէս, ամենախիստ կարգ պահպանեց և մի արշաւանք, որն այնպէս վտանգաւոր էին համարում, իմացաւ հեշտ և առանց խոչնդոտի գլուխ բերել։ Մենք սովորելու արժանի շատ բան ենք տեսել։

ՍԻԼԻԱ. Միթէ այստեղ ևս ամեն ինչ հանգիստ ու խաղաղ չէ։ Այնպէս որ, կարծես, ոչ մի ապստամբութիւն եղած չըլինէր։

ԳՈՒՄԷՅ. Ամենք մեր գալուց տռաջ էլ մեծ մասմբ խաղաղ էր:

ՍԻԼԻԱ. Նահանգներում աւելի ևս խաղաղել են. և եթէ էլի մէկը շարժւում է՝ միայն փախչելու նպատակով է: Բայց դուք ճանապարհներն էլ չուտով կը կապէ, կարծեմ:

ԳՈՒՄԷՅ: Հիմայ որ խսկապէս թագաւորի հաճութեանը կ'արժանանայ:

ՍԻԼԻԱ. Իսկ մեզ համար ամենսկարևորը մնում է, որ մենքնորա հաճութեանն արժանանանք: Երբ թագաւորն այստեղ գտայ, անկատած անփարձ չեն մնալ դուքսը և նորա ներկայացրած մարդիկ:

ԳՈՒՄ. Հաւատում ես թագաւորի գալուն:

ՍԻԼԻԱ. Այսքան պատրաստութիւններ են տեսնում, որ շատ ու շատ հաւանական է:

ԳՈՒՄ. Ինձ չեն համոզում դոքա:

ՍԻԼԻԱ. Դէ այդ մասին մի խօսիլ գոնէ: Որովհետեւ, եթէ թագաւորի կամքն էլ չըլինէր գալ, այսքանը հօանկատած է, որ մարդ պէտք է հաւատայ:

ՖԵՐԺԻՆ. (Մոռում է). Հայրս դեռ դուրս չէ եկել:

ՍԻԼԻԱ. Նորան ենք սպասում:

ՓԵՐԺԻ. Իշխանները շուտով այստեղ կը լինին:

ԳՈՒՄ. Այսօր են գալիս:

ՓԻՐԺԻ. Օրանացին և Եգմոնտը:

ԳՈՒՄԷՅ. (Աիլւալին ցածր) Հիմայ մի փոքր գլխի եմ ընկնում:

ՍԻԼԻԱ. Դէ այդ քեզ համար պահիր: (Դուքս Ալբան մոռնում է և առաջ գնալու հեր՝ միւսները եղու են քաշում):

ԱԼԲԱ. Դոմէց:

ԳՈՒՄ. (Առաջ գալով), Տէր իմ:

ԱԼԲԱ. Պահնորդները բաժանել և կարգադրել ես գում. Ամենաճշորէն: Յերեկւայ պահնորդները...

ԱԼԲԱ. Բաւական է: Դալանում կըսպասես: Սիլւան քեզ կ'ասէ րոպէն, երբ դու պէտք է նոցա հաւաքես, պալատը տանող ճանապարհները պահնորդներով բռնես: Մնացածը գիտես:

ԳՈՒՄ. Այս, տէր իմ: (Գնում է).

ԱԼԲԱ. Սիլւա:

ՍԻԼԻԱ. Այստեղ եմ:

ԱԼԲԱ. Ամենը, ինչոր վաղուց ի վեր քեզնում գնահատել եմ — քաջութիւն, վճռականութիւն և վճռածն անխափան գլուխ բերել - ցոյց տուր այսօր:

ՍԻԼԻԱ. Շնորհակալ եմ ձեզնից, որ առիթ էք տալիս ինձ ապացուցանելու, որ ես հինն եմ:

ԱԼԲԱ. Հենց որ իշխանները ներս մտնեն ինձ մօտ, դու շտաբիր իսկոյն Եգմոնտի գրագրին ձերբակալելու: Միւս նշանակածներին ձերբակալելու: Համար բոլոր պատրաստութիւնները տեսել ես:

ՍԻԼԻԱ. Աստահացիր մեզ: Նոցա ճակատագիրը, ինչպէս ճիշտ հաշւած արեգակնային խաւարումը, կը կատարեի կէտառկէտ և սարսափելի կերպով:

ԱԼԲԱ. Դու նոցա ճիշտ գիտել ես տւել:

ՍԻԼԻԱ. Բոլորպին: Եգմոնտին ամենից առաջ: Նա միակն է, որ ձեր այստեղ գալուց ի վեր չի փոխել իւր վարմունքը: Ամբողջ օրը մի ձիուց միւսին է թուզում, հիւրեր է հրաւիրում, սեղանի վրայ միշտ ուրախ է և զւարճախօս, խաղում է, նետում է, և գիշերները սըլկում է սիրեկանի մօտ: Միւսները՝ ընդհակառավակը, նկատելի միջադադար են արել իրանց կենցաղավարութեան ձևի մէջ. նոքա տանն են մնում: Եւ նոցա դռներն այսպէս են, կարծես՝ տանը հիւանդ լինէր:

ԱԼԲԱ. Ուստի շնուր, քանի դեռ նոքա բարեբախտար չեն առողջացել:

ՍԻԼԻԱ. Ես կը կանգնեցնեմ նոցա: Ձեր հրամանով

մենք նոցա մեծամեծ պատիւներ կը տանք: Նոքա սոսկում են: Քաղաքագիտորէն նոքա երկչոտութեամբ շնորհակալութիւն են յայտնում. զգում են, որ ամենալաւը փախչելն է, բայց ոչ մէկը չի համարձակում մի քայլ անել: Նոքա դանդաղում են, մենակ չեն կարողանում, իսկ առանձնակի մի որ և է համարձակ քայլ անելոց էլ նոցա յետ է պահում ընկերական ոգին: Նոքա սիրով ուզում են ամեն մի կասկածից ազատւել, բայց աւելի կասկածաւոր են դարձնում իրանց: Ուրախութեամբ տեսնում եմ արդէն ձեր ողջ նախագիծը կատարւած:

**ԱԼԲԱ.** Ես ուրախ եմ միտին կատարածի համար և այն էլ ոչ բոլորովին. որովհետև միշտ մնում է դեռ էլի մի բան, որ մեզ մտածել և հոգս քաշել է տալիս: Բախտն իրասածի է. յաճախ ստորը, չնչինը—ազնւացնում է, իսկ լաւ նախամտածած գործերը՝ մի անարդ ելքով անպատճում: Մնացիր մինչև իշխանների գովլը, ապա Գոմեցին պատւէր տուր փողոցները բռնել, իսկ ինքդ շտամիքը ձերբակալելու եգմոնտի գրագրին և բոլոր նշանակածներին: Երբ կատարւած լինի ալս, եկ ալստեղ և յայտնիր որդուս, որ նո այդ լուրը խորհրդարանում ինձ հասցնէ:

**ՍԻԼԻԱ.** Ես լոյս ունիմ, որ ալս երեկոյ ձեր առաջ պարզերես գուրս կըզամ: (Ալրան մօրենում է իւր որդուն, որը մինչեւ ալժմ կանդնած էր դաւանում. Յ սծր): Ես չեմ վստահանում խոստովանել, բայց լոյսս տատանւում է: Եօ տեսնում եմ առաջս ոգիներ, որոնք լուռ և մտալուզ կշռում են ու նժարներում իշխանների և շատ հազարաւորների բախտը: Դանդաղ վեր ու վէր անում լեզւակը: Դատաւորները, երեւում է, խորասուզւած են մտածութեան մէջ: Վերջապէս իջնում է մէկ նժարը, բարձրանում է միւսը բախտի քմահաճութեամբ և վճռուած է: (Գնում է),

**ԱԼԲԱ.** (Ֆէրինանդի հարաւաշ գալով): Խնչոլէս գտանը քաղաքը:

**Փէ՛ՐԴԻ.** Ամեն ինչ թաղաղ է: Ես՝ իբրև թէ ժամանակ անցկացնելու համար, ձիով զբօւնում էի փողոցն ի վեր: Ձեր լաւ բաժանած պահնորդները այնպէս լարւած են ալահում երկիւղը, որ ոչ ոք չէ համարձակում շշուկ հանել: Քաղաքը նման է մի դաշտի, երբ հեռուց փայլում է կուծակը. չեն նկատում ոչ ժողովն, ոչ անասուն, բացի նոցանից՝ որոնք շտապով դէպէ ապաստանարան են վազում:

**ԱԼԲԱ.** Քեզ ուրիշ ոչքնչ չըպատահեց:

**Փէ՛ՐԴԻ.** Եգմոնտն էր մի քանիսի հետ ձի հեծած դէպի շուկան արշաւում: Մենք միմեանց բարեեցինք: Նա մի վայրագ ձի ունէր, որն ես ստիպւած էի գովելու «Շտապենք մեր ձիերը վարժեցնելու, զուտով պէտք կ'ունենանք—կանչեց դէպի ինձ: Նա ինձ ալսօր նորից կըտեսնի—ասաց նա—և գալիս է ձեր պահանջման համեմատ ձեզ հետ խորհրդակցելու:

**ԱԼԲԱ.** Նո քեզ նորից կըտեսնէ:

**Փէ՛ՐԴԻ.** Այստեղ իմ ճանաչած բոլոր ասպետների մէջ նա ինձ ամենից շատ էր գիւր գալիս: Երեսի բարեկամներ կըդառնանք:

**ԱԼԲԱ.** Դու գեռ ևս չտփազանց շտապով և անչափ անզգոյշ ես. գեռ նկատում եմ քո մէջ մօրդ թեթևածածութիւնը, որը նորան այնպէս անպայման իմ գիրկը նետեց: Քանի քանի վտանգաւոր լարաբերութիւնների մէջ ես մտել շտապով արտաքինից շլացած:

**Փէ՛ՐԴԻ.** Ձեր հրամանին ես միշտ հնագանդ եմ գտնւած:

**ԱԼԲԱ.** Քո երիտասարդ արեան ներում եմ այս թեթևածիտ բարեկամութիւնը, ալս անզգոյշ զւարթամտութիւնը: Միայն դու մի մոռանալ, թէ ես ինչ գործի

եմ ուղարկւած և թէ գորանից քեզ ինչ մասն կ'ուզէի  
հանել:

Փէ՛րդ. Յիշեցըէք ինձ և միք խնայիլ, երբ կարևոր  
էք համարում:

ԱԼԲԱ. (Կարճարե լուռթիւնից էտող). Որդեակ իմւ  
Փէ՛րդ. Հայր իմ:

ԱԼԲԱ. Շուտով կը գտն իշխանները. Օրանացին և  
եգմոնտը կը գտն:

Անվտահութիւնից չէ, որ քեզ հիմա նոր եմ լայտ-  
նում այն, ինչ որ պէտք է կատարւի: Նոքա այնտեղից  
այլ ևս չեն դուրս գալու:

Փէ՛րդ. Այդ ինչ միտք է:

ԱԼԲԱ. Վճռւած է բռնել նոցա: Դու զարմանում  
ես: Լսիր անելիքդ: Պատճառներն այնժամ կ'իմանաօ-  
երբ իրողութիւնը կատարւած կը լինի: Հիմայ ալլ ևս  
ժամանակ չէ մնում այդ բացատրելու: Քեզ հետ միայն  
կ'ուզէի ամենամեծ և ամենախորհրդաւոր բանի մասին  
խօսել: Մի ամուր կապ պահում է մեզ միասին շղթա-  
յած: Դու ինձ համար թանկ ես և սիրելի: Քեզ վրայ  
կ'ուզէի ձգել բոլոր ծանրութիւնը: Ես չեմ կամենալ  
տպաւորել քո մէջ միմիայն հնագանդելու սովորութիւնը,  
այլ կ'ուզէի պատւաստել քո մէջ նաև հրամայելու, միտքը  
արտայայտելու, գլուխ բերելու, զգացմունքը. կ'ուզէի  
կտակել քեզ մի մեծ ժառանգութիւն և թագաւորին-  
ամենահպատակ ծառայ. օժիտ տալ քեզ ամենալաւը,  
ինչ որ ունիմ, որ եղբայրներիդ մէջ մտնելիս՝ ամաչելու  
տեղիք չունենաս:

Փէ՛րդ. Ի՞նչ ասես, որ ես քեզ պարտական չեմ  
լինիլ այդ սիրոյ համար, որը դու տարածում ես միայն  
ինձ վրայ, մինչ քո առաջ մի ամբողջ պէտութիւն է  
դողում:

ԱԼԲԱ. Դէ լսիր, թէ ինչ պէտք է արած: Հենց ո՞ր

իշխանները ներս մտնեն, պալատի բոլոր մուտքերը՝ կը  
բռնւին: Այդ մասին կարգադրել է Գոմէցը: Սիլւան  
կըշտապի ձերբակալելու հգմանտի գրագրին՝ ամենակաս-  
կածաւորների հետ միասին: Խսկ դու պահնորդներին  
դարպասում և բակերում կարգի կը պահես: Ամենից  
առաջ այս մերձակալ սենեակում պահնորդներ դիր ամե-  
նավտահելի մարդոց. տպա մնացիր դալանում, մինչեւ  
Սիլւան ետ դառնալ: Եւ բեր ինձ մի որ և է թղթի կտոր  
ի նշան, որ նորա պատուէրը կատարւած է. տպա մնացիր  
գաւթում, մինչեւ Օրանացին հեռանալ, ու նորան հե-  
տեւիր. Ես կը պահեմ Եգմոնտին այնտեղ՝ իբրև թէ նո-  
րա հետ էլի խօսելու բան ունենայի: Դալանի ծալրում  
պահնանջիր Օրանացու սուրբ, մօտ կանչիր պահնորդնե-  
րին, բռնիր շուտ ամենավտանգաւոր մարդուն. իսկ ես  
այնտեղ կը բռնեմ Եգմոնտին:

Փէ՛րդ. Հնագանդում եմ, հայր իմ. բայց առաջին  
անգամ այսպէս խօցւած սրտով և անձկութեամբ:

ԱԼԲԱ. Ես այդ ներում եմ քեզ: Կեսնքումդ այդ  
առաջին ամենամեծ օրն է:

ՍիլիԱ. (Ներս է գալիս). Անսուէրպէնից սուրհան-  
դակ: Ահա Օրանացու նամակը: Նա չի գալիս:

ԱԼԲԱ. Սուրհանդակն էր ասում այդ:

ՍիլիԱ. Ո՞չ, սիրտս է վկայում:

ԱԼԲԱ. Քո բերանով խօսում է իմ չար հրեշտակը:  
(Նամակը կարդալուց հերու նշան է անում երկուսին. նոքա-  
դալաններն են քաշում. ինքը միանակ է մնում—բեմի առա-  
ջին մասում): Նա չի գալիս: Մինչեւ վերջին բռպէն յե-  
տաձգում է իւր միտքը պարզ արտայայտել: Նա հա-  
մարձակւում է չըգալ: Այսպէս ուրեմն, այս անգամ  
հակառակ ենթադրութեանս, խելօքը չափազանց խելօ-  
քութիւնից անխելք գտնւեց: Ժամացոլցը շարժում  
է, էլի սլաքի մի փոքր ճանապարհ—և մի մեծ գործ

կամ գլուխ է բերւած, կամ կորցրած, անդարձ կորցրած, որովհետև էլ չի կարելի ոչ նորից ուղղել, ոչ էլ ծածկել: Ես վաղուց ամենը հասուն կերպով կշռադտել էլ և այդ հանգամանքն էլ էլ աչքի առաջ ունեցել ու վճռել, թէ այս գեղքում ինչ պէտք էր արած. իսկ հիմալ, երբ գործելու ժամանակ է, հազիւ եմ գիմազրում, որ թերն ու դէմը նորից հոգուս մէջ չըտառանուին: Արդեօք լաւ է միւսներին բռնել, երբ նա իմ ձեռից դուրս պըծնի: Յետաձգեմ և թողնեմ էգմոնտին իւդուրս պըծնի: Յանքանի հետ, այնքանի հետ գուրս ոլկւիլ, որոնք քայլների հետ, այնքանի հետ գուրս ոլկւիլ, որոնք միմիան հենց այսօր են գուցէ ձեռքումս: Ուժեմն բախտը քեզ վրալ էլ է բռնանում, դու անբռնացարելիք: Խնչ երկար մտածած, ինչ լու պատրաստած, ինչ սիրուն նախագիծ: Յոյսը որքան մօտ էր նպատակին: Եւ այդ վճռական բովէին երկու չարիքի մէջն ես: Ինչպէս քւետփի մէջ՝ ձեռքդ մեկնում ես դէմին ես: Ինչպէս քւետփի մէջ՝ ձեռքդ մեկնում է առանց ալի մութ ապագան. ձեռքդ ընկածը գլուրում է առանց քո գիտութեան, թէ արգեօք սալիտակ է, թէ սև: (Նա քո գիտութեան, թէ արգեօք սալիտակ է, թէ սև: Կա յաշադիր է դառնում. ինչպէս մէկը, որ մի բան է լսում, մօտքենում է պատուհանին). Այս նա է, էգմոնտը: Զիդ այդ-պէս հեշտ ներս բերեց քեզ և չըխրտնեց արեան հոտից և սուսերամերկ սգուց, որը դուան մօտ քեզ ընդունում է: Ահա՛ դու հիմա մի սոտով գերեզմանումն ես. ահա՛ և երկուսով: Այս, գուրգուրիք դորան և մէջը շոլի՛ր իւր վերջին, սրտոտ ծառայութեան համար: Ինչ ինձ ոչ մի ընարութիւն չէ մնում: Այսպիսի կուրութեամբ, ինչ-պէս էգմոնտն է այսակը մօտենում, նա չէ կարող երկրորդ անգամ իրան քո ձեռը մատնել: Լսեցէք (Ֆերդինանդն ու Սիլվան մօտենում են), Կ'անեք, ինչ որ հրաման եմ, վճիռս չեմ փոխելու: Ես կըրունեմ, ինչպէս կարող եմ, էգմոնտին, մինչև դու Սիլվիո լուր բերես: Ապա՛ մնացի՛ր մօտիկ: Քեզանից էլ է բախտը լափշտու

կում ամենամեծ թշնամուն քո ձեռովք բո նելլը։ (Ալլահին),  
Շպապի՞ր։ (Ֆէրդինանդին), Գնա՛ նորա առաջ։ (Ալբան  
մնում է միայնակ մի քանի վարդեան և լուս գնում-գալիս),

ՀԳՄ. (Ներս է գալիս): Ես գալիս եմ թագաւորին հրամանը լսելու, տեղեկանալու, թէ ինչ ծառայութիւն է պահանջում մեր հաւատարմութիւնից, որը նորան լաւիտեան նւիրած կը մնայ:

ԱԼԲԱ. Նա ցանկանում է նախ և առաջ ձեր խոր-  
հուրդի լսել:

Էղջր. Խնչ առարկալի մասին։ Օրանքացին Էլ է գալու։ Ես նորան այստեղ էի կարծում։

ԱԼԲԱ. Ցաւում եմ, որ հենց այս ժանրակիցու ժամին նա բացակայ է։ Ձեր խորհուրդը, ձեր կարծիքն եւ ուզում լսել թագավառը, թէ ինչպէս պէտք է այս նա հանգները նորից խաղաղել։ Այն, նա յոյս ունի, որ գուշ զօրեզ աշակցութեամբ կ'օգնէք նորան այս անհանգստութիւնները խաղաղելու և նոհանգներուն կարգը կատարեալ և յարատե անելու։

ԷԳՄ. Պուլք ինձնից աւելի լաւ կարող էք գիտե՞նալ, որ ամեն ինչ բաւականին խաղաղը ած է. այն, աւելի ևս խաղաղը ած էր, մինչ նոր զինուորների երեսը երկիւզով ու հոգսերով պղտորեց նոցա մտքերը:

ԱԼԲԱ. Գուշը, երևում է, ուզում էք հասկացնել որ ամենից լաւն այն եղած կը լինեք, եթէ թագաւորը ամենևին ինձ այնպիսի դիրքի մէջ դրած չըլինեք, որ ձեզ հարց տալի:

ՀՀԴՄ. Ներեցէք: Արդեօք թագաւորը պէտք է զօրք  
ուղարկած լինէր, թէ, ընդհակառակը, նորին մեծու-  
թեան ներկայութիւնը աւելի զօրեղ տապաւորութիւն  
չէր թողնիլ. այդ դատելն իս գործը չէ: Զօրքն այս-  
տեղ է, ինքը—ոչ: Բայց մենք պէտք է շատ ապե-  
րախտ, մոռացկոտ լինինք, եթէ ըլիւենք, թէ որքան

մենք պարտական ենք ուեգէնտուհուն։ Խոստովանում  
ենք, որ նա իւր՝ որքան խելօք, նոյնքան և քաջ վար-  
մունքով, ուժով և հեղինակութեամբ, համոզելով և  
խորամանկութեամբ ապստամբներին խաղաղոցեց և,  
ի զարմանս աշխարհի, մի ապստամբ ժողովրդի սակաւ  
ամիսների ընթացքում ճանաչել տւեց իւր պարտաւո-  
րութիւնները։

**ԱԼԲԱ:** Ես ալդ չեմ ուրանում։ Խոսվութիւնը հան-  
դըստացրած է, և ամենքը երեսում են իրանց հնագան-  
դութեան սահմանը մտած. բայց ամեն մէկի քմահա-  
ճութիւններից չէ կախւած թողնել ալդ սահմանը։ Ո՞վ  
պէտք է ժողովրդին արգելէ ապստամբել։ Ո՞ւր է նո-  
րան խտիանոյ ոյժը։ Ո՞վ է երաշխաւորում մեզ, որ  
նոքա այնուհետեւ հաւատարիմ և հպատակ կըմնան։  
Նոցա բարի կամքն է բոլոր գրաւականը, որ մենք  
ունինք։

**ԷԳՄՈՒՆԾ.** Բայց միթէ մի ժողովրդի քարի կտմքը  
ամենաապահով և տմենաազնիւ գրաւականը չէ։ Աստ-  
ւած վկայ, որ մի թագաւոր այն ժամանակ կարող է  
իրան աւելի ապահով զգալ, երբ կանգնած են ամենքը  
մէկի և մէկն ամենքի համար, աւելի ապահով՝ ընդդէմ  
ներքին և արտաքին թշնամիների։

**ԱԼԲԱ:** Հիմա դուք ուզում էք համոզել մեզ, որ  
այսաեղ հիմա ալդակէս է։

**ԷԳՄՈՒՆԾ.** Եթէ թագաւորը հրատարակէր մի ընդհա-  
նուր ներողութիւն, նա կըխաղացնէր մտքերը և շու-  
տով կ'երևար, թէ ինչպէս հաւատարմութիւնն ու սէրը  
վստահութեան հետ նորից վերտառունում են։

**ԱԼԲԱ:** Եւ ամեն ոք, որը թագաւորի մեծութիւնը,  
կընի որբութիւնն անպատւել է, արձակ համարձակ  
քըլք. ազրէր ուրիշներին իբրև պատրտստի օրինակ, թէ  
ինչպէս հրէշաւոր յանցանքներն անպատճէ են մնում։

**ԷԳՄՈՒՆԾ.** Բայց անմտութեան և արբեցութեան լան-  
ցանքը աւելի լաւ չէ ներել, քան թէ անգութ կերպով  
պատժել, մանաւանդ որ ալդպիսի հաստատ յոյս ու  
հաւաստիութիւն կայ, որ չարիքն էլ չի կրկնւելու։ Թա-  
գաւորներն ալդպիսով աւելի ապահով չեն։ Ներկայ և  
ապագայ սերնդից չեն գնահատւել և գովել նոքա,  
որոնք կարողացել են իրանց պատւին հասած վիրաւո-  
քանքը ներել, ափսոսալ և արհամարհել։ Նոքա հէնց  
նորա համար չեն Աստուծոյ հաւասար ընդունւում, Որը  
այնքան մեծ է, որ չէր ուզենալ ամեն սրբապղծու-  
թեան վրէժինդիր լինել։

**ԱԼԲԱ:** Հէնց գորա համար էլ պէտք է թագաւորը  
Աստուծոյ կրօնի արժանաւորութեան, իսկ մենք՝ թա-  
գաւորի հեղինակութեան համար պատերազմենք։ Ինչ  
որ պետն արհամարհում է պատժել, մեր պարտքն է  
վրէժինդիր լինել։ Անպատիմ, ըստ իմ կարծեաց,  
չըպէտք է մնայ ոչ մի յանցանք։

**ԷԳՄՈՒՆԾ.** Կարծում ես, թէ դու նոցա բոլորին կըհաս-  
նեմ։ Ամեն օր չէ լսում, թէ երկիւզը նոցա դէս ու  
գէն է ցրւում և երկրից դուրս քշում։ Հարուստներն  
իրանց ստացւած ըները, իրանց որդիներին, բարեկամնե-  
րին կ'առնեն, կը փախցնեն, ազքատն իւր օգատակար ձեռ-  
ները հարեանին կ'առաջարկէ։

**ԱԼԲԱ:** Կ'անեն նոքա, եթէ ըլկարողանան նոցա ար-  
գելել Ուստի և թագաւորը իւրաքանչիւր իշխանից  
ոլահանջում է խորհուրդ և գործ, ամեն կուսակալից՝  
Արջութիւն, այլ ոչ պատմութիւն, թէ բանն ինչպէս է,  
ինչպէս կը լինէր, եթէ թողնէին շարունակել իւր  
նախկին ձեռվի։ Մէկ շարիքի գէմ կանգնելնայել, յոյսե-  
քով իրան խաբել, իրան ժամանակի բերմունքին յանձ-  
նել, մէկմէկ զրան լարձակւել, ինչպէս բարեկենդանի  
հաղերում, այնպէս որ աղմուկ լինի և երեալ, թէ մի  
հաղերում,

քան են զինում, երբ ոչինչ չէ շինուած—այդ չէ նշանակում կասկածանքի տակ ձգել իրան, թէ զւարճութեամբ ես տեսնում այդ ապատամբութիւնը, որը կուզեիր թէև շրաբուցանել, բայց գէթ նայել սիրով: (Եզրանոը որամաշիր է բարկանալ, բայց իրան զսպում է, մի փոքր լոելուր նոսում է խաղալ):

**ՀԳՄՌՆԾ.** Ամեն գիտաւորութիւն ակնյալտնի չէ ինում և շատ մարդոց գիտաւորութիւնը կարելի է չարմեկնել: Մարդ ստիպւած է, օրինակ, ամեն կողմից լսելու, թէ թագաւորի գիտաւորութիւնը այնքան նահանգները միաձև և պարզ օրէնքներով կառավորելը չէ, կրօնի զեհութիւնն առաջողքելը և իւր ժողովրդին մի ընդհանուր խաղաղութիւն տալը չէ, որքան աւելի նոցա անպայման նւաճելը, նոցա հին իրաւունքները լավագաւակելը, իրան նոցա կալածների տէր դարձնելը: Անհմանափակել ազնւականութեան գեղեցիկ իրաւունքը, ները, որոնց համար և եթ ազնւականութիւնը կարող է նորան ծառալել, նորան նւիրել իր կեանքն ու արեք: Կրօնը, ասում են, մի հոյակապ գորդ է, որի յետեք մարդ ամեն վտանգաւոր միտք տւելի հեշտ կարող է լրանալ: Ժողովուրդը ծունկ է չոքում, աղօթում նկրած սուրբ նշանին, իսկ ետեւ գարան է մտած թըռչութիւնը, որը ուզում է նոցա որսալ:

**ԱԼԲԱ:** Սյս պէտք է լսեմ ես քեզնից:

**ՀԳՄ.** Ինձնից, բայց ոչ իմ մտածմունքները, այլ այն, ինչ որ երբեմն ալնտեղ, երբեմն այստեղ մեծ ու փոքր, խելօք ու խելառ խօսում ու արձակ տարածում: Են: Նիդերլանդցիները վախենում են մի կրկնակի լծեց: Եւ ով է երաշխաւորում նոցա աղատութեան մասին: ԱԼԲԱ: Ազատութիւնն, սիրուն խօսք, երբ մարդ, ուզիկ համանալ: Ի՞նչ ազատութիւն են ուզում: Ի՞նչ է ամենաազատի ազատութիւնը.—գործել իրաւը: Բայց,

թագաւորը այդ չի արգելել: Ո՛չ, ո՛չ նոքա իրանց ազատ չեն համարում, երբ չեն կարող վնասել, թէ իրանց և թէ ուրիշներին: Աւելի լաւ չէր լինի հրաժարել, քան մի այգպիսի ժողովուրդ կառավարել: Երբ նեղում են արտաքին թշնամիները, որոնց մասին ոչ մի քաղաքացի չէ մտածում, այլ միայն իւր մերձաւորով է զբացւած, և թագաւորը պահանջում է օգնութիւն, այնժամ նոքա միմեանց հետ գժտում են, դաւաճանելով պետութեան, միանում են թշնամիների հետ: Աւելի լաւ չէ նոցա այնպէս սահմանափակել, որ կարելի լինի պահել, ինչպէս երեխաների, և, ինչպէս երեխաների՝ առաջնորդել դէպ իրանց բարին: Հաւատած ինձ, որ ամբոխը նորդել պէպ իրանց բարին: Հաւատած ինձ, որ ամբոխը չի ծերանում, չի խելօքանում, ամբոխը միշտ մնում է երեխայամիտ:

**ՀԳՄ.** Ինչպէս սակաւ է պատահում, որ մի թագաւոր խելքի գալ: Բայց աւելի լաւ չէ, որ շատերը գտաւոր խելքի գալ: Բայց մէկին և ոչ անգամ շատերին վստահանալին, քան թէ մէկին: և ոչ անգամ մէկին, այլ այդ մէկի քչերին, ժողովրդին, որը ծերանում է իւր տիրոջ աչք և ունքը պահելով: Այդ միքան իրաւունք ունի խելօք լինելու:

**ԱԼԲԱ:** Գուցէ հէնց նորա համար, որ նա, ժողովուրդը, իւր կամքին չէ թողնեած:

**ՀԳՄ.** Եւ գորա համար էլ ոչ ոք չէր ուզենալ ու ժարութեամբ ինք իւր գլխին մնալ: Թաղ անեն, ինչ ուզում են: Քո հարցին պատասխանել եմ և կրկնում եմ: Անկարելի է: Ել լինիլ: Ես ճանաչում եմ իմ երկրացիներին: Նոքա Աստուծոյ հողը կոխելու արթանի մարդիկ են: իւրաքանչիւրը պինդ իւր համար, մի փոքրիկ թագաւոր, տոկուն, գործոն, լնգունակ, հաւատարիմ, յարած հին բարքերին: Դժւար է նորա վստահութիւնը գրաւել, բայց հեշտ է պահել: Յամառ և անհինուն: Նոցա ճնշել կարելի է, բայց նւաճել—ոչ:

ԱԼԲԱ: (Այդ միջոցին մի քանի անգամ շուրջն է նակում):  
Եւ դու կարող պէտք է լինէիր այդ բոլորը թագաւորի  
ներկայութեամբ կրկնել:

ՀԴՄ. Աւելի վատ, եթէ նորա ներկայութիւնն ինձ  
վախեցնէր: Աւելի լաւ նորա համար, նորա ժողովրդի  
համար, եթէ նա ինձ սիրտ տար, եթէ նա ինձ վստա-  
հութիւն ներշնչէր դեռ աւելի շատ ասելու:

ԱԼԲԱ: Ինչ որ օգտակար է, ես էլ կարող եմ լսել  
նորա նման:

ՀԴՄ. Ես նրան կ'ասէի. — Հովիւը հեղտութեամբ  
քարող է քշել իւր տռաշը ոչխարների մի հօտ. եզը  
քաշում է իւր արօրն տռանց ընդդիմադրութեան. բայց  
երբ ուզում ես մի ազնիւ ձի հեծնել, պէտք է նորա  
ընոյթին յարմարւիս. նորանից ոչ մի անխելք բան, ոչինչ  
անխելք կերպով չը պահանջես: / Դորա համար և քա-  
ղաքացին ցանկանում է պահպանել իւր հին ստհմանա-  
գրութիւնը, կառավարւել իւր հայրենակիցներից, որով-  
հետեւ նո գիտէ թէ ինչպէս պէտք է առաջնորդւի,  
որովհետեւ կարող է նոցանից յուսալ անշահախնդրու-  
թիւն և իւր վիճակին կարեկցութիւն:

ԱԼԲԱ: Եւ պետը պէտք է իշխանութիւն չունենալ  
այս վաղեմի սովորութիւնը փոփոխելու. և ուղղակի այս  
չըպիտք լինէր նորա ամենասիրուն արտօնութիւնը: Ի՞նչ  
կալ մնայուն այս աշխարհում, որ մի պետական կար-  
գադրութիւն կարողանայ մնալ: Որոշեալ ժամանակամի-  
ջոցում միթէ ամեն յարաբերութիւն չըպէտք փոխւի:  
Եւ մի հին կազմակերպութիւն դորա համար չի կարող  
ուղղակի հազարաւոր չարիքների պատճառ դառնալ,  
որովհետեւ ժողովրդի ներկալ վիճակին լիովին չէ հա-  
մապատասխանում: Ես վախենում եմ, որ գուցէ այս  
հին իրաւունքները նորա համար են հաճելի, որովհետեւ  
կազմում են թագստոցներ, որոնց մէջ խելօքը, ուժեղը՝

ֆ վնաս ժողովրդի, կարող է թագնւել, կամ միջից դուրս  
ալրծնել:

ՀԳՄ. Իսկ բարձրագուն իշխանութեան անսահման  
ձեռնձգութիւնները և այս քմահաճ փոփոխութիւնները  
միթէ սոքա նշաններ չեն, թէ մէկն ուզում է անել  
այն, ինչոր հազարներն իրաւունք չունին անելու: Նա  
կամենում է միայն իրան ազատ գարձնել, որ կարողա-  
նայ իւր ամեն մի ցանկութեանը յագուրդ տալ, իւր  
ամեն մի դիտաւորութիւնը ի կատար ածել եթէ մենք  
նորան, այդպիսի բարի և իմաստուն թագաւորին, բո-  
լորովին վատահանայինք, երաշխաւորում է նա մինչև  
իւր յաջորդների համար, որ նոցանից ոչ մէկը առանց  
ակնածութեան և առանց խնայելու չի կառավարիւ:  
Ո՞վ կ'ազատէ մեզ այն ժամանակ կատարեալ քմահա-  
ճութիւնից, եթէ նո իւր ծառաներին, իւր մերձաւոր-  
ներին ուղարկէր, որոնք տռանց երկիրն ու նորա կա-  
րիքը ճանաչելու՝ ըստ իրանց քմահաճութեան ձևէին  
ու կտրէին, ոչ մի ընդդիմադրութիւն չըգտնէին և  
իրանց ազատ համարէին ամեն պատասխանատութիւնից:

ԱԼԲԱ: (Որը այդ միջոցին էլի շորջն է նակում): Դո-  
րանից էլ աւելի բնակտն բան չըկայ, քան որ մի թա-  
գաւոր կամենում է լինել ինքնակալ, և իւր հրաման-  
ներն ամենայն սիրով նոցա է յանձնում կատարելու,  
որոնք նորան հասկանում և հասկանալ են ուզում և  
որոնք նորա կամքը անպայման կատարում են:

ՀԳՄ. Նոյնքան բնական է և այն, որ քաղաքա-  
ցին ուզում է կառավարւել նորա միջոցով, ով նորա  
հետ ծնւել աւ սնւել է, ով նորա հետ նման գաղա-  
փար ունի կազմած իրաւի ու անիրաւի մասին, և որին  
նա կարող է ընդունել եղբօր տեղ:

ԱԼԲԱ: Եւ սակայն ազնւականութիւնը իւր այս  
եղբարներին շատ անհաւատար է բաժին հանել:

ՀՅԴ. Այդ գարերից առաջ է պատահել և հիմա-  
տանում են առանց նախոնձի: Բայց եթէ նոր մարդիկ՝  
առանց կտրիքի, ուղարկւեն, որոնք կամենալին երկորդ  
անգամ ի հաշիւ ազդի հարստանալ, եթէ մարդ տեսնի  
իրան մի խիստ, յանդուզն և անպայման շահախինդրու-  
թեան զոհ գնալիս, այս մի ալնալիսի խոռվութիւն առաջ  
կը բերէր, որ ալնպէս հեշտ ինքն իրան չեր խաղա-  
ղիւ:

ԱԼԲԱ. Դու ինձ ասում ես այն, ինչ որ ես չըսէտք  
է լսէի: Ե՞ս էլ եմ օտարական:

ՀՅԴ. Եթէ այդ ասում եմ քո երեսին, այդ ցոյց է  
առաջիս, որ քեզ չունիմ աչքի առաջ:

ԱԼԲԱ. Եւ այդպէս էլ չեի ուզենալ լսել այդ քեզ-  
նից: Թագաւորն ուղարկեց ինձ այն լուսով, որ այսուղ-  
ես ազնւականութեան աջակցութիւնը պէտք է գտնէին  
Թագաւորի ասածն ասած է: Թագաւորը երկար կշռա-  
գատելուց յետոյ տեսել է, թէ ինչ է նպաստաւոր մի  
ժողովրդի: իրերը չեն կարող մնալ ու շարունակել, «  
ինչպէս մինչև հիմա: Թագաւորի գիտաւորութիւնն է  
նոցա սահմանափակել իրանց իսկ սեպհական օգտի-  
համար. նոցա սեպհական փրկութիւնը, եթէ այլ կերպ  
չի կարելի, զօրով ընդունել տալ նոցա. վնասակար քա-  
ղաքացիներին զոհել, որպէս զի մնացածները խաղաղու-  
թիւն գտնեն, կարողանան մի իմաստուն կառավարու-  
թեան բարիքը վալելի: Այս է նորա վճիռը: Այս քանին  
ազնւականութեանն յայտնելու հրամանն ունիմ: Եւ  
խորհուրդ եմ պահանջում յանուն նորա, թէ «ինչպէս»  
և ոչ թէ «ինչ» պէտք է անել, որովհետև «ինչ» ը նա-  
է վճռել:

ՀՅԴ. Իժբախտաբար ձեր խօսքերը արդարացնում  
են ժողովրդի սարսափը, ընդհանուր սարսափը: Որով-  
հետև նա ալնպէս է վճռել, ինչպէս ոչ մի իշխան չը-

պէտք է վճռէր: Նա իւր ժողովրդի ոյժը, նոցա սրտերը,  
ուն դադախարը, որը նոքա իրանց մասին կազմել են,  
ուզում են թուլացնել, ճնշել, խորտակել, որպէս զի  
կարողանայ հեշտ կառավարել: Նա կամենում է նոցա  
ինքնուրունութեան ներքին ծուծը փճացնել, անկասկած  
նոցա բախտաւորացնելու զիտաւորութեամբ: Նա կամե-  
նում է նոցա ոչնչացնել, որպէս զի նոքա մի «ինչ»  
գառնան, մի «ուրիշ ինչ»: Ո՞չ, եթէ նորա գիտաւորու-  
թիւնը բարի է, այս սխալ ճանապարհ է բռնել, Թա-  
գաւորին» չեն ընդդիմագրում, այլ հակառակում են  
«այն թագաւորին», որը առաջին գմբախտ քայլն է  
անում դէպի մի սխալ ճանապարհ:

ԱԼԲԱ. Խնչպէս որ դու ես մտազբւած, երեսում է,  
թուր փորձ է մեր միաբանել կամենալը: Դու թագա-  
գաւորի մասին աննշան՝ և նորա խորհրդականների մասին—  
անարդական համարումն ունիս, եթէ կարծում ես, որ  
այս ամենը արդէն չի մտածւած, դատւած ու կշռատ-  
ած: Ես ոչ մի պատէր չեմ ստացել մէկ էլ նորից  
քննելու ամեն թեր ու դէմ: Հնազանդութիւն եմ պա-  
քննելու ամեն թեր ու դէմ: Հնազանդութիւն եմ պա-  
քննելու ամեն թերից, իսկ ձեզնից—առաջնորդներից և  
հանջում ժողովրդից, իսկ ձեզնից—առաջնորդներից և  
ազնիւներից—խորհուրդ ու գործ, իբրև գրաւական այս  
անպայման պարտաւորութեան:

ՀՅԴ. Դէ պահանջիր մեր գլուխները, և ամեն ինչ  
ժիշտնգամից կը վերջանալ: Սրդեօք պարանոցը պէտք է  
այս լծի տակ ծռւի, թէ կացնի տակ կծկւի—մի ազնիւ  
հոգու համար կարող է միւնոյնը լինել: Հէնց իզուր եմ  
ազդքան խօսել: Այդքան խօսելն զուր ժամավաճառու-  
թիւն է եղել:

ԺԷՐԴԻ. (Պալիս է): Ներեցէք, որ ընդհատում եմ Ձեր  
խօսակցութիւնը: Ահա մի նամակ, որի բերողը թախան-  
չանքով մնում է պատասխանի:

ԱԼԲԱ. Իրաւունք տւէք բովանդակութիւնն իմասնալու (մի կողմ):

ՖՀՄԴ. (Եգմոնդին). Նատ հիանալի ձի է, որը ձերմարդիկը բերել են ձեզ տուն տանելու:

ՀԳՄ. Նա ամենավատը չէ: Բաւականին ժամանակ է, ինչոր նա ձեռքիս է. մտադիր եմ ձեռքիցս հանել: Եթէ ձեզ դիւր է գալիս, գուցէ համաձայնիմ վաճառել:

ՖՀՄԴ. Լաւ, տեսնենք: (Ալբան ակնարկում է իւրուրում, որը ի՞ո՞ է քաշում):

ՀԳՄ. Մնաք բարով: Արձակեցէք ինձ, որովհետեւ Աստւած վկայ, էլ ասելու ոչինչ չունիմ:

ԱԼԲԱ. Բարեթախտաբար դէպքն արգելեց քեզ միտքդ աւելի մատնելու: Անզգուշաբար ես ես տալիս սրտիդ ծալքերը և դու քո դէմ աւելի խիստ ես գանգատում, քան մի սխերիմ հակառակորդ կարող էր անել:

ՀԳՄ. Սկզ յանդիմանութիւնն ինձ չի շփոթում: Ես ինձ բուտականին ճանաչում եմ և գիտեմ, ինչպէս եմ թագաւորին պատկանում. աւելի շատ, քան շատերը, որոնք՝ նորու ծտուալութեան մէջ, իրանց անձին են ծառալում: Ակամայ եմ բաժանուում այս վէճից՝ առանց այն վերջացրած տեսնելու. բայց ցանկանում եմ միայն, որ տիրոջ ծառալութիւնն ու երկրի շահը կարտղանան մեզ շուտով միտքանեցնել: Գուցէ մի երրորդ խօսակտութիւն, մնացած իշխանների ներկայութիւնը, որոնք այսօր բացակայ են, մի բախտաւոր վայրկեանում գլուխ բերեն այն, ինչոր այսօր անկարելի է թւում: Այս յուրազնում եմ:

ԱԼԲԱ. (Քակոյն Ֆէրդինանդին նշան է տալիս): Կտնդնիր, Եգմոնտ, սուրդ: (Միջին դուռը բացւում է, դալանը միքն է զինուորներով, որոնք անշարժ են):

ՀԳՄ. (Զարմացած, լուսութիւնից լեռով): Այս էր նպա-

տակդ: Դորա համար ես կանչել ինձ: (Առւրը քաշէրով պաշտպանուելու), Միթէ ես անգէն եմ:

ԱԼԲԱ. Թագաւորի հրամանով դու իմ գերին ես: (Երկու կողմից զինուորները մրնում են):

ՀԳՄ. (Մի փոքր լուելուց լեռով), Թագաւորին. Օրանցին, Օրանացի: (Մի փոքր լուելուց լեռու տալիս է սուրը): ՈՒ առ, նա աւելի յաճախ թագաւորի դատն է պաշտպանած, քան այս կուրծքը հովանաւորած: (Միջին դընով ներս է մրնում սենեակը, զինուորները հետեւում են նորան, նովնակէս Ֆէրդինանդը կանգնած է մնում):

ՎԱՐԱԳՈՂՅՐ:

ԿԱՐԱ. Այդ ոյժն ինձ անյաղթելի չէ երևում։  
Չուր տեղը թողխօսք չըվատնենք։ Ահա գալիս են հին,  
ազնիւ, քաջ տղաժարդիկ։ Լսեցէք, բարեկամներ, հա-  
րևաններ, ասացէք, ինչ եղաւ Եգմոնտի հետ։

Հիհնն. Ինչ է ուզում այդ տղիկը. լոեցրէք  
նորան։

ԿԱՐԱ. Մօտեցէք, որ ցածր խօսենք. մինչև որ  
միանանք՝ մի փայլկեան անդամ չըպէտք է դանդաղենք։  
Յանդուգն բռնաբարութիւնը, որը համարձակում է  
նորան զղթայել, արդէն սրում է դաշունը՝ նորան սպա-  
նելու։ Ո՛չ, բարեկամներ, աղջամդղի տմեն մի քայլի  
հետ ես աւելի երկուս եմ գառնում։ Ես վախենում եմ  
այս գիշերից։ Եկէք բաժանւենք. արագ տունէտուն  
վաղելով՝ քաղաքացիներին դուրս կանչենք։ / Սմեն ոք  
ժող վերցնէ իւր հին սուրը։ Շուկայում մենք նորից  
միմեանց կը հանդիպենք, և մեր հոսանքն իւրաքանչիւ-  
րին իւր հետը կը մղէ։ Թշնամիները կը տեսնեն իրանց  
մեզնից շըշալատւած և ողողւած, ու կը ճնշւեն։ / Մի  
բուռն ստրուկներ ինչպէս կը կարողանան մեզ ընդու-  
ժադրել։ Եւ նա նորից կը վերադառնայ մեր մէջ, կը տես-  
նէ իրան ազատւած և կարող է միմիամ շնորհակալ  
լինել մեզնից, մեզնից, որոնք նորսն այնքան շատ  
ու շատ պարտական ենք։ Կը տեսնէ գուցէ, անկասկած  
նա նորից կը տեսնէ արշալոյսը ջինշ երկնքում։

Հիհնն. Ինչ է պատահել քեզ, աղջիկ։

ԿԱՐԱ. Միթէ գուք ինձ չէք հասկանում։ Կոմայի  
մասին եմ խօսում։ Ես խօսում եմ Եգմոնտի մասին։

ՅՆՏՏԵՐ. Այդ անունը մի տալ, դա մահաբեր է։

ԿԱՐԱ. Անունը չըտանլ. ինչպէս. այդ անունը չը  
տանլ. Ո՞վ չէ այդ անունը տալիս ամեն մի գէպում։  
Որտեղ չէ նա գրած։ Այն աստղերի մէջ ես յաճախ  
կարդացել եմ նորա անունը տառառտառ։ Զանւանել.

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

### ՏԵՍԱԲԱԿ 2.

ՓՈՂՈՋ. մթնշաղ

ԱԼԱՐԻ. ԲՐԱՅԵՆՔՈՒԹՈՒԹ, ՔԱՂԱ ՔԱՑԻՆԵՐ

ԲՐԱԿԵՍՅՈՂՈՒԹ. Սիրելիս, ի սէր Աստուծոյ, ինչ ես  
ուզում անել։

ԿԱՐԱ. Արի հետո, իրակենքուրդ։ Երևում է, որ  
մարդոց չես ճանաչում. մենք նորան կ'ազատենք ան-  
կասկած, որովհետեւ դէպի նա տածած սէրը անսահ-  
ման է։ Երդուում եմ, որ իւրաքանչիւր ոք զգում է իւր  
մէջ ամենաջերմ տենչանք նորան ազատելու, այդպիսի  
ժանկապէն կեանքը վտանգից կորզելու և ամենաազա-  
տին վերադանելու ազատութիւնը։ Արի. միմիայն մի  
ձայն է պակաս, որ նոցա համախմբէ։ Նոցա հոգու մէջ  
դեռ բոլորովին թարմ կենդանի է այն, ինչոք նոքա  
պարտական են նորան։ Եւ գիտեն, որ նորա ամենակա-  
ռող բազուկն է միայն նոցա կարօտից հեռու պահում։  
Գիտեն, որ թէ նորա և թէ իրանց սիրոյն պէտք  
է ամեն ինչ վտանգի դնեն։ Բայց ինչ ենք վտանգում։  
Նատշատ մեր կեանքը, որը պահպանելու համար չարժէ  
էլ չարչարւիլ, երբ նա էլ կենդանի չի լինի։

ԲՐԱԿ. Դժբախտ, գու չես տեսնում այն ոյժը, որը  
մեզ երկաթէ շղթալով կապել է։

այս ինչ է նշանակում բարեկամներ: Բարի, ազնիւ հարևաններ, դուք երազում էք: Ուշքի եկէք: ինձ մտիկ միք անիլ այդպէս ակնապիշ և երկչոտ: Դէս ու դէն միք նախիլ զարգանդած: Ես միայն այն եմ աղաղակում, ինչ որ իւրաքանչիւրը ցանկանում է: միթէ իմ ձանը ձեր որտի ձայնը չէ: Այս սարսափելի գիշերը ով չէր ծնկների վրայ ընկնիլ և գեռ իւր խոռվարութ անկողինը ըլմտած՝ ջերմեռանդ չէր աղերսիլ երկնքից նորա համար աղատութիւն: Մէկմէկու էք հարցնում: դուք. թող ամեն մէկն իրան հարցնէ: Եւ ով չի հետս աղաղակիլ. «Եզմոնտի աղատութիւնը, կամ մեր մահը»:

**ՅԵԺՏՀԵՐ.** Աստւած ազատէ, ամ դժբախտութիւն:

**ԿԼԱՐԱ.** Մնացէք, մնացէք և գաղտուկ միք փախչիլ նորա անւոն առաջ, որին դուք սովորաբար այնպէս ուրախ վազում էիք դիմաւորելու: Եթէ լսում էին նորա մասին, երբ ասւում էր «Եզմոնտը գալիս է, նա գալիս է Գէնտից», իրանց բախտաւոր էին համարում այն փողոցի բնակիչները, որոնց միջով նա պէտք է իւր ձին քշէր: Իսկ երբ դուք նորա ձիերի դոփիւնը լսում էիք, ամեն ոք աշխատանքը դէն էր ձգում: Նորա դէմքից ուրախութեան և յուսոյ հայեացքը՝ արեգակի ճառ ուագայթի նման, անցնում էր ձեր տրտմած դէմքերին: որը դուք պատուհաններից դուրս էիք հանում: Պաներէ շէմքերում երեխաներիս վեր էիք բարձրացնում և նոցահասկացնում. «Տես, այն Եզմոնտն է, ամենամեծը. սա նա է, որից դուք մի օր սպասելու էք աւելի երջանիկ օրեր, քան ձեր խեղճ հալրեն են անցրել»: Միք թողնիլ, որ մի օր ձեր երեխաները ձեզ հարցնեն, «Ուր է նա, ուր են այն ժամանակները, որ դուք խոստանում էիք»: Եւ այդպիսի դատարկախօսութեամբ և անգործութեամբ մենք նորան դաւաճանում ենք:

**ԶՈՒՄԸ.** Ամաչեցէք, բրակենբուրգ. միք թողնիւ

նորան այդպէս կարւել: Աղէտք էք բերելու մարդու գլխին: ԲՐԱԿ. Սիրելի կլարա, արի գնանք. ինչ կ'ասէ մայրդ. դուցէ...

**ԿԼԱՐԱ.** Գուցէն որն է: Ինձ երեխան ես կարծում, թէ խելացնոր: Էլ ոչ մի յուսով չես կարող խախտել իմ մէջ այս սարսափելի համոզումը: Դուք պէտք է ինձ լսէք. և դուք կը լսէք, որովհետեւ ես ձեզ այլալւած եմ տեսնում, իսկ ինքներդ չէք կարող ձեզ սիրտ տալ: Թողէք ներկայ վտանգի վրայով միայն մի հայեացք ձգենք անցեալի վրայ, մօտակայ անցեալի: Դարձէք ձեր ուշքը դէպի աղագան: Միթէ կարող էք դուք ապրել. կապրէք դուք, եթէ նա մեռնի: Նորա վերջին շնչի հետ — աղատութիւնն էլ իւր վերջին զունչը կը փչէ: Ի՞նչ էր նա ձեզ համար: Ում համար ենթարկեց նա իրան վերահաս վտանգին: Նորա վէրքերն ստացւում ու առողջանում էին միմիայն ձեզ համար: Այն մեծ հոգին, որը ձեզ բոլորիդ բովանդակում էր, փակւած է մի բանտում ու նենգ սպանման սարսափը սաւառնում է նորա շուրջը: Նա մտածում է գուցէ ձեր մասին. նա յոյս ունի ձեր վրայ, նա, որը սովոր էր միմիայն տալու, միայն կատարելու:

**ՀԻՒՄԸ.** Քանոր, եկէք:

**ԿԼԱՐԱ.** Թէե ես ձեզ նման բազուկներ և ուզեզ շունիմ, բայց ունիմ այն, ինչ որ հէնց ձեզ պակաս է — քաջութիւն և արհամարհանք դէպի վտանգը: Երանի իմ շունչը կարողանար ձեզ վառել, երանի կարողանալի իմ կրծքիս սեղմելով ձեզ տաքացնել: Եկէք: Ես ձեզնով շըրջապատւած եմ ուզում գնալ: Ինչպէս անզէն դրօշը ծածանելով առաջնորդում է մարդոց մի ազնիւ բանակ, այդպէս էլ պէտք է իմ հոգին ձեր գլուխների վրայ շողշողայ, իսկ սէրն ու քաջութիւնը տատամսկոտ, ցրւած ժողովրդին միացնէ ու սարսափելի զօրք կազմէ:

ԵՆՏՏԵՐ. Մի կողմը տար սորան, ավսոսս գալիս է:  
(Քաղաքացիները եր են քաշում):

ԲՐԱԿ. Կլարա, չե՞ս տեսնում, որտեղ ենք:

ԿԼԱՐԱ. Որտեղ. երկնքի տակ, որը՝ կարծես, այն-  
պէս յաճախ աւելի հիանալի էր կամար կապում, երբ  
ազնիւը նորա տակ շրջում էր: Այս պատուհաններից  
չորս հինգ գլուխ մէկմէկու վրայ դուրս էին ցցւում:  
Այս դռներում նոքա դոփում էին, գլուխ տալիս, երբ  
նա ալդ վատերին էր մտիկ տալիս: Ինչպէս նոցա սի-  
րում էի ես, երբ նոքա պատում էին նորտն: Եթէ նա  
բռնակալ եղած լինէր, թող նորա անկումից մի կողմը  
քաշւէին: Բայց նոքա սիրում էին նորան: Ո՞հ, գուք  
ձեւուներ, որոնք գէպի գլխարկներն էիր պարզում,  
չէք կարող հիմայ պարզւիլ դէպի սուրբ: Իսկ մենք,  
Բրակենբուրգ, նոցա յանդիմանում ենք: Այս բազուկ-  
ները, որոնք նորան այնպէս սեղմում էին, ինչ են անում  
նորա համար: Խորամանկութիւնն աշխարհումս այնքան  
քաներ արաւ: Դու ճանաչում ես ճանապարհներն ու  
արահետները, ճանաչում ես հին ամրոցը: Անկարելի  
ոչինչ չրկալ: Ինձ մի խորհուրդ տուր:

ԲՐԱԿ. Երբ մենք տուն գնանք:

ԿԼԱՐԱ. Լաւ:

ԲՐԱԿ. Այնտեղ անկիւնում տեսնում եմ Ալբայի  
պահնորդներին: Թող բանականութեան ձայնը քո սրտի  
մէջ ներս թափանցի: Դու ինձ երկչոտ ես համարում:  
Չես հաւատում, որ ես կարող լինէի քո սիրոյն մեռնել:  
Արդ երկուսս էլ գիտ ենք. ինչպէս դու, այնպէս էլ  
ես: Չես տեսնում անկարելին: Երանի ուշքի գալիր:

Ուշքդ գրէդ չէ:

ԿԼԱՐԱ. Ուշքս վրէս չէ: Զդւելի է: Բրակենբուրգ,  
ձեր խելքը տեղումը չէ: Առաջները համարձակ հերո-  
սին պատում էիք, նորա բարեկամ, պաշտպան և յոյս

էիք անւանում. նորան կեցցէ՛ էիք աղաղակում, երբ  
գալիս էր: Առաջները կանգնում էի անկիւնում, պա-  
տուհանը կիսատ բաց անում և ականջ դնում թափուն,  
և իմ սիրտն աւելի թունդ էր զարկում, քան ձեր բո-  
լորինդ: Եւ հիմա էլ իմ սիրտն աւելի թունդ է զար-  
կում, քան ձեր բոլորինը: Դուք թափնուում էք, երբ  
կարիք կայ. ուրանում էք նորան և չէք զգում, որ  
դուք կորած էք, եթէ նա կորչի:

ԲՐԱԿ. Օքի գնանք տուն:

ԿԼԱՐԱ. Տուն:

ԲՐԱԿ. Ուշքի եկ միայն. շուրջդ նայիր: Այս այն  
փողոցներն են, ուր դու միայն կիւրակիներն էիր ոտ  
կոխում, որոնցով դու եկեղեցի էիր գնում ամօթխած,  
ուր դու չափազանց լրջօրէն բարկանում էի՛, երբ ես  
քաղցր, բարեկ խօսքերով քեզ ընկերանում էի: Դու  
կանգնում ես, խօսում, գործում ողջ աշխարհի աչքի  
առաջ: Մտածիր, սիրելիս. ինչ օգուտ մեզ նորանից:

ԿԼԱՐԱ. Տուն, այո՛, ուշքի եմ գալիս: Գնանք տուն,  
Բրակենբուրգ: Դու ճանաչում ես մեր տունը: (Գնաւան են).

## ՏԵՍԱԲԱՆ Բ.

Բանտը մի լապտերով լուսաւորւած. խորքում  
մի բազմոց:

ԷԳՄ. (Միայնակ). Հին բարեկամ, անդաւաճան քուն,  
գու էլ ես ինձնից փախչում, ինչպէս մնացեալ բարե-  
կամներս: Ինչպէս յօժարութեամբ ցած էիր իջնում  
ազատ գլխիս վրայ և սիրոյ ձիթենեաց պատկի նման

քունքերս զովացնում: Պատերազմի մէջ, կեանքի ալիք-ներում, հանգստանում էի ազատ շնչելով քո գրկում, նորափթիթ մանկան նման: Երբ փոթորիկները ոստերի ու տերեւների միջով վշշում էին, ճիւղ ու կտտար ճռուալով շարժում, ներսը միջուկի կորիզը հօ անշարժ էր մնում: Հիմա ինչն է քեզ սարսկնում: Ի՞նչ է հի- մա դղորդում քո աննկուն և հաստատուն միտքը: Ես զգում եմ, սպանման կացնի ձայնն է այս, որը արմատ-ներս շարժում է: Դեռ կանգնած եմ ուղիղ, բայց մի ներ- քին սարսուռ անցնում է ամբողջ մարմնովս: Այս, յաղ- թում է նա, նա, այդ մատնից բռնութիւնը: Նա փո- քում է այն ամուր, բարձր բնի տակը և, նախքան կլե- պի չորանալը՝ ճռուալով ու ջարդուփշուր լինելով կընկ- նի նորա կատարը: Բայց դու ինչո՞ւ հիմա, որ այնքան անգամ ծանր հոգսերը ստպոնի պղպջակների նման գլխիցդ հալածել ես, ինչո՞ւ ոյժ չունիս փախցնելու այն նախազգացմունքը, որը քո մէջ հազար տեսակ վեր ու վեր է անում: Երբւանից է քեզ երկիւղալի թւում մահը, որի փոփոխող ուրւականների հետ, ինչպէս երկրային միւս պատկերների հետ, դու խաղաղ տպրում էիր: Ելի նոյնը չէ, նոյն վաղահաս թշնամին, որին կարոտով ախուեանի ոլէս առողջ կուրծքդ գէմ էիր դնում: Բանոը, այդ գերեզմանի նախապատկերը՝ հերոսին, ինչպէս և վատին հակակելի է: Երբ իշխանները մեծահանդէս ժողովներում հեշտ վճռելու բանը հազար անգամ ծամ- ժողովներում հեշտ վճռելու բանը հազար անգամ ծամ- ժըմելով կշռադատում էին, արդէն այն ժամանակ ան- տանելի էր ինձ բրդեալ տթոսի վրալ նստելը, և դահ- լիճի ազօտ պատերի մէջ առաստաղի գերաններն ինձ ճնշում էին: Առասի շտապում էի հեռանալ, հէնց որ հնար էր լինում, և շուտով ձի հեծնում, խոր շունչ քաշելով: Եւ շուտով գնիքս, այնտեղ, ուր մենք պէտք է լինենք, դէսի դաշտը, ուր մեզ արջապտում են երկ-

լից գոլորշիացող բնութեան ամեն բարիքը և երկնքի միջով շնչող ասաղերի բոլոր օրհնութիւնները, ուր մենք երկրածին տիտանի նման մեր մայրհողի հետ շփւելովն աւելի ուժով ենք վեր սաւառնում: Ուր մենք զգում ենք մեր բոլոր երակներում ամբողջ մարդկութիւնն ու մարդկային ձգտումները. ուր առաջ նետելու, յաղթե- լու, կոտորելու, իւր բռունցքը գործածելու, տիրելու, նւաճելու ցանկութիւնը բորբոքում է երիտասարդ որ- սորդի հոգում: Ուր զինուրն արագ քայլերով ողջ երկ- րին տիրելն իւր բնատուր իրաւունքն է համարում և սարսափելի ազատութեամբ՝ ինչպէս կարկտախառն մըր- քիկը, մարգագետին, գաշտ ու անտառ փճացնելով, ջարդում է և մարդկային ձեռքով քաշած ոչ մի սահ- ման չէ ճանաչում: — Դու միայն պատկեր ես, երազա- կան լիշողութիւն այն բախտի, որն ես այնպէս երկար վակելում էի, ուր է առաջնորդել քեզ ճակատագիրը նենգօրէն: Մերժում է ճակատագիրը քեզ օրցերեկով մահ պարգևել, որից երբէք չէիր վախեցած, որպէս զի քեզ համար գերեզմանի նախաճաշը զգւելի մգլահոտու- թեան մէջ պատրաստէ: Ինչպիսի զգւանք է շնչում այս քարերից. արդէն կեանքս սաւզում է և մահճա- կալից, ինչպէս գերեզմանից՝ խորշում է ոտքս: — Ո՞չ, հոգս, հոգս, դու որ ժամանակից առաջ սկսում ես սպա- նութիւնը, դադար տուր: Բայց երբւանից է եգմոնտը միայնակ, այսպէս մին-մենակ այս աշխարհում: Քեզ կասկածն է անզգացնում, ոչ բախտը: Միթէ թագա- ւորի իրաւագատութիւնը, որին դու ցմահ վստահ էիր, և իշխանուհու բարեկամութիւնը, որը համարեա (այդ կարող ես ինքդ քեզ խոստովանել) սէր էր, զիշերւալ փայ- լուն հրապատկերի պէս միանգամից անհետացան և քեզ լետ են թողում մենակ՝ աղօտ շաւզում: Օրանցին՝ քո բարեկամներին գլուխ կանգնած, յանգուգն մտքեր

չի լրանալ: Ժողովուրդը չի հաւաքւիլ և հետզհետէ-  
աճող ուժով հին բարեկամին չի ազատիլ:

Ո՞հ. դուք որմեր, որ ինձ պատում էք, այնքան  
ոգիների բարեհաճ բազմութիւնը ինձնից միք հեռու  
տանիլ և ինչ արիութիւն որ իմ աչքերը սովորաբար-  
նոցա էին ներշնչում, թող այն հիմայ նորից վերադառ-  
նայ նոցա սրաբերից իմի մէջ: Ո՞հ... Այս, նոքա կը շարժ-  
ւին հազմրներով, նոքա կը գան, կը կանգնեն կշախա:  
Նոցա պարեպաշտ աղօթքը կշտապի թափանցել երկինքը  
և կը խնդրէ մի հրաշք: Եթէ իմ ազատութեան համար  
երկնքից հրեշտակ չիջնի էլ, գեթ կը տեսնեմ նոցա  
տէգ ու որեր ձեռքն առնելիս: Դարպասները կը ձեղք-  
ւին, վանդակասատերը կը խորտակւին, նոցա ձեռքերի  
առաջ պարիսպները կը գլորւին, և ծագող օրւայ ազա-  
տութեանը էգմոնտը կը գիմաւորէ ուրախութեամբ: Շատ  
ծանօթ գէմքեր ինչպէս կ'ընդունեն ինձ հուռռայնվէ  
Այս, Կլարա, եթէ յու տղամարդ լինէիր, կը տեսնէի  
քեզ անկասկած այստեղ էլ առաջինը, և շնորհակալէ  
կը լինէի քեզնից՝ ինչի համար մի թագաւորից շնորհա-  
կալ լինելը ծանը է - ազատութեանս համար:

## ՏԵՍԱՐԱԿԻ Պ.

### Կլարայի տունը:

(Կլարան դուրս է դալիս սենեակից մի լապուր և մի բաժակ-  
ջուր ձեռին. բաժակը դնում է սեղանի վրայ և մօրենում է  
պարուճանին):

ԿԼԱՐԱ. Բրակենբուրգ. այս դուք էք: Հապա ինչ  
լսեցի: Դեռ ոչ ոք. ոչ ոք չկար: Ես լամպը պատուհա-

նին կը դնեմ, որպէս զի նա տեսնէ, թէ ես դեռ ար-  
թուն եմ և դեռ սպասում եմ իրան: Նա խոսացելէ ինձ  
լուր բերել: Լուր. սարսափելի է որ հաւատացած եմ թէ  
էգմոնտը դատապարտած է. ինչ դատարան կը համար-  
ձակի նորան դատել. իսկ նոքա դատապարտում են նո-  
րան: Թագաւորն է նորան դատում, թէ դուքսը: Իսկ  
իշխանուհին խորիս է տալիս: Օրանցին և միւս բարե-  
կամները դանդաղում են: Այս է այն աշխարհը, որի  
փոխիսամտութեան և անվտահութեան մասին շատ  
բան եմ լսել, բայց ոչինչ չեմ կարողացել ըմբռնել. այս  
է այն աշխարհը: Ո՞վ կը լինէր այնքան չար - թանկագինք  
ներքին չարիք բաղձալու: Միթէ չարութեանն այնքան  
զօրեղ կը լինէր ամենքից ճանաչւածին շուտով գլորելու:  
Այս ինչ այդպէս է, այս. այդպէս է: Ո՞հ, էգմոնտ,  
քեզ ապահով էի կարծում Սատուծոյ և մարդոց տուժ,  
ինչպէս իմ գրկում: Դու ինձ քոնն ես անւանել. իմ  
ամբողջ կեանքը ես նւիրել էի քո կեանքին: Ի՞նչ էի  
ես քեզ համար և ինչ եմ այժմ. իզուր եմ ձեռքս պար-  
զում դէպի այն չւանը, որը քեզ բռնած է: Դու  
անօգնական, իսկ ես ազատ: Ահա տանս բանալին, իմ  
ազատ կամքիցն է կախւած գնալս ու գալս, բայց քեզ  
համար ոչինչ չեմ անում: Ո՞հ, կապեցէք ինձ ես յու-  
սահատում եմ, և ձեցցէք ինձ ամենախոր բանտը, որ  
ես գլուխս այն խոնաւ պատերին խփեմ, ազատութիւնը  
ողբամ, Երազեմ, թէ ես ինչպէս պէտք է նորան ազա-  
տէի. եթէ զղթաներն ինձ չարգելէին, ինչպէս նորան  
կ'ազատէի: Ահա ես ազատ եմ, և ազատութեանս մէջ է  
անկարողութեան երկիւզը: Ես ինքնաճանաչ եմ, բայց  
անընդունակ եմ նորան օգնելու համար մէկ անդամն  
շարժելու: Այս, ափսոս, քո էութեան փոքրիկ մաս-  
նիկը, քո Կլարան էլ քեզ նման բռնած է և հոգեվարքի  
մէջ, երբեմնակի շարժում է վերջին ուժերը. ես լսում

եմ շփոց, հազոց, — Բրակենքուրդ — ալս նա է: Թշտառ,  
քարի մարդ. քո բախտը միշտ մնում է միենոյնը: Գի-  
շերը սիլուհիդ բաց է անում է քեզ գուռը. բայց աւանդ, որ-  
պիսի աղետալի տեսակցութեան համար: (Բրակենքուրդը  
ներս է մրոնում). Ինչ գունատ զարգանդած ես գալիս,  
Բրակենքուրդ, ինչ է եղել:

ԲՐԱԿԵՆ. Ոլոր-մոլոր ճանապարհներով և վտանգ-  
ների միջով որոնում եմ քեզ: Մեծ փողոցները բռնւած  
են: Կողմնակի ճանապարհներով և վտանգի միջով եմ  
քեզ մօտ ոլկել:

ԿԼԱՐԱ. Պատմիր, ինչպէս է բանը:

ԲՐԱԿ. (Նսողելով) Ա՛խ, Կլարա, թող՝ ինձ, որ լաց  
լինեմ: Ես չեի սիրում նորան: Նա այն հարուստ մարդն  
էր, և գրաւեց աղքատի միակ գառը դէպի աւելի պա-  
րարտ մարգագետինը: Բայց երբէք նորան չեմ անիծած:  
Առտւած ինձ ստեղծել է անխարժախ և փափկասիրտ:  
Յաւերի մէջ կեանքս հալւում էր և ամէն օր մնում էի  
հալւելուն:

ԿԼԱՐԱ. Մոռացիր ալս, Բրակենքուրդ, մոռացիր՝  
ինքդ քեզ: Խօսիր հետս նորա մասին: Ճշմարիտ է: Դա-  
տապարտւած է նա:

ԲՐԱԿ. Նա գտապարտւած է, այդ ես բոլորովին  
հաստատ գիտեմ:

ԿԼԱՐԱ. Բայց գեռ ապրում է:

ԲՐԱԿ. Ալս, գեռ ապրում է:

ԿԼԱՐԱ. Ինչպէս ես ուզում հաստատել այդ: Այս  
գիշեր բռնակալութիւնը կը մորթէ սքանչելուն: Ամէն-  
քի աչքերից ծածկւած կը հոսի նորա արիւնը: Երկչոտ,  
քնի մէջ ընկլմւած է անզգայացած ժողովուրդը և երա-  
զում է ազատութեան մասին, երազում է իւր անզօր  
ցանկութիւնների իրազոլման մասին, մինչ նորա հո-  
ցանկութիւնների

գին, մեզնից տժգոհ, թողնում է ալս աշխարհը: Նա  
վերացնւ — մի խաբիլ ինձ, մի խաբիլ քեզ:

ԲՐԱԿ. Անկասկած ոչ. նա ապրում է: Բայց աւանդ.  
խսպանացին պատրաստում է ժողովրդի համար, որին  
նա ուզում է ոտնատակ տալ, մի սարսափելի տեսարան.  
բռնութեամբ առ միշտ փշրել ամէն մի սիրտ, որ բա-  
րախում է ազատութեան համար:

ԿԼԱՐԱ. Նարունակիր և խաղաղ արտասանիր իմ  
մահւան վճիռն էլ: Ես՝ քանի գնում, մօտենում եմ  
արդէն այն երջանիկ դաշտերին: Արդէն ինձ է հաս-  
նում այն խաղաղութեան աշխարհից մխիթարութիւնը:  
Դէ ասա:

ԲՐԱԿԵՆ. Թէ պահնորդների վրայ և թէ երբեմն  
այստեղ, երբեմն այնտեղ լսւող խօսակցութիւնից ես  
կարողացալ նկատել, որ Հրապարակում գաղտուկ մի  
գարհուրանք է պատրաստւում: Ես շեղ ուղիներով, ծա-  
նօթ անցքերով քեռուս տունը սպրդեցի և մի լետին  
պատուհանից նայում էի հրապարակին: Իսպանական  
գինուրների մի մեծ շրջանի մէջ դէս ու դէն ջահեր  
էին ծածանում: Ես սրեցի անսովոր աչքս և մթութեան  
միջից աչքիս ընկաւ մի սե կախազան, ընդարձակ,  
բարձր, ես սարսուցի տեսքից: Չորս կողմը զբաղւած  
շատերն աշխատում էին, որպէս զի՝ ինչ որ դեռ սպի-  
տակ և տեսանելի տեղ կար մնացած՝ սե կտաւում փա-  
թաթելով ծածկեն: Վերջը սանդուխքներն էլ սեռվ  
ծածկեցին. ես լաւ տեսնում էի: Երեխ մի սարսափելի  
գոհի նւիրագործութիւն էին պատրաստում: Մի սպիտակ  
խաչելութիւն, որը մթութեան մէջ արծաթի պէս շող-  
ջողում էր, մի կողմում բարձր ցցեցին: Քանի նայում  
էի, աւելի ու աւելի էր ստուգւում սոսկալի հաւաս-  
տիութիւնը: Նուրջը տեղ-տեղ գեռ երերում էին ջա-  
հերը, փոքր առ փոքր ծուեցան նոքա և հանգան:

Գիշերւայ հրէշային ծնունդը միանդամից իւր մօր գողն  
էր վերադարձել:

ԿԼԱՐԱ. Հերիք է, Բրակենբուրգ, հերիք է: Թող  
այս քողը հոգուս վրայ խաղաղի: Անհետացած են  
ուրւականները: իսկ դու, չքնաղ գիշեր, վերարկուդ  
շնորհիր երկին, որը եռում է: Նա էլ երկար չի կրիւ  
այս զզւելի բեռը. սոսկալի կերպով կը պատառէ իւր  
խոր ճեղքերը և կը փշէ ու կը լափէ սպանութեան  
շէնքը: Եւ Աստւած կուղարկէ մի որեւէ հրեշտակ, որին  
նոքա իբր իրանց կատաղութեան վկայի, կ'արատաւորեն:  
Հրեշտակի սուրբ հպումով կը լուծին նիգերն ու կա-  
պերը և նա բարեկամի վրայ կը թափէ խաղաղ լոյս:  
Նա կ'առաջնորդէ նորան մթութեան միջով գէպի տղա-  
տութիւն, մեղմօրէն և աղատութեամբ: Եւ իմ ճանա-  
պարհն էլ է գնում գաղտուկ այս մթութեան միջով  
նորան հանդիպելու:

ԲՐԱԿ. (Նորան բռնելով): Որդիս, ուր: Ի՞նչ ես խի-  
զախում:

ԿԼԱՐԱ. Յածը, սիրելիս, որ ոչոք չըզարթնի, որ  
ինքներս մեզ չափակեցնենք: Ճանաչում ես այս սրւակը,  
Բրակենբուրգ: Ես այն վերցրի կատակով քեզ համար,  
երբ դու լաճախ անհամբեր սպառնում էիր վաղահատ  
մահով: Եւ այժմ, բարեկամ:

ԲՐԱԿ. Ի սէր ամենայն սըբոց:

ԿԼԱՐԱ. Դու ոչինչ չես կարող արգելել: Ես մահ-  
ւանն եմ, և ցանկացիր ինձ խաղաղ, արագահաս մահ,  
որն ինքդ քեզ էիր պատրաստում: Տնուր ինձ ձեռքի:  
Այս վայրկեանիս, երբ բանում եմ մութ դուռը, որտե-  
ղից էլ գարձուզի չըկալ, երանի թէ կարենայի այս  
աջը մեղմելով քեզ ասել, թէ որքնն եմ քեզ ողբացել:  
Եղբայրս մատաղահաս մեռաւ, քեզ ընտրեցի ես նորան  
փոխարինելու. բայց քո սիրալ հակառակեց. տանջեց:

Թէ քեզ, թէ ինձ: Պահանջում էիր ջերմ, միշտ ջերմա-  
գին այն, ինչ որ քեզ չէր վիճակւած: Ներիր ինձ և  
մնաս բարեաւ: Թող քեզ եղբայրս անւանեմ: Այս մի  
անուն է, որն իւր մէջ շատ անուններ է պարունա-  
կում: Անկեղծ սրտով վերցրու բաժանւողների վերջին  
գեղեցիկ ծաղիկը—վերցրու այս համբուրը: Մահը միա-  
ցնում է բոլորին, Բրակենբուրգ, ուրեմն նոյնպէս և մեզ:  
ԲՐԱԿ. Թող ինձ ուրեմն, որ քեզ հետ մեռնեմ:  
Կիսիր, կիսիր, այդ բաւական է երկու կեանք հանգնե-  
լու համար:

ԿԼԱՐԱ. Մնացիր: Դու պէտք է ապրես. դու կա-  
րող ես ապրել: Նեցուկ եղիր մօրս, որը՝ առանց քեզ,  
աղքատութեան մէջ կը մաշւէր: Նորա համար եղիր այն,  
ինչ որ ես այլ ես չեմ կարող լինել: Ապրեցէք միասին  
և ողբացէք ինձ: Ողբացէք հայրենիքը և նորան, որը  
միայն կարող էր պահպանել այդ: Ներկալ սերունդն  
այս թշւառութիւնից չի ազատւիլ: Վրէժխնդըութեան  
կատաղութիւնն անգամ չի զօրիլ նորան ջնջել: Անց-  
կացը դուք, խեղճեր, օրեր, որոնք օրեր չեն: Այսօր  
աշխարհս միանդամից կանգ է առնում. կանգ է առ-  
նում նորա շըշանը: Իսկ իմ երակը հազիւդեռ մի քանի  
քոպէ կը խփէ: Մնաս բարեաւ:

ԲՐԱԿ. Ո՛հ... ապրիր մեզ համար, ինչպէս և մենք  
միայն քեզ համար: Դու քեզնով մեզ ես սպանում. ո՛հ,  
ապրիր և համբերիր: Մենք անբաժան քու երկու կող-  
քին կը կանգնենք և միշտ մտադիր սէրն իւր կենդա-  
նաբար բազուկներում կը պատրաստէ ամենասիրուն միխ-  
թարութիւնը: Եղիր մերը, մերը: Ես չեմ համարձակ-  
ւում ասել իմը:

ԿԼԱՐԱ. Հանդարտ, Բրակենբուրգ. դու չըզիտես  
ինչ վէրք ես նորոգում: Ուր քեզ լոյս է երեսում, այն-  
տեղ ինձ համար լուսահատութիւն է:

ԲՐԱԿ. Կենդանիների լոյսին մասնակից եղիք: Մնա  
անդնդի ափին. նալիր ցածր և վեր նայիր ինձ:

ԿԼԱՐԱ. Ես յազթել եմ, ինձ նորից կուի մի կտնչիլ:

ԲՐԱԿ. Դու անզգալացած ես: Մթութեան մէջ  
խարխափած, որոնում ես խորքը: Դեռ ոշխարհիս վերջը  
չէ: Կըգան օրեք...

ԿԼԱՐԱ. Վայ քեզ, վայ: Անդթօրէն պատառում  
ես դու աչքիս առաջի վարագոյրը: Այն, կը ծագի մի  
օր, զուր են բոլոր մշուշները կուտակում և ակամայից  
ցըում: Երկիւզով նայում է քաղաքացին պատուհանից,  
գիշերը թողնում է ետևից մի սե բիծ: Նա նայում է  
և լոյսի մէջ սարսափելի կերպով բարձրանում է կախա-  
զանը: Նոր խաչելութիւնը իւր անարգւած Աստւածային  
պատկերը դարձնում է վերը դէպի հայրը: Արեգակը չէ  
համարձակում ծագել, նա չի ուզում նշանակել այն  
ժամը, երբ Եգմոնտը պէտք է մեռնի: Համը գնում են  
սլաքները իրանց ճանապարհը և ժամը խփում է մէկը  
միւսի ետևից: Մնա, կանգնիր, հիմայ ժամանակն է:  
Առաւոտւայ նախազգացումն ինձ դէպի գերեզման է  
քաշում: (Նա մօրենում է պատուհանին՝ իբր թէ չորս կողմե-  
է նայում, ծածուկ խմում է):

ԲՐԱԿԵՆ. Կլարա, Կլարա:

ԿԼԱՐԱ. (Մօրենում է սեղանին և ջուր խմում): Ահա  
մնացորդը: Ես քեզ ետևիցս չեմ գրաւում: Արա, ինչ որ  
պէտք է անես: Մնաս բարեւ: Հանդցընւ այս լամպը  
հանգիստ և առանց դանդաղելու: Ես գնում եմ հանգս-  
տանալու: Հանդարտ գուրս սկսեիր. դուռը ետևիցդ  
փակիր: Կամաց, չըզարթեցնես մօրս: Գնա, ագատիր-  
քեզ, ազատիր, եթէ չես ուզում իմ սպանիչի տեղ ըն-  
դունվիլ: (Գնում է):

ԲՐԱԿԵՆ. Նա թողնում է ինձ վերջին անգամ,  
ինչպէս միշտ: Ո՛չ, կարող է մի մարդկալին սիրտ զգալ,

թէ ինչպէս է նա կարողանում մի սիրող սիրտ  
կտոր անել: Նա ինձ կանգնած է թողնում. ինքս ինձ  
ապաւինած: Թէ մահը, թէ կեանքը հաւասարապէս  
ատելի են ինձ: Մեռնել միայնակ: Լացէք, դուք սիրող-  
ներ: Իմ ճակատագրից աւելի խիստը չըկայ: Նա բաժա-  
նում է ինձ հետ մահագեղի կաթիւը և իրանից դէն  
հրում: Նա քաշում է ինձ իւր ետևից և կրկին հրում  
գէպի կեանքը: Ո՛չ, Եգմոնտ, ինչ թանկագին վիճակ է  
քեզ բաժին ընկնում: Նա քեզ առաջնորդում է: Նորա  
ձեռքի յազթական պստկը քոնն է: Նա ողջ երկինքը  
առաջդ է բերում: Հետևեմ նորան: Ելի՞ մի կողմը քաշւեմ.  
անհանգչելի նախանձը գէպի այն բնակորանները տա-  
նեմ: Աշխարհիս երեսին ինձ համար էլ մնալ չըկայ.  
թէ գմոխքը, թէ դրախտը ներկալացնում են ինձ հա-  
ւասար տանջանք: Կործանման սարսափելի ձեռքը ինչ-  
պէս հաճելի կը լինէր թշւառականին: (Բրակինբուրգը մի  
կողմն է գնում. բեմը առժամանակ անփոփոխ է մնում. Կա-  
րափի մահը ցոց տւու երաժշտութիւն է հնչում. լամպը, որը  
բրակինբուրգը մոռացել էր հանգնել, մի քանի անգամ պըլ-  
պըլում է և վերջապէս հանգչում. բեմը բանդի է փոխում):

## ՏԵՍԱՐԱԿ Պ.

### Բ ա ն տ

(Եգմոնտը անկողնում պառկած քնած է, կորպէքը ծլնգում է.  
Դուռը բացւում, ծառաները ջաներով ներս են մրնում. նոցա-  
հերեւում է Ֆէրդինանդը և Սիլւան զինեալներով. Եգմոնտը  
զարթնում է):

ՀԴՄՌՆԾ. Ո՞վքեր էք, դուք, որ անսիրալիր կերպով  
քունն աչքերիցս փախցնում էք: Խնչ են ուզում յայտ-  
նել ինձ ձեր բիրտ և անվստահ դէմքերը: Ինչի՞ է այս-

սարսափելի գնացքը: Գալիս էք ինչ սաշուափելի: Երազ  
ստութեամբ պատմելու իմ կիսարթուն հոգուն: Այս  
Սիլիլ. Մեզ գուքսն է ուղարկել յալտնելու քեզ  
դատավճիռը:

ԷջՄ. Դահիճներ էլ ես բերել հետդ՝ վճիռը կա-  
տարելու համար:

Սիլիլ. Լսիր և կ'իմանաս, թէ քեզ ինչ է սպասում:  
ԷջՄ. Այս է վայել ձեզ և ձեր ամօթալի ձեռնար-  
կութեանը: Գիշերով յղացած և գիշերով իրագործած:  
Այսպէս է կարող ծածկւել անշրաւութեան այդ յան-  
դուգն գործը: Համարձակ առաջ արի, գու, որ սուրդ  
կրում ես վերարկուիդ տակ փաթաթած: Ահա զլուխս,  
ամենազատը, որը երբեք բռնակալութիւնը խլել է  
մարմնից:

Սիլիլ. Դու սխալում ես: Ինչ որ արդար դատա-  
ւորները վճռում են՝ արեգակի լուսից չեն ծածկում:

ԷջՄ. Ալսպիսով լրբութիւնն ամեն հասկացողու-  
թիւնից ու եռևակայութիւնից անցնում է:

Սիլիլ. (Յոնում է մօդը կանգնողից վճիռը, եռ է սր-  
բում և կարդում), «Յանուն թագաւորի և զօրութեամբ  
« այն իշխանութեան, որը նորին մեծութիւնը տւել է  
« մեզ դատելու նորա բոլոր հպատակներին՝ ինչ դա-  
« սակարգի և լինին, նմանապէս Ոսկեգեղմի առպետ-  
« ներին – ճանաճում ենք...

ԷջՄ. Մթթէ թագաւորը կարող է այն ուրիշին տալ:

Սիլիլ. «Ճանաչում ենք՝ կանխօրէն, օրինական  
« քննութիւնից յետոյ, քեզ Նէնրիխ կոմս Եզմոնտին,  
« Գառւրի իշխանին, դաւադրութեան մէջ յանցաւոր, և  
« յայտնում վճիռը: Դու վազը լուսածագին աէտք է  
« ըսնուից հրապարակ տանւես և ալնտեղ՝ ժողովրդի  
« աչքի առաջ, ի զգուշութիւն բոլոր դաւաճանների,  
« կեանքից սրով մահւան գիրկն ուղարկւես: Տւած է

« Բըիւսսէլում. յամի, (թիւն ու բարին անորոշէ կարդում,  
« անպէս որ լուր չի հասկանում), Թէրդինանդ գուքս  
« Ալքա՝ նախագահ խորհրդիս երկուասանից»:

Դու գիտես հիմայ ճակատագիրդ. Քեզ քիչ ժամա-  
նակ է մնում պատրաստելու, տանդ մասին կարգա-  
դրելու և քոյիններին հրաժեշտ տալու: (Սիւան հերե-  
տորդներով հեռանում է. մնում են Ֆէրդինանդն ու երկու ջա-  
հակիր. բեմը միջակ լուսաւորւած է. Եզմոնտը՝ մի քանի ժա-  
մանակ խորասուզւած, լուռ կանգնած է. Սիւան աննկարելի  
հեռանում է, Եզմոնտն իրան միանակ է կարծում. երբ աչքերը  
վեր է բարձրացնում, նկատում է Ֆէրդինանդին):

ԷջՄ. Դու մնում ես կանգնած: Ուզում ես զար-  
մանքս ու սարսափս քո ներկայութեամբ ևս աւելի մե-  
ծացնել: Զըլինք ուզում ես այն բաղձալի լուրն էլ հօրդ  
տանել, թէ ես այստեղ տղամարդուն անվայել կերպով  
լուսահատւում եմ: | Դնա, ասա նորան: Ասա նորան, որ  
ոչ ինձ կըխաբէ, ոչ աշխարհին: Նորան – փաւասէրին –  
դեռ ետեկցը թեթև կը շնչան, ապա բարձր ու աւելի  
բարձր կը խօսեն և, երբ մէկ օր նա այդ գահից կ'իջնի,  
հազարաւոր ձախներ նորան երեսն ի վեր կ'աղաղակեն՝  
նորան ալստեղ են բերել ոչ պետութեան շահը, ոչ թա-  
գաւորի արժանիքը, ոչ նահանգների խաղաղութիւնը.  
իւր իսկ անձի համար է կուի խորհուրդ տւել, որպէս  
զի իւր զինուր կուում աչքի ընկնի: Նա այս հրէշաւոր  
խառնակութիւնը նորա համար է լարուցել, որպէս զի  
իրա կարօտն զգան: Եւ ես ընկնում եմ իւրեւ զոհ նորա  
ստորաքարշ ատելութեան, նորա ու նախանձի: Ես գի-  
տեմ, այս և ես իրաւունք ունիմ ասելու, մահացու վի-  
րաւորածը կարող է ասել. – ինձ նախանձում էր այն  
ինքնագովը, ինձ ջնջելը նորա վաղուցւան մտածածն  
ու խոհածն է եղել: Արդէն այն ժամանակ, երբ  
մենք՝ դեռ երիտասարդ՝ քւէ էինք խաղում, և փողի

կոյտերը մէկը միւսի ետևից դէպ' ինձ է/ն վազում, կանգնում էր նա մռայլած. կեղծելով՝ խաղաղ էր ձևանում, այն ինչ ներքուստ հալումաշ էր լինում, բարկանալով տեղի իմ բախտի՝ քան իւր կարգութիւնը վրայ: Դեռ լիշում եմ նորա կայծացայտ հաւեցցը, մասնիչ դալուկը, երբ մենք՝ հասորակական տօնին, շատ հազարաւոր մարդոց առաջ մըցում էինք նետելում: Նա ինձ դուրս հրաւիրեց. և երկու ազգերը կանգնած էին. իսպանացիներն ու նիդէրլանդցիները գրաւ էին գալիս և բարեմաղթում: Ես յաղթեցի նորան. նորա գնդակը վրիպեց. իսկ իմը դիպաւ: Իմ ազգակիցների բարձրաձայն քըթիչով օդը թնդաց: Հիմա ինձ է դիպչում նորա հարւածը: Ասա նորան, որ ես հասկանում եմ, ես նորան ճանաչում եմ, որ աշխարհս արհամարհում է ամեն յաղթանակ, որը՝ շողսքորթութեամբ ձեռք բերելով, կանգնեցնում է իւր համար մի ստոր հոգի: Իսկ դու, եթէ մի մարդու հնարաւոր է իւր հօր շաւզից շեղւիլ ժամանակին սովորիր ամօթի, մինչ դու ամաչում ես նորա համար, որին սիրով կուզէիր յարգել ամբողջ սրտով:

Փի՛րի. Ես քեզ լսում եմ, առանց ընդհատելու. քո յանդիմանութիւնները ծանրանում են վրէս՝ ինչպէս մահակի հարւածները վահանի վրայ. ես զգում եմ դզորդ, բայց զինւած եմ: Դու դիպցնում ես ինձ, բայց չես վիրաւորում. զգալի է ինձ միայն այն ցաւը, որը կուրծքս կրծում է: Վայ ինձ, վայ: Միթէ ես մի այդպիսի տեսարանի համար եմ մեծացել, մի զզելի դրամայի համար եմ ուղարկւած:

ՀջՄ. Դու գանգատում ես: Ի՞նչ է քեզ յուզում, քեզ վշտացնում: Այս մի ուշացած զզչումն է, որ դու ամօթալի գաւադրութեանը նւիրեցիր ծառալութիւնդ: Դու դեռ երիտասարդ ես և բարետես: Դու այնպէս վստահելի և սիրալի էիր դէպ' ինձ: Քանի ես քեզ

տեսնում էի, հաշտում էի հօրդ հետ: Եւ նոյն կերպ կեղծելով՝ նորանից աւելի կեղծելով՝ գրաւում ես դու ինձ գէպի ցանցը: Դու զզելին ես: Ով նորան է հաւատում, իւր գլուխն է ուզում վանգել, բայց ով էր վտանգ սպասում քեզ հաւատալով: Գնա, գնա: Մի յափշտակիլ ինձնից այն քիչ վալիկեանները: Գնա, որ ես ինձ ժողովեմ, թողնեմ աշխարհս, իսկ քեզ—ամենից առաջ:

Փի՛րի. Ի՞նչ ասեմ քեզ: Ես կանգնած քեզ եմ նայում, բայց քեզ չեմ տեսնում և ինձ չեմ զզում: Արդարացնեմ անձս: Համոզեմ քեզ, որ ես բոլորովին ուշ, բոլորովին վերջն իմացայ հօրս զիտաւորութիւնները, որ ես նորա ձեռքին գործում էի՝ ինչպէս մի կամագուրի, անկենդան գործիք: Ի՞նչ օգուտ, թէ իմ մասին դու ինչ կարծիք կարող ես ունենալ: Դու կորած ես, իսկ ես—թշւառս—այստեղ կանգնած եմ միայն քեզ հաւատացնելու և քեզ ողբաշլու համար:

ՀջՄ. Ի՞նչ սքանչելի ձայն, ի՞նչ անսպասելի մխիթարութիւն է հանդիպում ինձ գերեզմանիս ճանապարհին: Դու իմ առաջին և, համարեա՝ միակ թշնամուս որդին, դու ափսոսում ես ինձ, դու իմ սպանիչների թւումը չես: Խօսիր, ասա, ի՞նչ կարծիք կազմեմ քո մասին:

Փի՛րիին. Անագործն հայր: Այս, քո այս հրամանով ճանաչում եմ քեզ: Դու ճանաչում էիր իմ սիրտը, իմ մտածմունքները, որոնք յաճախ նկատում էիր՝ իբրև քնքուշ մօրից ժառանգութիւն: Ինձ քեզ նման դրածնելու համար այնտեղ ուղարկեցիր: Այս մարդուն կլանող գերեզմանի ափին՝ մի կամայական մահւան իշխանութեան տակ տեսնելու համար ստիպում ես ինձ, որ ամենախոր ցաւն զզամ, որ բոլոր պատահարների առաջ՝ խուլ մնամ, որ անզգալ դառնամ, ինչ էլ որ ինձ պատահելու լինի:

ԷջՄ. Զարմանում եմ. ուշքի եկ, կանգնիր, խօսիր տղամարդու պէս:

Ֆէ՛րԴ. Երանի կինարմս տ լինէի, որ կարողանալին ինձ ասել. «Բնչ է պատահել, ինչն է քեզ անհանգըստացնում». ասա ինձ մի մեծագոյն, աւելի հրէշաւոր չարիք. ինձ տւելի սարսափելի գործի վկալ արա, եւ շնորհակալ կը լինիմ քեզնից, ես կ'ասեմ. «Այդ դատարկ բան է»:

ԷջՄ. Դու քեզ կորցնում ես. ուր ես դու:

Ֆէ՛րԴ. Թո՛ղ կատաղի այս կիրքը, թո՛ղ որ ես ինձ ազատ ողբամ: Ես չեմ ուզում տոկուն երևալ, երբ մէջս ամեն ինչ ջարդ ու փշուր է լինում: Քեզ պէտք է այս տեղ տեսնեմ: Քեզ: Զգւելի՞ է: Դու ինձ չես հասկանում. միթէ կարող ես հասկանալ: Եգմոնտ, Եգմոնտ (նորա պարանոցով ընկնելով):

ԷջՄ. Բ'աց արա ինձ այս հանելուկը:

Ֆէ՛րԴ. Ո՛չ մի հանելուկ:

ԷջՄ. Ինչպէս է քեզ այդպէս խորը շարժում մի օտար մարդու վիճակը:

Ֆէ՛րԴ. Ո՛չ օտար. դու ինձ օտար չես: Քո անունն էր, որ մանկութեանս օրերում երկնալին աստղի նման առաջ փալեց: Որքան անգամ լսած ու հարցրած եմ քո մասին—երեխալի յոյսը երիտասարդն է, երիտասարդինը—ալրահասակը: Այսպէս դու միշտ առաջս ես եղած, միշտ առաջս. իսկ ես առանց նախանձի տեսնում էի քեզ առաջիս և գալիս էի ետևիցդ, միշտ առաջ: Արդ յոյս ունէի վերջապէս քեզ տեսնել և տեսալ, ու սիրտս քո առաջը նետւեց: Քեզ նշան էի արել ինձ համար և քեզ ընտրեցի նորից, երբ քեզ տեսալ: Հիմայ նոր ու զում էի քեզ հետ լինել, քեզ հետ ապրել, գրկել քեզ. այս բոլորը ցնդեցան և քեզ տեսնում եմ—այստեղ:

ԷջՄ. Բարեկամ, եթէ դու դուրանից մի շահ ու-

նիս, համոզւիր, որ հէնց առաջին վայրկեանից սիրտս քեզ յարեց, և լսի՛ր ինձ—սա հօրդ վերջնական և լուրջ հրամանն է, ինձ սպանել:

Ֆէ՛րԴ. Այս:

ԷջՄ. Այս վճիռն արդեօք մի լոկ խրտելակ չէ ինձ վախեցնելու, երկիւղով և սպառնալիքով ինձ պատժելու, ինձ ստորացնելու և ապա կալսերական շնորհումով ինձ նորից բարձրացնելու համար:

Ֆէ՛րԴ. Ո՛չ. այս, գժբախտաբար ոչ: Սկզբում ես էլ էի խարում ինձ սնոտի յուսով, բայց արդէն այն ժամանակ զգացի երկիւղ և վիշտ՝ քեզ այս դրութեան մէջ տեսնելու: Եւ հիմա դա օրէնք է, հաստատ է: Ո՛չ. ես էլ ինձ չեմ իշխում: Ո՞վ կը տայ ինձ օգնութիւն, ով խորհուրդ կը տայ անխուսափելից խուսափելու:

ԷջՄ. Դէ լսիր ինձ: Եթէ քո հոգին այդպէս բուռն կերպով ձգտում է ազատել ինձ, եթէ դու գարշում ես այդ անսանձ բոնութիւնից, որն ինձ շղթալած սլահում է, ապա ազատիր ինձ: Վայրկեանները թանկ են: Դու ամենակարողի որդին ես, ինքդ էլ կարող: Թող փախչենք: Ես գիտեմ ճանապարհները. միջոցները չեն կարող քեզ անլայտ լինել: Միմիայն այս պարիսպները, միայն մի քանի մզոններ են բաժանում ինձ իմ բարեկամներից: Բաց արա այն կապերը, տար ինձ նոցա մօտ և եղիր մերը: Անկասկած մի օր՝ թագաւորը շնորհակալ կը լինի քեզնից իմ ազատութեան համար: Հիմա նա զարմացած է և գուցէ նորան ամենն անյալտ է: Քո հայրը բախտ է փորձում. և նորին Մեծութիւնը ստիպւած է կատարւած իրողութեանը հաւանութիւն տալ, թէև նորանից սարսափելիս էլ լինի: Դու մտածմունքի մէջ ես: Ո՛հ, գտիր ինձ համար ազատութեան ճանապարհը, խօսիր և վառ պահիր կենդանի հոգու յոյսը:

ֆէթի. Լոկր, ոչ, լոկր: Իւրաքանչիւր խօսքով աւելցողում ես յուստհատութիւնս: Այստեղ չըկայ ոչ մի ելք, ոչ մի խորհուրդ, ոչ մի փախուստ: Յայ է ինձ տանջում, այս է բռնում ու ճնշում կուրծքո՞ ինչպէս ճիրաններում: Ես ինքս եմ ձգել ցանցը, ես գիտեմ նորա խիստ ու ամուր հանգուցները. ես գիտեմ, ինչպէս ամեն մի յանդգնութեան, ամեն խորամանկութեան ճանապարհները փակւած են: Ես զգում եմ ինձ քեզ ու միւսների հետ շղթալւած: Հապա կը գանգատւէ՞ ես, եթէ ամեն ինչ փորձած չըլինէի: Նորա ոտներն եմ ընկել, աղաչել, պաղատել: Նա ինձ այստեղ ուղարկեց, որ իմ մէջ տժեն կենդանական ու խնդական բան՝ ինձ հետայս վայրկեանին խորտակէ:

ԷջՄ. Եւ ոչ մի ազատութիւն:

Փէթի. Ոչ մի:

ԷջՄ. (Ոտք դոկիւրի), Ո՞չ մի ազատութիւն... Քաղցր կեանք, գոյութեան և գործունէութեան սիրուն, քաղցր սովորութիւն, քեզնից պէտք է բաժանւեմ. այսպէս խաղաղ բաժանւեմ: Կուտի փոթորկում, զէնքերի շառաչիւնի տակ, խոսվութեան ճապաղիքում չես տալիս ինձ մի թռուցիկ մնամ բարով, գու չես շտապում հրաժեշտ տալու: Բաժանման վայրկեանը չես կարճացնում: Ես պէտք է ձեռդ բռնեմ, աչ երիդ մէկ էլ նայեմ, գեղեց կութիւնդ, արժէքդ լաւ կենդանի զգամ, և ապա վըճռապէս պոկ գտմ և ասեմ. — դէ զնա:

Փէթի. Խոկ ես պէտք է կշտիգ կանգնեմ, մտիկ տամ, չըկարողանամ քեզ պահպանել, քեզ արգելել: Ո՞չ. Ի՞նչ ձայն կը բաւեր ողբալու, ի՞նչ սիրո չէր պատառ-պատառ լինիլ այս աղետից:

ԷջՄ. Հանդարտւիր:

Փէթի. Դու կարող ես հանդարտւիլ, դու կարող ես հրաժարւիլ, և՝ քանի որ անհրաժեշտ է, ծանր քայլ

անել: Ե՞ս ինչ եմ կարող. Ի՞նչ անեմ: Դու կը յաղթես քեզ և մեզ: Դու կը գիմանսաս: Ես քեզնից և նոյն իսկ ինձնից աւելի կապրեմ: Ճաշի ուրախութեան ժամանակ լրաց եմ կորցրել, պատերազմի խռովութեան մէջ՝ գրօշ. Անախորժ, շփոթ ու մութ է երեսում ինձ ապագան:

ԷջՄ. Երիտասարդ բարեկամ, որին ես տարօրինակ բախտի բերմամբ միաժամ վաստակում եմ և կորցնում, որն ինձ համար մահու չափ ցաւում է, ինձ համար տանջուում է, նաևիր ինձ այս վայրկեանիս. գու ինձ չես կորցնում: Եթէ իմ կեանքը քեզ համար մի հայելի էր, որի մէջ գու հաճութեամբ դիտում էիր, ապա ժողովնի ակտ և իմ մահը: Մարդիկ միայն այնժամ չեն միասին, երբ միատեղ են, այլ և հեռաւորը, մեռեալը մեզ համար կենդանի է: Ես կ'ապրեմ քեզ համար. և ինձ համար էլ բաւականին ապրել եմ: Ամեն օր ես ուրախ եմ եղել. ամեն օր արագընթաց գործունէութեամբ կատարել եմ պարտքս, ինչպէս ցոյց է տւել խիզնս: Արդ վերջանում է կեանքս, որը երանի թէ աւելի վազ՝ արդէն Գրաւէլինգէնի աւագների վրայ վերչացած լինէր: Ես դադարում եմ ապրելուց, բայց ես ապրել եմ. այդպէս ապրիր և գու, բարեկամս, հաճութեամբ և սիրով և մի վախենալ մահից:

Փէթի. Դու կարող էիր քեզ պահել մեզ համար, դու պէտք է պահէիր: Դու ինքդ քեզ սպանեցիր: Յաճախ լուում էի, երբ ինքօք մարդիկ քո մասին խօսում էին — բարեմիտներ, չարամիտներ — նոքա երկար վիճում էին քո արժանիքի մասին, սակայն վերջը բոլորեքեան միաբանում էին, ոչոք չէր զօրում ուրանալ, ամեն ոք խօստովանում էր. այլո՛, նա վտանգաւոր ճանապարհով է գնում»: Քանի քանի անգամ ցանկացել եմ, որ կարող լինէի քեզ զգաւզացնել: Միթէ դու ոչ մի բարեկամ չունէիր:

ԷջՄ. Ինձ զգուշացրել էին:

ՓՀՐԴ. Բայց ինչպէս կէտ առ կէտ բոլոր այս մեղադրանքները գտայ ես նորից գանգատի մէջ, նոյնպէս քո պատուխանները—բաւականին լու՝ քեզ արդարացնելու, բայց ոչ բաւականին գօրեղ՝ քեզ մեղադրանքից տղատելու համար:

ԷջՄ. Այդ մի կողմը մնայ: Մարդու կտրծում է, թէ ինքն իւր կեանքը կառավարում է, ինքն իրան առաջնորդում, բայց նորա ներքինը անդիմադրելի կերպով նորա ճակատագրի ետևիցն է քաշում: Դորա վրայ թող չըմտածենք: Այս մտքերից հեշտ կազատւեմ, քան հալրենիքիս հոգսերից. բայց դորա համար էլ կը հոգացւի: Եթէ կարող լինի իմ արիւնը շատերի համար հոսիլ, ազգիս խողաղութիւն բերել, ապա կը հոսի լօժարութեամբ: Ափսոս, որ այդպէս չի լինիլ: Բայց մարդուն վայել չէ այն ևս խուզարկել, ուր նա այլ ևս չըպէտքէ գործէ: Կարող ես դու հօրդ փճացնող ուժը կասեցնել, — ուղղել — արա: Այդ ովկ կարող կըլինի: Գնաս բարով:

ՓՀՐԴ. Չեմ կարող գնալ:

ԷջՄ. Իմ մարդոցը ամենայն սիրով քեզ եմ յանձնում: Իմ ծառաները բարի մարդիկ են. թող նոքա չըցրւեն, չ'անբախտանան: Ինչպէս է Ոիխարդը, իմ գրագիրը:

ՓՀՐԴ. Նա քեզնից առաջ է գնացել: Նորան՝ իբրև դաւագրութեան մեղսակցի՝ գլխատել են:

ԷջՄ. Խեղճ մարդ: Էլի մի բան՝ և այնուհետև մնաս բարով, էլ տանել չեմ կարող: Ինչ էլ որ մեր միտքը սաստիկ զբաղեցնելու լինի, բայց էլի բնութիւնն ի վերջու անդիմադրելի կերպով պահանջում է իւր իրաւունքները, և, ինչպէս օձով փաթաթւած մանուկը զովացուցիչ քունն է ճաշակում, այնպէս էլ դատապար-

տեալն է մէկ անգամ էլի նստում մահւան գուան առաջ և լաւ հանգստանում, որպէս թէ հեռու ճանապարհ գնալու լինէր: Էլի մի բան: Ես ճանաչում եմ մի աղջիկ. դու նորան չես արհամարհիլ, որովհետեւ նա իմն էր: Որդ նորան քեզ եմ յանձնում, ու մեռնում եմ խաղաղ: Դու մի ազնիւ մարդ ես. մի կին, որը քեզ գտնէ, ապահովէ: Ապրում է իմ ծեր Աղոլֆը, նա ազատ է:

ՓՀՐԴ. Այն առողք ծերունին, որ միշտ ձիով ձեզ ուղեկցում էր:

ԷջՄ. Նա ինքը:

ՓՀՐԴ. Նա ապրում է, նա ազատ է:

ԷջՄ. Նա գիտէ այն աղջկայ բնակարանը: Թոնք նա քեզ առաջնորդէ և դու նորան վարձատրիլ մինչև նորա կեանքի վերջը, որ նա նոյց է տալիս քեզ ճանապարհը գէտի արդ գանձը: Գնաս բարով:

ՓՀՐԴ. Ես չեմ գնում:

ԷջՄ. (Նորան դէպի դուռը հրելով), Գնաս բարով:

ՓՀՐԴ. Ո՛չ... թող էլի մնամ:

ԷջՄ. Ոչ մի հրաժեշտ: (Ուղեկցում է գէտի դուռը, նորանից պոկում է. Ֆէրդինանդն ազգայ շուրջով հեռանում է: Էզմանոր միանակ): Զարահոդի մարդք: Դու չեիր կարծում ինձ այս բարութիւնն անել որդուդ միջոցով: Նորա միջոցով ազատ եմ ես հոգսերից, ցաւերից, ամեն երկիւղալի զգացմունքից: Մեզմ ու ստիպով պահանջում է բնութիւնն իւր վերջին տուրքը: Անցնւ, վճռուած է: Եւ այն, ինչ որ վերջին գիշերը կասկածով ինձ մահճիս մէջ անքուն էր պահում, հիմա քնեցնում է մտքերս ակներև հաւաստիութեամբ: (Նորում է մահճակալի վրակ, նւազ): Քաղցր քուն, դու գալիս ես, ինչպէս մի կատարեալ բախտաւորութիւն՝ առանց իմ աղաւելուն, ամենալն լօժարութեամբ: Դու լուծում ես իփստ մտքի հանգուցները, խառնում ես ուրախութեան և տրամու-

թեան բոլոր պատկերները. անխափան սահում է ներքին ներդաշնակութեան շրջանը և հաճոյական խելագարութեան մէջ փաթաթւած՝ ընկլմում ենք և դադարում լինելուց: (Նա քնում է. նւազն ուղեկցում է նորա սինջը. նորա անկունի եռուը կարծես՝ պարիսպները բացւում են. մի հիանալի դեսարան է ներկայանում. Ազարութիւնն երկնային հանդերձում. մի լուսով պարած, հանգստանում է ամպի վրաէ. Կէարակի գծագրութիւնն ունի և խոնարհում է դէ: պի քնու հերոսը. Մի ափասոսացու զգացմունք է արդագագում: Նա կարծես նորան ողբում է. Շուրով սթափում է և մի ոգե. որիչ շարժութեամբ ցոց է տալիս նորան ոլաքների. մի կապոց, ապա և մի գաւազան, զլխարկով: ) Նա ասում է նորան, որ ուրախ լինի և, հասկացնելով, որ նորա մահը նահանգներին ազարութիւն պէտք է պարզեէ, ձանաշում է նորան իբրև լարդող և դուլիս է լաղթութեան պսակ. Երբ նա պսակով մօտենում է Եգմոնտի զլխին, վերջինս մի շարժումն է անում. ինչպէս մէկը քնած շարժում է. անպէս որ բերանն ի վեր՝ դէմքով դէպի նա է պառկած: Պսակը պահում է նորա զլխին ծածանելով. Հեռուից լսելի է պատերազմական երդի ձան, աշմուկ և ոտքում. ամեն անելմ ձանի հետ անհերանում է երեւումը. Ձանն ուժեղանում է. Եգմոնտը զարթնում է: Բանուը մէզից չափաւոր լուսաւորած է. Առաջին շարժումով նա ձեռքո գլուխն է քառում. նա կանգնում է և շուրջը նախում, ձեռքը զլխին պահում: Անհետացել է պսակը: Դու, գեղեցիկ ուրական, օրւայ լոյսը քեզ խուճապեց: Այս, նոքա էին, նոքա միացել էին—իմ սրտի ամենաքաղցր ուրախութիւնները: Աստւածալին ազատութիւնն իմ սիրեցեալից էր փոխառել իւր կերպարանքը: Դիւթիչ աղջիկը բարեկամուհու երկնալին հանդերձ էր հագել: Նոքա միացած են երեւում մի լուրջ վայրկեանում. աւելի լուրջ, քան սիրելի: Արիւնարիծ կրունկներով նա առաջս դուրս եկաւ: Նորա հանդերձի ծածանող ծայքերը արիւնաներկ էին: Այն իմ արիւնն էր և շտա ազնիւների արիւնը: Ո՞չ. այն իզուր չէր թափւած: Ճեղքում, անց-

նում է, քաջ ժողովուրդ: Յաղթութեան աստւածն է քեզ առաջնորդում: Եւ ինչպէս ծովը ճեղքում է ամբարտակները, այնպէս փշեցէք, խորտակեցէք բռնակալութեան պատնէշները, և խեղդելով ի բաց ողողեցէք նորան իւր տեղից, որը նա յաւակնել է իրան գրաւել: (Թմբուկն աւելի մօրենում է). Լոկիր, լոկիր: Քանի քանի անդամ է կանչել ինձ այն ձայնը՝ ազատ քայլելու դէպի կուրի և յաղթութեան դաշտը: Ինչպէս աշխուժով քայլում էին ընկերներս այս վտանգաւոր, բայց փառաւոր ասպարիզում: Ես էլ եմ այս բանտից մահւան դիմաւորում: Ես մեռնում եմ ազատութեան համար, որի համար ես ապրում էի և պատերազմում և որին հիմայ զօհում եմ ինձ՝ տանջւելով: (Բեմի եղու բռնում են իսպանական զինւորները, զինւած գեղարդներով): Դէ հաւաքւեցէք միասին, փակեցէք ձեր շարքերը, դուք ինձ չէք վախեցնիլ: Ես սովոր եմ տէգերի առաջ՝ տէգերի դէմ կանգնել և՝ չորս կողմից զըշապատւած սպառնալի մահով, սրտոտ կեանքը կրկնակի արագութեամբ զգալ: (Թմբկանարում են). Քեզ շրջապատում է թշնամին ամեն կողմից: Նողոզում են սրերը: Բարեկամներ, քաշացէք, հետներդ ծնողներ, կանալք, երեխաներ ունիրք: (Ցուց առավագ պահապաններին). Իսկ սոցա շարժում է իշխողի լոկ խօսքը, ոչ իրանց սիրտը: Պաշտամնեցէք ձեր զոյքերը: Եւ ձեր ամենասիրելին ազատելու համար ընկէք ուրախութեամբ՝ ինչպէս ես ձեզ օրինակ եմ տալիս: (Թմբկանարութիւն: Երբ նա գնում է դէպի պահապանը և եպեի դուռը, վարագուն իջնում է. հւագը խառնում է և դրաման վերջանում է մի լաղթական երգով):





1329

2012

